



»ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ«
Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթ



ԿԱՐԱՊԵՏ ԱԲԳԱՐՅԱՆՆ

ընդդեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Գործը

Քննվում է Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի Կողմից

ԴԱՏԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

բացառապես

»ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ«

Եվրոպական իրավունքի 2004-2005թթ. դատախաղ-մրցույթի դատավորների համար

Երևան 2005

*Հուշագրի բովանդակությունը խիստ զաղտնի է.
Այն մշակվել է բացառապես «Ինտերակտիվ մարդու իրավունքներ»
Եվրոպական իրավունքի 2004-2005թթ. դատախաղ-մրցույթի դատավորների ծանոթացման
համար.*

Սույն Դատական հուշագիրը մշակվել է Երիտասարդական նվաճումներ կրթական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2004-2005 թվականների դատախաղ-մրցույթի ծրագրի շրջանակներում: 2004-2005 թվականների Մրցույթի իրականացմանը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Եվրոպական Միությունը՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում:

Դատական հուշագրում ներառված դրույթներն ու վերլուծությունները կատարվել են Երիտասարդական նվաճումներ կրթական հասարակական կազմակերպության փորձագետներ Նարինե Գասպարյանի և Արայիկ Ղազարյանի կողմից, «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2004-2005 թվականների դատախաղ-մրցույթի համար, ովքեր սույն փաստաթղթի բովանդակության միակ պատասխանատուն են: Սույն փաստաթղթում արձարժված տեսակետները մշակվել են. հիմք ընդունելով «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2004-2005 թվականների դատախաղ-մրցույթի դատական գործի փաստերը, Մրցույթի նպատակներն ու խնդիրները: Սույն դատական հուշագրում ներառված ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես կոնկրետ դեպքերի համար իրավաբանական խորհրդատվություն: Սույն Դատական հուշագիրը և դրանում ներառված ցանկացած մեկնաբանություն ունի բացառապես կրթական և տեղեկատվական նպատակ:

Երևան, 2005թ. Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....4

1. Ներածություն.....4
2. Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքը, դատավորների կազմն և Մրցույթի գնահատման կարգն ու եղանակները5
3. Գործի փաստերի համառոտ շարադրանքը.....8

ՄԱՍ II. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը14

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան.....
..14
2. Եվրոպական Դատարանը.....
16
3. Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռները.....17
4. Եվրոպական Դատարանի կողմից կիրառվող ընդհանուր սկզբունքները.....18

ՄԱՍ III. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....25

1. Արդար դատաքննության իրավունքը.....25
2. Ազատությունը.....27 Արտահայտվելու
3. Հավաքների և միավորման ազատությունը.....34
4. իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը.....42
5. Խտրականության արգելումը.....45

ՄԱՍ IV. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ48

ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ներածություն

Սույն Դատական Յուզագրի (այսուհետ՝ «Յուզագիր») նպատակն է «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2004-2005 թվականների դատախաղ-մրցույթում (այսուհետ՝ Մրցույթ) ներգրավված դատավորներին ծանոթացնել Մրցույթի դատական գործի մանրամասներին (այսուհետ՝ «Գործ» կամ «Դատական Գործ»), Գործին վերաբերող փաստերին և իրավական հիմնախնդիրներին: Յուզագրի հետ մեկտեղ Դատավորներին կտրամադրվի նաև Դատական գործն ու «Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի Դատական գործի և պաշտոնական կանոնների վերաբերյալ պարզաբանումներն ու ուղղումները»: «Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի Դատական գործի և պաշտոնական կանոնների վերաբերյալ պարզաբանումների և ուղղումների» (այսուհետ՝ «Պարզաբանումներ և ուղղումներ») նպատակն է հստակություն մտցնել Դատական գործում ներառված այն հարցերում, որոնք Մրցույթի իրականացման նախնական փուլում վեր են հանվում Մրցույթի մասնակիցների կողմից: Պարզաբանումներն ու ուղղումները չեն անդրադառնում այն հարցերին, որոնք կմեկնաբանեն կամ կհստակեցնեն դատական գործում ամրագրված այն փաստերն ու իրադարձությունները, որոնց կապակցությամբ իրավական մեկնաբանություններ և լուծումներ տալը Մրցույթի մասնակից թիմերին առաջադրված խնդիրն է: Պարզաբանումներն ու ուղղումները հանդիսանում են Դատական գործի անբաժանելի մասն ու դրանք անհրաժեշտ է դիտարկել միասին:

«Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի կազմակերպիչն է Երիտասարդական նվաճումներ կրթական հասարակական կազմակերպությունը: 2004-2005 թվականների Մրցույթի իրականացմանը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Եվրոպական Սիությունը՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում:

Սույն Յուզագրի բովանդակությունը խիստ գաղտնի է և այն նախատեսված է միայն Մրցույթի դատավորների համար: Սույն Յուզագրի փոխանցումը Մրցույթի մասնակից թիմերին արգելվում է: Այս պահանջը խախտող թիմը կամ թիմի անդամը կենթարկվի Մրցույթի Պաշտոնական կանոններով նախատեսված տույժի:

Մրցույթը բաղկացած է երկու մակարդակից՝ Գրավոր մրցափուլ և Բանավոր մրցափուլ: Բոլոր մրցափուլերը կընթանան Մրցույթի Պաշտոնական կանոնների և Պաշտոնական Ժամանակացույցի համաձայն: Գրավոր մրցափուլը բաղկացած է Գրավոր փաստարկների, իսկ Բանավոր մրցափուլը՝ Բանավոր փաստարկների ներկայացումից և գնահատումից: Մրցույթի ժամանակ ապահովվում է մասնակից թիմերի ինքնության գաղտնիությունը: Մրցույթի բոլոր մակարդակներում կիրառվող միակ պաշտոնական լեզուն հայերենն է:

Դատական գործը մտացածին է և վերաբերում է Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքների, այդ թվում արդար դատաքնության իրավունքի, արտահայտվելու ազատության, հավաքների և միավորման ազատության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի և խտրականության արգելման ենթադրյալ խախտումներին: Դատական գործով պատասխանող մասնակից պետությունը **Հայաստանի Հանրապետությունն է և Գործի նկատմամբ կիրառվում է մինչև 2004 թվականի օգոստոսի մեկը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունը:** Դատական գործը լսվելու է Սարդու իրավունքների Եվրոպական Դատարանում՝ (այսուհետ՝ «Դատարան» կամ «Եվրոպական դատարան») Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա» կամ «Կոնվենցիա») և Դատարանի Կանոնակարգի համաձայն: Դատական գործում ներառված իրավական հիմնախնդիրները ներկայացված են այնպես, որ Մրցույթի մասնակիցներին հնարավորություն տրվի անհրաժեշտ փաստարկներ ներկայացնել մի կողմից Դիմումատուի

մյուս կողմից Պատասխանող մասնակից պետության դիրքորոշումն հիմնավորող իրավական համապատասխան դրույթների վերաբերյալ՝ դրանք մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի դրույթների և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների համապատասխան:

2. Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքը, դատավորների կազմն և Մրցույթի գնահատման կարգն ու եղանակները

Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքի, դատավորների կազմի վերաբերյալ հարցերն ու Մրցույթի գնահատման կարգն ու եղանակները սահմանված են Մրցույթի Պաշտոնական կանոններով: Սույն Հուշագիրը կանդիդատնա վերը նշված հարցերի համառոտ նկարագրին՝ դատավորներին Մրցույթի իրականացման ընդհանուր կարգին և կանոններին ծանոթացնելու նպատակով:

Դատախաղը հնարավորինս մոտեցված կլինի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրականացվող իրական դատավարության կանոններին և սցենարին: Դատավորները կկրեն համապատասխան հանդերձանք, կպահպանվի դատարանում ընդունված վարվելակարգը: Ի լրացումն վերը նշվածին, Մրցույթի իրականացման ընթացքում դատավորներն ու մասնակից թիմերը պետք է նաև առաջնորդվեն Մրցույթի Պաշտոնական կանոններով, սույն Հուշագրով, Մրցույթի Պաշտոնական ժամանակացույցով:

Մրցույթի ցանկացած փուլում և մակարդակում բացառվում է որևէ դատավորի մասնակցությունը Մրցույթին, ով կապ ունի այն ԲՈՒՀ-ի հետ, որը թիմ է ներկայացրել 2004-2005 թվականների Մրցույթում մասնակցելու համար, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է վերջինիս հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է Պաշտոնական կանոններով և թույլատրվում է Նախագահի կողմից: Դատավորի՝ տվյալ ԲՈՒՀ-ի շրջանավարտը լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս, որպես դատավորի մասնակցությունը Մրցույթին խախտում որակելու համար:

Դատավորները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն տվյալ թիմի բանավոր ելույթը գնահատելուց, եթե նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ կամ կապ ունեն տվյալ ԲՈՒՀ-ի կամ տվյալ թիմի որևէ անդամի հետ և եթե այդ կապը կարող է ազդել նրանց անկողմնակալության կամ անաչառության վրա կամ ավելորդ անճշտությունների տեղիք տալ: Դատավորները չպետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց՝ տվյալ թիմի անդամին պարզապես ծանոթ լինելու կամ տվյալ ԲՈՒՀ-ի հետ որոշակի հարաբերություններ ունենալու դեպքում:

Մրցույթի Գրավոր մրցափուլը կանցկացվի երկու, իսկ Բանավոր մրցափուլը՝ երեք դատավորների կազմով, բացառությամբ եզրափակիչ փուլի, որը կանցկացվի հինգ դատավորների կազմով: Բացառիկ դեպքերում Նախագահը կարող է թույլ տալ երկու դատավորի կազմով Բանավոր մրցափուլի, բացառությամբ եզրափակիչ փուլի, իրականացումը: Մրցույթի ոչ մի փուլում որևէ բուհի կամ ֆակուլտետի խորհրդատու, մարզիչ իրավունք չունի հանդես գալ որպես դատավոր: Հնարավորինս պետք է բացառվի թիմի երկակի քննումը միևնույն դատավորի կողմից: Եթե որևէ դատավոր ստիպված է նույն թիմի ելույթը երկու անգամ գնահատել, ապա ԵՆ-ն պետք է ապահովի, որ այդ թիմը հանդես գա տարբեր կողմերից (Դիմումատու/ Պատասխանող մասնակից պետություն):

Եզրափակիչ կամ կիսաեզրափակիչ մրցափուլերում Նախագահը կարող է դատավորներին թույլ տալ գնահատել մեկ կամ մեկից ավելի թիմերի, որոնց նրանք նախկինում դատել են՝ ելնելով այն հանգամանքից, որ դա կնպաստի Մրցույթի շահերին:

Ինչպես Գրավոր այնպես էլ Բանավոր մրցափուլերում, դատավորները պետք է միմյանցից անկախ ստուգեն (յուրաքանչյուր դատավորի կտրամադրվի անհատական գնահատման թերթիկ, որտեղ դատավորը կնշի թիմի անդամների ելույթների գնահատականները՝ հիմք ընդունելով սեփական համոզմունքներն ու անձնական մասնագիտական գնահատականը) թիմերի Գրավոր փաստարկները և գնահատեն բանավոր

Ելույթները: Դատավորները մասնակիցների ելույթները գնահատելիս պետք է հիմք ընդունեն հետևյալը (ստորև ներկայացված պահանջների ու առաջարկությունների մի մասը վերաբերում են միայն բանավոր մրցափուլին).

- Դատավորները մասնակից թիմերի բանավոր ելույթները գնահատելիս պետք է գնահատեն մասնակից թիմերի այն բանախոսների անհատական ելույթները, որոնք տվյալ մրցափուլում հանդես են գալիս ելույթով և ներկայացնում են համապատասխան փաստարկներ: Դատավորները իրավասու չեն ընդհանուր մոտեցում ցուցաբերել թիմերին՝ առանց հաշվի առնելու թիմերի ներկայացուցիչների կողմից ներկայացված անհատական փաստարկների որակն ու իրավական հիմնավորվածությունը:
- Դատավորները՝ մասնակից թիմերի փաստարկները և թիմերի ներկայացուցիչների ելույթները գնահատելիս պետք է իրավական գնահատական տան Մրցույթի Դատական գործի լուծման կապակցությամբ թիմի դիրքորոշմանը:
- Դատավորները թիմերի ներկայացրած գրավոր փաստարկներն ու թիմերի ելույթները գնահատելիս պետք է հաշվի առնեն թիմերի կողմից ներկայացված փաստարկների վավերությունը, հիմնավորվածությունը, հետևողականությունը և Եվրոպական կոնվենցիայի նորմերին և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներին համապատասխան մեկնաբանումը: Դատավորները գնահատելիս պետք է հիմնվեն Մրցույթի Դատական գործի վերաբերյալ Կոնվենցիայով սահմանված նորմերի և սկզբունքների համապատասխան լուծումներ տալու՝ թիմերի դրսևորած հմտությունների և կարողությունների վրա: Դատավորները նաև պետք է նկատի ունենան, որ թիմերն իրավասու են շեղվել իրենց գրավոր փաստարկներում ներկայացված դիրքորոշումներից, վերանայել իրենց փաստարկների բովանդակությունը, ձևն ու կառուցվածքը, քանի որ թիմերին ժամանակ է տրվում գրավոր փաստարկները ներկայացնելուց հետո իրականացնել հավելյալ հետազոտություններ և ուսումնասիրություններ:
- Համաձայն Մրցույթի դատական գործի և Պաշտոնական կանոնների՝ Մրցույթի մասնակիցները պետք է անդրադառնան բացառապես Մրցույթի Դատական գործում ներկայացված փաստերին և VI գլխում սահմանված հարցերին: Դատավորները՝ թիմերին հարցադրումներ կատարելիս և նրանց բանավոր ելույթը գնահատելիս պետք է հիմք ընդունեն Մրցույթի Դատական գործի VI գլխում սահմանված հարցերն ու Դատական գործում արծարծված փաստերն ու հանգամանքները: Ինչպես Մրցույթի մասնակիցները, այնպես էլ դատավորները իրավասու չեն նեղացնելու կամ լայնացնելու նշված հարցերի շրջանակը: Թիմի մասնակցի կողմից նշված պահանջը խախտելու, ինչպես նաև Դատական գործի փաստերն աղավաղելու դեպքում դատավորը իրավասու է միջամտել նրա ելույթին և պահանջել անդրադառնալու բացառապես Մրցույթի Դատական գործի VI գլխում սահմանված հարցերին և գործի փաստերին: Թիմի մասնակիցները՝ դատավորի կողմից Մրցույթի Դատական գործի VI գլխում սահմանված հարցերից և Դատական գործի փաստերից տարբերվող հարցադրումներ անելու դեպքում իրավասու են չանդրադառնալ դրանց՝ այդ մասին դատավորին բանավոր ձևով հայտնելու պայմանով:
- Բանավոր մրցափուլի ավարտից հետո Դատավորները իրավասու չեն թիմերին տեղեկացնելու իրենց անհատական կարծիքի կամ թիմի հավաքած ընդհանուր միավորների մասին, ինչպես նաև իրավասու չեն տարածելու այնպիսի տեղեկատվություն, որը կմատնանշի նրանց անհատական դիրքորոշումը և կպարզաբանի սույն Հուշագրի բովանդակությունը: Բացառություն է կազմում Մրցույթի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը, երբ մրցափուլերի վերջում դատավորները հրապարակավ մեկնաբանություններ և առաջարկություններ պետք է անեն թիմերին և կարծիքներ հայտնեն թիմերի բանավոր ելույթների վերաբերյալ, սակայն իրավունք չունեն հրապարակավ հայտնել թիմերի արդյունքները: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում դատավորները չպետք է տեղեկացվեն նախորդ փուլերում թիմերի հավաքած հանրագումարային միավորների մասին: Նրանց կողմից

թիմերի գնահատումը պետք է անկախ լինի նախնական փուլերում թիմերի դրսևորած արդյունքներից: Այս առումով եզրափակիչ մրցափուլը տարբերվում է նախորդ մրցափուլներից: Եզրափակիչ մրցափուլում հանդես եկող թիմերի հանրագումարային միավորների թերթիկները կտրամադրվեն դատավորներին՝ իրենց հայեցողությամբ դրանք օգտագործելու համար: Տվյալ փուլի հաղթողի վերաբերյալ որոշումը կայացվում է գնահատող դատավորների ձայների մեծամասնությամբ: Փուլային միավորների թերթիկները լրացնելուց հետո կանցկացվի թիմերի բանավոր ելույթների հրապարակավ գնահատում: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում առկա է ևս մեկ տարբերություն եզրափակիչ փուլից: Տարբերությունը կայանում է նրանում, որ դատավորները Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում գնահատում են յուրաքանչյուր բանախոսի ելույթը առանձին առանձին վերցրած, իսկ եզրափակիչ մրցափուլում դատավորները հաղթող թիմի վերաբերյալ որոշում են կայացնում ձայների մեծամասնությամբ:

- Դատավորները թիմերի բանավոր ելույթները գնահատելիս պետք է հիմք ընդունեն Պաշտոնական կանոններով սահմանված ժամանակն ու մրցափուլի անցկացման կարգը: Համաձայն այդ ընթացակարգի թիմերը իրենց ելույթները ներկայացնում են հետևյալ հերթականությամբ.

Բանավոր փաստարկների ներկայացման կարգն ու հերթականությունը

Թույլատրելի առավելագույն ժամանակը

1. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին բանախոս	20 րոպե
2. Դիմումատուին ներկայացնող թիմի երկրորդ բանախոս	20 րոպե
3. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին բանախոս	10 րոպե
4. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի երկրորդ բանախոս	10 րոպե
5. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ բանախոս (պնդումների ներկայացում)	10 րոպե
6. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ բանախոս (առարկությունների ներկայացում)	10 րոպե

Դատավորները կարող են իրենց հայեցողությամբ տաս (10) րոպեով երկարացնել թիմի ընդհանուր բանավոր ելույթի համար հատկացված հիսուն (50) րոպե ժամանակը: Սակայն պետք է հաշվի առնել, որ Պաշտոնական կանոնները բացառում են բանախոսի՝ 30 րոպեից ավել ելույթ ունենալու իրավունքը:

- Հաշվի առնելով Մրցույթի սկզբունքները և Մրցույթի մասնակից թիմերի շահերը, այն է՝ հավասար ժամանակի առկայությունը յուրաքանչյուր թիմի կողմից իրենց բանավոր փաստարկները ներկայացնելու համար, դատավորները պետք է Պաշտոնական կանոնների համաձայն բոլոր թիմերին հավասար ժամանակ ընձեռեն իրենց փաստարկները ներկայացնելու համար:
- Մրցույթի կանոնների համաձայն թիմերին հատկացված է սահմանափակ ժամանակ իրենց բանավոր փաստարկները ներկայացնելու համար և այդ իսկ նկատառումով էլ դատավորներին խորհուրդ է տրվում խուսափել երկար հարցադրումներից այն դեպքում, երբ մասնակցին հատկացված ժամանակն արդեն մոտ է սպառվելուն:

- Թիմերի անդամների բանավոր ելույթները գնահատելիս դատավորներն իրավունք չունեն տույժեր կիրառել՝ նվազեցնելով բանախոսների միավորները: Տույժերը միավորներից կարող է հանել միայն ԵՆ-ն՝ մրցափուլի արդյունքների ամփոփման ժամանակ:
- Բանավոր մրցափուլի ժամանակ դատավորների կողմից »այո« կամ »ոչ« պատասխան ակնկալող հարցադրումները խրախուսվում են: Նման հարցերի միջոցով դատավորները կարող են որոշել մասնակից թիմերի կողմից կատարված հետազոտության խորությունն ու հստակությունը կոնկրետ հարցի լուծման կապակցությամբ:
- Եվրոպական կոնվենցիան, Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռները և Հայաստանի Հանրապետության կողմից կատարված միջամտության համապատասխանությունը Կոնվենցիայի նորմերին այն հիմնական հարցերն են, որոնց պետք է անդրադառնան մասնակից թիմերը: Այս առումով խրախուսվում է, որպեսզի դատավորը ուսանողներին բանավոր մրցափուլի ժամանակ հնարավորություն չտա դեկլարատիվ բնույթի հայտարարություններ անել որոշակի նորմի խախտման կապակցությամբ, այլ թիմերից ակնկալել վիճարկվող ցանկացած նորմի խախտում ուղղակիորեն համադրել Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներում մշակված չափանիշների և ստանդարտների հետ:
- Չի խրախուսվում թիմերի անդամներին զուտ տեսական բնույթի հարցեր տալ ինչպես Եվրոպական կոնվենցիայի, այնպես էլ ազգային օրենսդրության վերաբերյալ: Թիմերի անդամների տեսական գիտելիքների իմացությունը խրախուսվում է ստուգել Կոնվենցիայի կամ ՀՀ օրենսդրության նորմերի միջև համեմատական վերլուծություն ենթադրող հարցադրումների միջոցով: Մրցույթը պետք է հնարավորինս նմանվի իրական դատարանի դահլիճի, որպեսզի առավելագույնս ապահովի Մրցույթի մասնակիցների փորձի ձեռքբերումը:
- Դատավորները պետք է զերծ մնան դատարանում Մրցույթի մասնակից թիմերի հետ բանավեճից կամ երկարատև քննարկումներից: Մրցույթի մասնակիցների և դատավորների միջև շփումները պետք է որքան հնարավոր է սահմանափակվեն հարց ու պատասխանի շրջանակներում:
- Չի խրախուսվում դատավորի կողմից հարցերի կենտրոնացումը թիմի մեկ մասնակցի կամ մեկ թիմի վրա: Մրցույթի հիմնական նպատակներից մեկն է թիմերին հավասար հնարավորություններ ընձեռել իրենց կարողություններն ու հետազոտությունների արդյունքները ներկայացնել դատարանին: Մրցույթի մասնակիցները, որպես կանոն, հստակ բաժանում են կատարում այն հարցերի միջև, որոնք իրենք պետք է ըստ հերթականությամբ ներկայացնեն դատարանին: Դատավորներին խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում թիմի անդամին ուղղվող հարցադրումները սահմանափակել բացառությամբ կոնկրետ բանախոսի կողմից ներկայացվող թեմաների շրջանակով:
- Դատավորներին խորհուրդ է տրվում հարցերը պարզ ձևակերպել և խուսափել մեկնաբանություններ անել թիմի անդամի կողմից ներկայացված պատասխանի կապակցությամբ:
- Դատավորներին խորհուրդ է տրվում մասնակից թիմերին խնդրել բացատրել իր և հակառակորդի տեսակետների միջև առկա ակնհայտ հակասությունները կամ տարբերությունները՝ Եվրոպական կոնվենցիայի նորմերի և Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների համապատասխան:
- Մասնակից թիմերի կողմից թույլ իրավական փաստարկներ ներկայացնելը դատավորը չպետք է օգտագործի Մրցույթի մասնակցի դեմ: Մյուս կողմից, եթե մասնակիցը սխալ է ձևակերպում օրենքը կամ սխալ է ներկայացնում որոշումը, կամ տեղյակ չէ կիրառելի նորմին, դատավորը պետք է դա մասնակցի ուշադրությանը ներկայացնի հարցերի միջոցով:

3. Գործի փաստերի համառոտ շարադրանքը

Մրցույթի գործը Եվրոպական դատարանի կողմից բազմիցս քննված մարդու իրավունքների խախտումների առարկա հանդիսացող հիմնահարցերի շարքից է (Մրցույթի գործը, Պարզաբանումների և ուղղումների հետ մեկտեղ կցվում է սույն Հուշագրին որպես Հավելված Ա և հանդիսանում է Հուշագրի անբաժանելի մասը): Մրցույթի Դատական գործի փաստերն ու իրադարձությունները մտացածին են և իրադարձությունները տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում: Մրցույթի դատական գործը ընտրվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ առկա արդիական խնդիրները: Ենթադրաբար, Դիմումատու Կարապետ Աբգարյանը, ում իրավունքները խախտվել են, դիմում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան՝ հայցելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն: Դատական գործի նկատմամբ գործում է մինչև 2004 թվականի օգոստոսի 1-ը գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Դատական գործը իրականացվելու է Եվրոպական դատարանի առջև՝ Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի կանոնակարգի համաձայն: Դատախաղ-մրցույթի մասնակից թիմերը պետք է առաջնորդվեն Եվրոպական կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կանոնակարգով, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված համապատասխան Հանձնարարականներով և մի շարք այլ փաստաթղթերով:

Գործով Դիմումատու Կարապետ Աբգարյանը (այսուհետ՝ «Դիմումատու») 2004 թվականի հոկտեմբերի 20-ին Եվրոպական դատարան գանգատ (N 44202/04) ներկայացրեց ընդդեմ Հայաստանի Հանրապետության: 2004 թվականի հոկտեմբերի 30-ին Եվրոպական դատարանի նախագահը գանգատը փոխանցեց Դատարանի Չորրորդ Բաժանմունքին՝ Եվրոպական դատարանի Կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետի համաձայն: Այդ Բաժանմունքում, Եվրոպական դատարանի Կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն ձևավորվեց Պալատ՝ գործի քննությունն ապահովելու համար:

Եվրոպական Դատարանը 2004 թվականի նոյեմբերի 20-ին որոշում կայացրեց պարոն Աբգարյանի կողմից ներկայացված գանգատն ընդունելի հայտարարելու վերաբերյալ և նախաձեռնեց գործի ըստ էության քննությունը կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Պալատը, կողմերի պահանջով, որոշեց գործն ըստ էության քննելու նպատակով 2004 թվականի դեկտեմբերի 15-ին լուսններ հրավիրել՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կանոնակարգի 59-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն:

Դիմումատուն հասարակական գործունեությամբ էր զբաղվում և հանդիսանում էր «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության նախագահը: Մինչև 2003 թվականը Դիմումատուն զբաղեցրել է բարձր պետական պաշտոն, եղել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի Բնապահպանական պետական տեսչության պետ, սակայն 2003 թվականի հուլիսի սկզբին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իշխանափոխության հետևանքով Դիմումատուն կորցնում է իր աշխատանքը և պետական համապատասխան մարմիններում աշխատանք չգտնելուց հետո սկսում է զբաղվել հասարակական գործունեությամբ:

«Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպությունը, իր հիմնադրման պահից շատ ակտիվ գործունեություն է իրականացրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում: Կազմակերպությունը առավել ակտիվ պայքար սկսեց մղել Երևան քաղաքում կատարվող ապօրինի հողահատկացումների և դրանց արդյունքում ծառահատումների խնդիրների վրա: Մամուլում հրապարակումներ հայտնվեցին, որ Երևանի քաղաքապետարանը հողահատկացումների մեծ ծրագիր էր նախապատրաստել մայրաքաղաքի «Ծիրանի հովիտներ» ավանդական անունը կրող տարածքներում և որ այս ծրագրով իշխանությունները նպատակ էին հետապնդում լուծել բազմաթիվ քաղաքացիների, հատկապես փախստականների բնակարանային հարցերը: Հրապարակումներում նաև տեղ

էին գտել մի շարք հողվածներ հետաքննող լրագրողների կողմից, որոնցում նշվում էր մի կազմակերպության մասին, որին քաղաքապետարանը պատրաստվում էր հանձնարարել հատկացված տարածքի ծառահատումները և շինարարական աշխատանքները: Ըստ հետաքննող լրագրողների, տվյալ կազմակերպությունը հովանավորվում էր երևանի քաղաքապետարանի կողմից, իսկ նրանց ղեկավարներից մի քանիսը Երևանի քաղաքապետի և մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների մերձավոր ազգականներն էին. ուստի հողվածներում արտահայտվում էին նաև հնարավոր խոշոր չափերի հասնող կոռուպցիայի մասին մտքեր: Ի պատասխան մամուլում տեղ գտած հրապարակումների, Երևանի քաղաքապետը մամուլ ասուլիս հրավիրեց որի ընթացքում հայտարարեց, որ հողահատկացումների նման ծրագիր իսկապես գոյություն ունի և որ հատկացված տարածքներում ծրագրվում է կառուցել բազմահարկ շենքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև փախստականների բնակարանային կարիքները հոգալու համար: Եւ նաև նշեց, որ շինարարական աշխատանքները կատարելու նպատակով օրենքով սահմանված կարգով հայտարարվելու է մրցույթ՝ լավագույն շինարարական կազմակերպությունն ընտրելու համար: Քաղաքապետը հավաստիացրեց, որ մրցույթը լինելու է թափանցիկ, սակայն միաժամանակ մտահոգություն հայտնեց մամուլի մի շարք հրապարակումների առնչությամբ, բացառելով այն հանգամանքը, ըստ որի նախորդ պայմանավորվածություն է ձեռք բերվել, թե որ կազմակերպությունն է կատարելու շինարարական աշխատանքները:

Ծառահատումների և կոռուպցիայի հարցի շուրջ հանրության ուշադրությունը հրավիրելու և այս հիմնախնդրի շուրջ հասարակական բանավեճ խթանելու նպատակով «Պահպանենք բնությունը» կազմակերպությունը որոշեց 2004 թվականի հուլիսի 1-ին կազմակերպել հանրահավաք և այնուհետև երթ դեպի քաղաքապետարան: Հանրահավաքի և երթի մասին կազմակերպության նախագահը պատշաճ կերպով իրազեկեց Երևանի քաղաքապետին՝ նշելով անցկացվելիք հանրահավաքի տեղի, օրվա և երթուղու մասին: Սակայն Երևանի քաղաքապետը նպատակահարմար չհամարեց երթի անցկացումը, իսկ հանրահավաքն առաջարկեց անցկացնել մեկ այլ օր և մեկ այլ վայրում: Քաղաքապետն իր այդ որոշումը հիմնավորեց այն հանգամանքով, որ այդ օրը մայրաքաղաքի կենտրոնական մասում ընդդիմության կողմից հրավիրվելու էր բազմամարդ հանրահավաք և որ *«...երթերը խաթարում են Երևան քաղաքի բնականոն կյանքը, հասարակական տրանսպորտի աշխատանքը...»*: Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձիք որոշեցին այնուամենայնիվ հրավիրել հանրահավաք և այնուհետև կազմակերպել երթ՝ նախորդ որոշված օրը և երթուղով: Հանրահավաքի ընթացքում ելույթներով հանդես եկան քաղաքական գործիչներ, մտավորականներ, հասարակական կազմակերպությունների ակտիվ անդամներ և ուսանողական խորհուրդների ներկայացուցիչներ, որոնց մեծ մասի ելույթները հիմնականում պետական իշխանություններին, մասնավորապես Երևանի քաղաքապետարանի պաշտոնյաներին ուղղված քննադատություն էին պարունակում: Հանրահավաքում ելույթ ունեցավ նաև Դիմումատուին, որն ի թիվս այլ մտքերի, արտահայտեց նաև հետևյալ միտքը *«... Մեզ պետք են ժողովրդի մասին մտածող պաշտոնյաներ և ոչ թե կոչեցյալ չինովնիկներ: Ժողովուրդը պահանջում է քաղաքապետարանից կանգնեցնել իր կոռումպացված ծրագրի իրագործումը և այդ դեպքում գուցե կկարողանանք ասել, որ նրանք ծառայում են հանրությանը, և ոչ թե կլանին...»*:

Նախատեսված երթը նույնպես տեղի ունեցավ, որն անցավ առանց որևէ միջադեպերի:

2004 թվականի հուլիսի 3-ին Դիմումատուին կանչեցին Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին, որտեղ նրան հայտնեցին, որ հրավիրվել է հուլիսի 1-ին կայացած հանրահավաքի և երթի վերաբերյալ մի շարք պարզաբանումներ կատարելու նպատակով: Մեկ ժամ անց Դիմումատուին հայտնեցին, որ կայացվել է որոշում նրան վարչական կալանքի ենթարկելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180' հոդվածի 1-ին մասի և 182 հոդվածի հատկանիշներով: Նույն օրը Երևանի

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը որոշում կայացրեց Դիմումատուին ենթարկել վարչական տուգանքի սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսուն տոկոսի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 180' և 182 հոդվածների:

2004 թվականի հուլիսի 7-ին Դիմումատուն Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից ստացավ ծանուցագիր դատախազություն ներկայանալու պահանջով: Դատախազությունում նրան հայտնեցին, որ Գլխավոր դատախազությունը ձևավորել է քննչական խումբ, որը նյութեր է նախապատրաստում 2004 թվականի հուլիսի 1-ին տեղի ունեցած հանրահավաքի և երթի ընթացքում ելույթ ունեցողների կողմից հնչած մի շարք հայտարարությունների վերաբերյալ և որ Դիմումատուն հանդես է գալու որպես գործով վկա: Նույն օրը երեկոյան ժամը 18:00-ին, սակայն, Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից որոշում կայացվեց նրան ձերբակալելու մասին:

2004 թվականի հուլիսի 7-ի երեկոյան 21:00-ի լուրերի թողարկման ժամանակ հանրային հեռուստատեսությունը տարածեց Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից տրամադրված հայտարարությունը, որում նշվում էր հետևյալը.

»Պահպանենք բնությունը« հասարակական կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձիք, անդամները և կազմակերպության համախոհները 2004թ. հուլիսի 1-ին կազմակերպել են չարտոնված հանրահավաք և այնուհետև երթ, որոնք ուղեկցվել են քրեորեն հետապնդելի մի շարք արարքներով և իրավախախտումներով, մասնավորապես՝ հասարակական կարգի պահպանությունն իրականացնող իրավապահների օրինական պահանջներին չենթարկվելով, հասարակական կարգի խախտումով և իշխանության ներկայացուցիչներին վիրավորող և զրպարտող հրապարակային հայտարարություններով ...«:

2004 թվականի հուլիսի 10-ին Դիմումատուին Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից քրեական մեղադրանք առաջադրվեց իշխանության ներկայացուցչին հրապարակավ վիրավորելու և զրպարտելու հիմքերով. մասնավորապես, Երևանի քաղաքապետի հասցեին հնչած »կոչեցյալ չինովնիկ« բառերի, ինչպես նաև »կոռուպցիան և կլանային տնտեսությունը հովանավորելու« ենթատեքստով Երևանի քաղաքապետի հասցեին արված հայտարարությունների համար:

2004 թվականի հուլիսի 15-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վճռով Դիմումատուն պատժվեց մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 318,(2) 135 (3) և 136 (2) հոդվածների:

2004 թվականի հուլիսի 20-ին Դիմումատուն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի վճիռը ամբողջությամբ բողոքարկեց Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Դիմումատուն վերաքննիչ բողոքում պնդում էր նաև, որ խախտվել է նաև իր անմեղության կանխավարկածը՝ Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից 2004 թվականի հուլիսի 7-ին հրապարակայնորեն արված հայտարարության արդյունքում, որով Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարության մեջ օգտագործված »քրեորեն հետապնդելի արարք« և »իրավախախտում« արտահայտությունները կապվել են իր անձի հետ:

Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը գործի քննության արդյունքում կայացրեց որոշում՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի վճիռը փոփոխել և մեկ տարվա ազատազրկման ժամկետը փոխարինել վեց ամիս ազատազրկման ժամկետով:

Դիմումատուին սակայն 2004 թվականի հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկեց Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի Քրեական և զինվորական գործերով պալատ՝ դատավարության մասնակիցների դատավարական իրավունքի խախտման հիմքով: Գործը վճռաբեկության կարգով քննելիս, Վճռաբեկ դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը թողեց անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը առանց բավարարման:

2004 թվականի սեպտեմբերին Դիմումատուին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվեց նշանակված պատժի մեկ երրորդը կրելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն:

Դիմումատուին և Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական դատարանի քննությանն են հանձնում ներքոշարադրյալ հարցերը: Գործով մասնակից թիմերն ու դատավորները պետք է առաջնորդվեն բացառապես նշված հարցերով և չեն կարող նեղացնել կամ լայնացնել Եվրոպական դատարանի կողմից քննվող հարցերի շրջանակը:

Դիմումատուին խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ.

- ա) Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները (Դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը) խախտել են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իր արտահայտվելու ազատության իրավունքը՝ ներառյալ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու և տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:
- բ) Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները, մասնավորապես Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու և Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումները խախտել են Եվրոպական կոնվենցիայով իրեն երաշխավորված հավաքների և միավորման ազատության իրավունքը:
- գ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված խտրականության արգելման իրավունքը՝ մասնավորապես իրեն քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված է եղել իր համոզմունքներով և հասարակական ակտիվ գործունեությամբ:
- դ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքով հռչակված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարության ժամանակ՝ Դիմումատուի անձը կապելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարության մեջ օգտագործված «քրեորեն հետապնդելի արարք» և «իրավախախտում» արտահայտությունների հետ:
- ե) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչը հնարավորություն կտար իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, վիճարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ, 11-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորվող արտահայտվելու ազատության, հավաքների և միավորումների ազատության և արդար դատաքննության իրավունքները:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ

- ա) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքը, քանի որ Դիմումատուի՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատության իրավունքի սահմանափակումը պետական մարմինների կողմից կատարվել է օրենքով նախատեսված կարգով, հետապնդել է օրինական (իրավաչափ) նպատակ, այն է՝ Երևանի քաղաքապետի հեղինակության և իրավունքների պաշտպանությունը, և նման սահմանափակումն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:
- բ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի հավաքների և միավորման ազատությունը, քանի որ պետական մարմինների կողմից այս իրավունքների սահմանափակումը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, և ընտրվել է իրավունքը սահմանափակելու համաչափ միջոց իրավաչափ նպատակին հասնելու համար:
- գ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված խտրականության բացառման իրավունքը, քանի որ Դիմումատուն քրեական պատասխանատվության է ենթարկվել ոչ թե իր հանոգմունքների կամ հասարակական ակտիվ գործունեության, այլ քրեորեն հետապնդելի արարք կատարելու համար:
- դ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արդար դատաքննության իրավունքը, քանի որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարությունում հնչած «քրեորեն հետապնդելի արարք» և «իրավախախտում» արտահայտությունները նկարագրել են կոնկրետ փաստը և չեն հասցեագրվել Դիմումատուին:
- ե) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ Դիմումատուն ունեցել է ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք և այն կիրառել է առանց պետական մարմինների միջամտության: Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Դիմումատուի այդ իրավունքը, և ներպետական իրավական պաշտպանության միջոցները համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին:

ՄԱՍ II. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան

Եվրոպական Կոնվենցիան ընդունվել է Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ «ԵԽ») կողմից, որը հիմնադրվել է Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, և որի նպատակն է Եվրոպայի մշակութային, սոցիալական և քաղաքական կյանքի ընդհանուր սկզբունքների և գաղափարների զարգացումը: ԵԽ -ի կենտրոնակայանը գտնվում է Ստրասբուրգ քաղաքում: ԵԽ-ի կազմավորման և հետագա գործունեության համար խթան հանդիսացան Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում մարդու իրավունքների բազմաթիվ խախտումները: Ի սկզբանե ԵԽ-ի անդամ երկրները տասն էին: ԵԽ -ի հիմնական որոշում կայացնող մարմինները՝ Նախարարների կոմիտեն է և Խորհրդարանական վեհաժողովը:

Եվրոպական կոնվենցիան ԵԽ -ի կողմից ընդունել է 1950թ. նոյեմբերի 4-ին և ուժի մեջ է մտել 1953թ. սեպտեմբերի 3-ին՝ ութ պետությունների կողմից վավերացվելուց հետո: Այն նպատակաուղղված է եղել պաշտպանելու ավելի շատ քաղաքացիական և քաղաքական, քան տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Կոնվենցիան հնարավորություն է տալիս անհատներին գանգատ ներկայացնել Եվրոպական դատարան: Դատարանի որոշումներն ունեն պարտադիր իրավաբանական ուժ ԵԽ-ի անդամ պետությունների համար:

1990 թվականին Կոնվենցիայի անդամ երկրների թիվը զգալիորեն ընդլայնվեց երբ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ վավերացրեցին կոնվենցիան. Բուլղարիա, Չեխիա և Սլովակիա (1992), Լեհաստան (1993), Ռումինիա և Սլովենիա (1994), Լիտվա (1995), Ալբանիա, Անդորրա և Էստոնիա (1996), Ուկրաինա, Խորվաթիա, Մոլդովա, Նախկին Հարավսլավական Մակեդոնական Հանրապետություն և Լատվիա (1997), Ռուսաստան (1998) և Վրաստան (1999), Հայաստան (2002թ. ապրիլի 26): ԵԽ անդամ երկրների թիվը ներկայումս 46 է, որոնք բոլորը ստորագրել են Կոնվենցիան:

Եվրոպական կոնվենցիայով ամրագրված հիմնարար իրավունքները ներառում են.

- Չոդված 1 Մարդու իրավունքները հարգելու պարտականություն
- Չոդված 2 Կյանքի իրավունք
- Չոդված 3 Խոշտանգումների արգելում
- Չոդված 4 Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում
- Չոդված 5 Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք
- Չոդված 6 Արդար դատաքննության իրավունք
- Չոդված 7 Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա
- Չոդված 8 Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
- Չոդված 9 Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք
- Չոդված 10 Ազատ արտահայտվելու իրավունք
- Չոդված 11 Հավաքների և միավորման ազատության իրավունք
- Չոդված 12 Ամուսնության իրավունք
- Չոդված 13 Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք
- Չոդված 14 Խտրականության արգելում
- Չոդված 15 Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում
- Չոդված 16 Օտարերկրյա քաղաքացիների քաղաքական գործունեության սահմանափակում
- Չոդված 17 Իրավունքների չարաշահման արգելում
- Չոդված 18 Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունները

Կոնվենցիայի ընդունումից հետո դրանով երաշխավորված հիմնարար իրավունքներն ու ազատությունները լրացվել են հետևյալ լրացուցիչ արձանագրություններով տրված իրավունքներով և ազատություններով՝

Առաջին Արձանագրություն: Ընդունվել է 1952 թվականին և ուժի մեջ մտել 1954 թվականին: Նրա մեջ ամրագրված են հետևյալ իրավունքները 1) սեփականության պաշտպանություն 2) կրթության իրավունք, 3) ազատ ընտրությունների իրավունք:

Չորրորդ Արձանագրություն: Ընդունվել է 1963 թվականին և ուժի մեջ մտել 1968 թվականին: Արձանագրությունով պաշտպանվող իրավունքներն են՝ 1) պարտքի համար ազատագրկման արգելումը 2) տեղաշարժվելու ազատությունը 3) քաղաքացիների արտաքսման արգելումը 4) օտարերկրացիների խմբակային արտաքսման արգելումը:

Վեցերորդ Արձանագրություն: Ընդունվել է 1983 թվականին և ուժի մեջ մտել 1985 թվականին: Վեցերորդ արձանագրությունը նախատեսում է մահապատժի վերացում. բացառությամբ միայն պատերազմի ժամանակ կամ պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Յոթերորդ Արձանագրություն: Ընդունվել է 1984 թվականին և ուժի մեջ մտել 1988 թվականին: Արձանագրությունը պաշտպանում է հետևյալ իրավունքները՝ 1) օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքներ 2) քրեական գործերով զանգատարկման իրավունք 3) փոխհատուցում անձին սխալմամբ դատապարտելու դեպքում 4) կրկին չդատվելու կամ չպատժվելու իրավունք 5) անուսինների իրավունքների հավասարություն:

Տասներկուերորդ Արձանագրությունը ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2000 թվականի հունիսի 26-ին: Այս արձանագրությունը ապահովելու է խտրականության դեմ ազատորեն ընդդիմանալու իրավունքը: Արձանագրությունը բաց է ստորագրությունների համար 2000թ. նոյեմբերի 4-ից և ուժի մեջ կմտնի, երբ տասը պետություն ստորագրեն այն:

Տասներեքերորդ Արձանագրությունը ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2002 թվականի փետրվարի 21-ին: Այն պահանջում է մահապատժի վերացումը ցանկացած իրավիճակում: Ուժի մեջ է մտնելու, երբ տասը պետություն ստորագրեն այն:

Հատկանշական է նաև Տասնմեկերորդ Արձանագրությունը-- Դատարանի պրակտիկան ցույց է տալիս, որ զանգատի քննությունը տևում է նվազագույնը 4-5 տարի: Մինչև 1998 թվականը Դատարանն ուներ երկճյուղ համակարգ. Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողով և Դատարան: Ցանկացած զանգատ մինչև Դատարանի վարույթ մտնելը պետք է նախ և առաջ ընդունվեր Հանձնաժողովի կողմից: 1998 թվականի նոյեմբերի 1-ից ուժի մեջ մտավ 11 Արձանագրությունը, որով վերացվեց Հանձնաժողովի և Դատարանի երկճյուղ համակարգը, ստեղծելով մեկ մշտական գործող Դատարան: 1998 թվականից Դատարանի կողմից ընդունված զանգատների քանակը սկսեց կտրուկ աճել: 1999 թվականին գրանցվել է մոտ 8,396 դիմում, համեմատած նախորդ տարվա 5,981 դիմումների հետ¹: 1999 թվականին Դատարանը կայացրել է մոտ 177 վճիռ, 731 զանգատ համարվել է ընդունելի, 3,519 զանգատ համարվել է անընդունելի կամ հանվել է դատարանի ցուցակներից: 1999 թվականի վերջին Դատարանը ընթացքի մեջ գտնվող մոտ 12.000 զանգատ ուներ² և մոտ 18,000 զանգատ, որոնք գրանցված էին, սակայն ընդունելիության մասին դեռ որոշում չէր կայացվել³:

¹ Տե՛ս Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի Քարտուղարության 24.01.00. մամլո հայտարարությունը:

² Այս ամենին պետք է ավելացնել նաև նախնական դիմումները, որոնք սովորաբար չեն գրանցվում: 1999 թվականին դրանք քանակը անցնում էր 47,000-ից: (ավելի մանրամասն տես Դատարանի Քարտուղարության մամլո հայտարարություն 21.6.99):

³ Տե՛ս Նախարարների կոմիտեի զեկույցը Եվրոպական դատարանի մասին (EG Court (2001)1 27 September 2001):

Զեկույցի ամբողջական տեքստի համար տես.

<http://cm.coe.int/stat/E/Public/2001/rapporteur/clcedh/2001egcourt1.htm>:

2. Եվրոպական Դատարանը.

Դատարանի հասցեն է՝
The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
France
Հեռ: (0)3 88 41 20 18
Ֆաքս: (0)3 88 41 27 30
Ինտերնետ հասցե՝ <http://www.echr.coe.int>

Ո՞վ կարող է դիմել Դատարան

Կոնվենցիայի 34-րդ հոդվածը սահմանում է, որ Դատարանը կարող է գանգատ ընդունել *»ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից ...«*: Չետևաբար, ֆիզիկական անձիք, մասնավոր անձանց խմբերը, հասարակական կազմակերպությունները, ձեռնարկությունները (նաև լուծարվածները⁴), բաժնետերերը, մասնագիտական ընկերակցությունները, առևտրային միությունները, քաղաքական կուսակցությունները և կրոնական կազմակերպությունները կարող են դիմել Դատարան: Կախված այն հանգամանքից, թե Կոնվենցիայով երաշխավորված որ իրավունքներն են խախտվել, Դատարան կարող են դիմել նաև մասնավոր ձեռնարկությունները, ինչպես նաև ձեռնարկության նախագահը կամ տնօրենը⁵ :

Սակայն մի շարք իրավունքների, մտքի, խղճի և հավատքի ազատություն⁶, կրթության⁷, խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, պատժի չենթարկվելու իրավունքները⁸ խախտվելու դեպքում, Դատարան կարող է դիմել միայն տուժող անձը, և այդ իրավունքների վերականգնման իրավունքը չի կարող տարածվել կազմակերպությունների վրա:

Դատարանին հանձնված գործերի քննությունը

Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը կազմում է կոմիտեներ՝ բաղկացած երեք դատավորից, Պալատներ՝ բաղկացած յոթ դատավորներից և Մեծ Պալատ՝ բաղկացած տասնյոթ դատավորներից: Դատարանի Պալատներից որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ: Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել անհատական գանգատը, որը ներկայացվել է Եվրոպական կոնվենցիայի 34-րդ հոդվածին համապատասխան, կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է: Եթե նա չի ընդունել ոչ մի որոշում, որ նախատեսված է 28-րդ հոդվածով, Պալատը որոշում է կայացնում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելության մասին և ըստ գործի էության:

⁴ Տե՛ս Pine Valley v. Ireland գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1992) 14 EHRR 319, կետ 42:

⁵ Տե՛ս Kaplan v UK գործով Եվրոպական դատարանի վճիռը (1982) 4 EHRR 64:

⁶ Տե՛ս X and Church of Scientology v Sweden գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979) 16 DR 68:

⁷ Տե՛ս Դիմում համ. 11533/85, D.R. 5:

⁸ Տե՛ս Դիմում համ. 11921/86, D.R. 57:

1. Պալատը որոշում է կայացնում 33-րդ հոդվածին համապատասխան պետության ներկայացրած **զանգատի ընդունելության** մասին և **ըստ էության**:
2. Գանգատի ընդունելության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե Դատարանը բացառության կարգով այլ որոշում չընդունի:

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը լուրջ հարց է արծարծում, որը վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը, կամ եթե հարցի լուծումը կարող է հակասել ավելի վաղ Դատարանի կայացրած որոշմանը, Պալատը կարող է մինչև իր որոշումը կայացնելը ընդդատությունը զիջել Մեծ Պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում դրա դեմ: (Պալատների և Մեծ Պալատի գործունեության վերաբերյալ մանրամասնությունները սահմանված են Եվրոպական Կոնվենցիայում և Դատարանի կանոնակարգում, որոնք կցվում են սույն Զուշագրին որպես Զավելված Բ):

Բանավոր դատավտումը

Կողմերին խնդրվում է ներկայացնել իրենց վերջնական գրավոր դիտողությունները (Memorial): Ծախսերի կամ փոխհատուցման վերաբերյալ տեղեկությունը պետք է ներկայացվի այս հուշագրում, կամ պետք է Ներկայացվի Դատարանին ընդունելիության մասին որոշում կատարելուց հետո երկու ամսվա ընթացքում (կամ այլ նշանակված ժամկետի ընթացքում):

Դատաքննությունը հրապարակային է (եթե գործի բնույթից կամ քննարկվող հարցերից ելնելով դատարանը այլ կերպ չի որոշում): Դատաքննությունը սովորաբար տևում է երկու ժամ: Դիմողներին տրվում է 30 րոպե իրենց փաստարկները ներկայացնելու համար: Եթե դատարանը հարցեր է տալիս, ապա ժամանակը կարող է 15-20 րոպե երկարացվել: Այնուհետև յուրաքանչյուր կողմին տրվում է 15-20 րոպե հարցերին պատասխանելու համար: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է բանավոր դատաքննություն չանցկացնել (Դատարանի կանոնակարգի 59-րդ կանոն):

Եթե վճիռն ամբողջությամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք (հոդված 45): Դատարանը իրավունք ունի «արդարացի փոխհատուցման» վերաբերյալ որոշում կայացնել (հոդված 41):

Դատարանի կանոնակարգը

1998 թվականի նոյեմբերի 1-ին ընդունվել է Դատարանի նոր կանոնակարգ, որի դրույթները վերաբերվում են դատարանի ընթացակարգին և Դատարանի ներքին աշխատանքային կարգին: Կանոնակարգի պատճեն կարելի է գտնել Դատարանի ինտերնետ էջում (www.coe.int):

3. Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռները

Դատարանի կողմից կայացված վճիռը հրապարակվում է դրա կայացումից մի քանի ամիս հետո: Այն դատավորները որոնք համաձայն չեն վճռի հետ, կարող իրենց չհամընկնող կարծիքը կցել վճռին: Վճիռը պարտադիր իրավաբանական ուժ ունի (Կոնվենցիայի 46(1)-րդ հոդված): Դատարանի կողմից տրվող իրավական պաշտպանության առաջնահերթ միջոցն այն է, որ Դատարանը իր վճիռներում հայտարարում է Կոնվենցիայով երաշխավորված մեկ կամ ավելի իրավունքները խախտվելու մասին:

Համաձայն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի, վճիռը կարող է նախատեսել «արդարացի փոխհատուցում»: Դա ներառում է նյութական և բարոյական վնասների հատուցում, ընդգրկելով նաև իրավաբանական ծախսերը: Դատարանը չի կարող բեկանել ներպետական մարմինների կամ դատարանների որոշումները, կասեցնել ներպետական իրավական ակտերի

գործողությունը կամ պահանջել պատասխանող մասնակից պետությանը ձեռնարկել հատուկ միջոցներ:

Վճռի կատարումը

Դատարանի կողմից կայացված վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների Կոմիտե, որն էլ վերահսկողություն է իրականացնում վճռի կատարման նկատմամբ (Կոնվենցիայի 46(2) –րդ հոդված): Հարկ եղած դեպքում Դատարանն իր նախաձեռնությամբ կարող է իր մեկ կամ մի քանի անդամների գործուղել համապատասխան պետություն՝ տեղում քննություն կատարելու կամ այլ կերպ ապացույցներ հավաքելու համար: Պետությունները պարտավոր են Պալատին կամ նրա պատվիրակության անդամներին աջակցել ապացույցների հավաքման հետ կապված ցանկացած գործընթացի ժամանակ (Կոնվենցիայի 38-րդ հոդված):

Դատարանի իրավական պաշտպանության միջոցները

Եվրոպական Դատարանով երաշխավորված իրավական պաշտպանության միակ միջոցը դա Կոնվենցիայի խախտումն արձանագրելն է: Երբ Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտում, վճիռը կարող է ներառել նաև «արդարացի փոխհատուցում» ըստ Կոնվենցիայի 41-րդ Հոդվածի: Արդարացի փոխհատուցում ասելով Դատարանը նկատի ունի և՛ նյութական, և՛ բարոյական վնաս, ինչպես նաև դատաքննության ծախսեր և ծախքեր: Արդարացի փոխհատուցման տրամադրումը անաչառ միջոց է և գտնվում է Դատարանի հայեցողության տակ:

4. Եվրոպական Դատարանի կողմից կիրառվող ընդհանուր սկզբունքներ

Կոնվենցիային որպես պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթուղթ

Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է.

»Բարձր պարտավորվող կողմերը պարտավորվում են իրացնել սույն Կոնվենցիայի առաջին գլխում տրված իրավունքները իրենց իրավասության շրջանակներում«.

Կոնվենցիայի առաջին գլխում նշված իրավունքները նման են Սարդու Իրավունքների Համընդհանուր հռչակագրում նշված իրավունքներին՝ փոքր ինչ փոփոխված տեսքով: Այսինքն, ըստ բովանդակության առաջին գլխում նշված իրավունքները պարտավորեցնող բնույթ չեն կրում, սակայն Կոնվենցիայի 1 հոդվածը լրացնում է այդ բացը՝ նշված իրավունքները դեկլարատիվ բնույթից վերածելով պարտավորեցնող բնույթի. «...պարտավորվում են իրացնել...իրավունքները իրենց իրավասության շրջանակներում»:

Եւս անդամ երկրները ստորագրելով Կոնվենցիան այդպիսով ներմուծում են այն իրենց ազգային օրենսդրական դաշտ: Կոնվենցիայի ներմուծումը (incorporation) տարբեր անդամ երկրները կատարում են տարբեր կերպ՝ ելնելով ազգային օրենսդրության առանձնահատկություններից: Գերմանիայում Կոնվենցիան դասվում է ազգային օրենքների հետ միևնույն աստիճանում, Ավստրիայում ունի սահմանադրության կարգավիճակ, Ֆրանսիայում աստիճանակարգվում է ավելի բարձր քան սովորական օրենսդրական ակտերը, սակայն ավելի ցածր քան Սահմանադրությունը: Անգլիայում Կոնվենցիան վավերացվեց միայն 1998 թվականին: Այսինքն՝ մինչև 1998թ. Անգլիայի դատարաններում հնարավոր չէր հղում կատարել Կոնվենցիայի դրույթներին:

Անկախ նրանից, թե Կոնվենցիան ազգային օրենսդրության մեջ ներմուծվում է թե ոչ, անդամ պետությունները պարտավոր են հետևել, որպեսզի «...ազգային օրենսդրությունը համապատասխանի Կոնվենցիային, և եթե անհրաժեշտ է, կատարել անհրաժեշտ փոփոխությունները...»⁹: Նույն միտքը արտահայտված է նաև 57-րդ հոդվածում, ըստ որի «...ազգային օրենքները պետք է լինեն այնպիսին, որպեսզի հնարավոր լինի Կոնվենցիայի բոլոր հոդվածների անխափան կիրառումը»: Սա նշանակում է, որ Կոնվենցիան համարվում է խախտված ոչ միայն պետական իշխանությունների որոշակի գործողությունների, այլ նաև անհամապատասխան ներպետական օրենքների առկայության դեպքում:

Կոնվենցիան մեկնաբանելու սկզբունքները

Որպես միջազգային իրավական փաստաթուղթ, Կոնվենցիայում նշված բառերի և արտահայտությունների մեկնաբանումը կատարվում է Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի (այսուհետ՝ «Վիեննայի կոնվենցիա») դրույթների հիման վրա¹⁰: Կոնվենցիան մեկնաբանելու կարիքը բխում է այն հանգամանքից, որ Կոնվենցիայի հոդվածներում միջազգային սովորույթային իրավունքի նորմերը ներկայացված են լայն և դեկլարատիվ տեսքով:

Եվրոպական Կոնվենցիայի մեկնաբանությունը կատարվում է Վիեննայի կոնվենցիայի 31-ից 33 հոդվածներով սահմանված դրույթների հիման վրա:

Ըստ Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի, Եվրոպական կոնվենցիան պետք է մեկնաբանվի արդարացի հիմունքներով, նշված բառերի՝ իրենց սովորական գործածության իմաստով, սակայն հաշվի առնելով նաև բովանդակությունը, որի մեջ օգտագործվել է տվյալ բառը, ինչպես նաև հաշվի առնելով Կոնվենցիայի հիմնական նպատակն ու առարկան:

Այսինքն, Կոնվենցիայում նշված բառը կամ բառակապակցությունը պետք է մեկնաբանվի արդար հիմունքներով, ինչպես նաև.

- ա. բառն իր սովորական գործածության իմաստով,
- գ. բառն իր բովանդակության մեջ,
- դ. հաշվի առնելով Կոնվենցիայի նպատակն ու առարկան:

ա. Բառն իր սովորական գործածության իմաստով

Ջոնսոնն ընդդեմ Իռլանդիայի ¹¹ գործով վճռում Դատարանը, մեկնաբանելով Կոնվենցիայի 12 հոդվածում նշված «ամուսնանալու իրավունք» բառակապակցությունը, հանգեց այն եզրակացության, որ նշված բառակապակցությունը պետք է հասկանալ իր սովորական իմաստի մեջ և զերծ մնալ տարածական մեկնաբանությունից: Ուստի, «ամուսնանալու իրավունքը» տվյալ հոդվածի ներքո չի կարող մեկնաբանվել միաժամանակ նաև որպես «ամուսնալուծվելու իրավունք»: Այս իմաստով Դատարանը մերժեց Դիմումատուի գանգատը, որով նա վիճարկում էր այն փաստը, որ Իռլանդիայի իշխանությունները հրաժարվում էին իրեն տալ ամուսնալուծության վկայական:

բ. Բառն ըստ իր բովանդակության

⁹ Տե՛ս Դե Բեկերը ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, 9 հունիս 1958, էջեր 214, 234:

¹⁰ Տե՛ս Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 21 փետրվար 1975թ վճիռը , կետ 29:

¹¹ Տե՛ս Ջոնսոնն ընդդեմ Իռլանդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1986), Series A, No.112 (1987) 9 EHRR 203:

»Բովանդակություն« հասկացությունը սահմանված է Վիեննայի կոնվենցիայի 31(2)–րդ հոդվածում, ըստ որի »բովանդակություն« ասելով հասկացվում է Կոնվենցիայի տեքստն ամբողջությամբ, կից արձանագրությունները և նախաբանը (պրեամբուլան): Յաճախ, երբ Դիմումատուն հիմնվում է Կոնվենցիային կից արձանագրությամբ տրված որևէ իրավունքի վրա և պարզվում է, որ պատասխանող մասնակից պետությունը չի վավերացրել տվյալ արձանագրությունը, Դիմումատուն կարող է հղում կատարել նույն իրավունքի ավելի ընդհանուր մեկնաբանության վրա կատարված Կոնվենցիայի դրույթներից որևէ մեկով: Դատարանի տվյալ մեկնաբանությունը կարելի է գտնել Աբդուլազիզի կամ Ռասմուսենի և Գուզարդի գործով վճիռներում: Էնգելի գործով վճռում Դատարանը պետք է պարզեր, արդյոք դատարանի մատչելիություն տերմինը համարվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի բաղկացուցիչ մասը: Պատասխանող կողմը այս իմաստով վիճարկում էր այն փաստը, որ նշված բառակապակցությունը բացակայում էր 6-րդ հոդվածի տեքստում: Դատարանը սակայն գտավ, որ նշված բառակապակցությունը պետք է համարել 6-րդ հոդվածի անքակտելի մասը, քանի որ այն բխում է Նախաբանի բովանդակությունում նշված »իրավունքի գերակայություն« արտահայտության իմաստից:

գ. Կոնվենցիայի հիմնական առարկան ու նպատակը

Վեմհոֆի գործով Դատարանը սահմանել է.

»...Անհրաժեշտ է կատարել այնպիսի մեկնաբանություն, որը լավագույնս է համապատասխանում Կոնվենցիայի հիմնական առարկային և նպատակներին, և ոչ թե այն, որով առավելագույնս կսահմանափակվի Կոնվենցիայի դրույթներով տրված իրավունքները«:¹²

Վերը նշվածը նաև նշանակում է, որ մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև »արդյունավետության« չափանիշը: Ելրինի գործով Դատարանը կատարեց հետևյալ ձևակերպումը, որը լայնորեն օգտագործվում է բոլոր այն վճիռներում, որտեղ շոշափվում է Կոնվենցիայի արդյունավետության սկզբունքը.

»...Կոնվենցիան ուղղված է նրան, որպեսզի երաշխավորվեն ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ այնպիսի իրավունքներ, որոնք գործնականում իրագործելի են ու արդյունավետ«:¹³

Եվ վերջապես, մեկնաբանելիս »արդյունավետության« չափանիշը կիրառելու համար հիմք է հանդիսանում նաև Կոնվենցիայի 53-րդ հոդվածը, որն ունի հետևյալ բովանդակությունը.

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

Արտիկոյի գործով վճռում դիմումատուն գանգատվում էր, որ խախտվել էր իր արդար դատաքննության իրավունքը, քանի որ պետությունը չէր ապահովել ներկայացուցչության իր իրավունքը դատարանում, մասնավորապես՝ չէր տրամադրել փաստաբան ներպետական դատավարության ընթացքում: Պետությունը սակայն վիճարկում, էր որ իրականում դիմումատուի իրավունքների պաշտպանության նպատակով պետության կողմից նշանակվել

¹² Տե՛ս Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (դիմ. 3448/69) 1969:

¹³ Տե՛ս Ելրին ընդդեմ Իռլանդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, 1979, կետ 24:

եր պաշտպան: Գործը քննելով ըստ էության և ուշադիր ուսումնասիրելով փաստերը, Դատարանը հանգեց այն եզրակացության, որ թեև գործի փաստերը ցույց էին տալիս, որ պաշտպան նշանակվել էր, սակայն դա կատարվել էր խիստ անարդյունավետ կերպով: Դատարանը սահմանեց, որ անհրաժեշտ է ոչ միայն ցույց տալ, որ Կոնվենցիայով տրվող իրավունքների ապահովումը պետության կողմից կատարվում է ձևականորեն, այլ նաև որ դա կատարվում է արդյունավետորեն:

Ինքնուրույն (ավտոնոմ) մեկնաբանություն

Վերը նշված «արդյունավետ մեկնաբանության» հասկացության հետ սերտորեն կապված է «ավտոնոմ» մեկնաբանության հասկացությունը: Շատ հաճախ Կոնվենցիայում օգտագործված արտահայտությունն ավելի նեղ հասկացությամբ է մեկնաբանվում անդամ պետության ազգային օրենսդրությամբ: Նման դեպքերում Դատարանը կատարում է տվյալ հասկացության ինքնուրույն մեկնաբանություն ելնելով «արդյունավետության» հասկացության իմաստից:

Էնգելի գործով Դատարանը որոշեց, որ թեև զինվորներին պատասխանատվության ենթարկելու հիմքերը ներպետական օրենսդրությամբ որակվում են կարգապահական բնույթի պատասխանատվություն, իրականում դրանք հանդիսանում են քրեական բնույթի մեղադրանքներ: Այս եզրակացությանը Դատարանը հանգեց ուշադիր ուսումնասիրելով մեղադրանքի հանընդհանուր կիրառման բնույթը ներպետական պրակտիկայում և պատժատեսակի խստության աստիճանը, որ պարունակում էր նաև ազատազրկում: Ուստի, կատարելով ինքնուրույն մեկնաբանություն, Դատարանը եզրակացրեց, որ, ըստ Կոնվենցիայի, զինվորները իրականում ենթարկվել էին քրեական բնույթի մեղադրանքի, որից էլ եզրակացրեց, որ Կոնվենցիայի 6 հոդվածը կիրառելի է տվյալ գանգատի նկատմամբ: Հակառակ դեպքում 6-րդ հոդվածը կիրառելի չէր լինի, քանի որ այն տարածվում է միայն քրեական և քաղաքացիական գործերով վարույթների վրա:

Եվրոպայի Խորհրդի և այլ միջազգային պայմանագրեր

Վճիռ կայացնելիս Եվրոպական դատարանը կարող է հղում կատարել եւս այլ համաձայնագրերի կամ իրավական ակտերի վրա, որոնք կարող են դրվել վճռի հիմքում: Օրինակ՝ Շմիդտ ու Դալստրոմն ընդդեմ Շվեդիայի գործով վճռում¹⁴ գործադուլավորների իրավունքների շրջանակները Կոնվենցիայի 11-րդ հոդվածի ներքո սահմանելու նպատակով Դատարանն օգտվեց Եվրոպական սոցիալական խարտիայից:

Աուտրոնիկ AG-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում¹⁵ Դատարանը հղում կատարեց Միջսահմանային հեռուստատեսության Եվրոպական կոնվենցիային պարզելու համար արդյոք հեռարձակման արտոնագրի մերժումը կատարվել էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նորմերին համաձայն, մասնավորապես՝ արդյոք Խորհրդային արբանյակի միջոցով հեռուստատեսային հաղորդումների վերահեռարձակում կատարելու համար արտոնագրի մերժումը «անհրաժեշտ» էր ժողովրդավարական հասարակարգում :

Եւս փաստաթղթերը

Եւս-ն, մասնավորապես Խորհրդարանական վեհաժողովը և Նախարարների կոմիտեն, ընդունում է չորս տեսակի փաստաթղթեր, Բանաձև, Համձնարարական, Կարծիք և Որոշում: Այս փաստաթղթերից միայն Բանաձևն ունի իրավաբանորեն պարտադիր ուժ Կոնվենցիայի անդամ

¹⁴ Տե՛ս Շմիդտ ու Դալստրոմն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979 – 80) 1 EHHR 632:

¹⁵ Տե՛ս Աուտրոնիկ AG ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1990) 12 EHRR 485:

երկրների համար: Անհրաժեշտ է հիշել, որ Հայաստանի անդամակցությունը ԵԽ-ին ամրագրվել է Բանաձևի տեսքով:

Ի տարբերություն Բանաձևի, Հանձնարարականը պարտադիր իրավաբանական ուժ չունի, սակայն պարտադիր նշանակություն է ձեռք բերում որպես քաղաքական փաստաթուղթ: Այս իմաստով կարևոր է հիշել թիվ (2003)13 Հանձնարարականը, որում տրվեց Հանձնարարականի իրավական ձևակերպումը.

Նախարարների Կոմիտեի ցանկացած Հանձնարարական քաղաքական պարտավորություն առաջացնող փաստաթուղթ է, և ոչ թե իրավաբանորեն պարտադիր նշանակություն ունեցող փաստաթուղթ: Նախարարների Կոմիտեի կողմից փաստաթուղթն ընդունելու պահից այն պարտադիր է բոլոր անդամ պետությունների համար:

Այսինքն, փաստաթուղթը իրավաբանորեն չի պարտավորեցնում անդամ պետությանը հետևել դրա դրույթներին, սակայն որպես քաղաքական փաստաթուղթ, ընդունված Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից, այն պարտավորեցնող է:

Թեև Հանձնարարականը պարտադիր իրավաբանական ուժ չունի, այնուամենայնիվ «անուղղակիորեն» պարտադրող նշանակություն են ձեռք բերում, որովհետև այս փաստաթղթերում նշվում են այնպիսի սկզբունքներ և չափանիշներ, որոնք արդեն կիրառվում են Եվրոդատարանի կողմից:

Ընդունված է նաև այն կարծիքը, որ Հանձնարարականները Դատարանի համար «ուղեցույց են հանդիսանում նոր չափանիշներ և սկզբունքներ կիրառելու հարցում»: Թեև պատահում է նաև այնպես, երբ որևէ Հանձնարարական ընդունվում է Եվրոպական դատարանի վճռի ազդեցությամբ: Օրինակ, Գուդվինի գործով վճռի ազդեցությամբ ընդունվեց (2000)7 Հանձնարարականը լրատվական աղբյուրների գաղտնիության մասին, իսկ Դյու Ռոյի գործով վճռից հետո ընդունվեց (2003)13 Հանձնարարականը քրեական գործով դատաքննության մասին լրատվամիջոցների կողմից տեղեկատվություն տրամադրելու մասին:

Ուստի, անհրաժեշտ է հիշել, որ ցանկացած Բանաձև կամ Հանձնարարական, որն ընդունվել է ԵԽ խորհրդարանական Վեհաժողովի կամ Նախարարների Կոմիտեի կողմից և որոնք անմիջական կապ ունեն գանգատի փաստերի հետ, անպայման հաշվի է առնվում Դատարանի կողմից ընդունելիության մասին որոշում կայացնելիս, գործն ըստ էության քննելիս կամ վճիռ կայացնելիս:

Եվրոպայի Միության փաստաթղթերը

Վճիռ ընդունելիս Եվրոպական դատարանը կարող է հղում կատարել նաև Եվրոմիության կողմից ընդունված փաստաթղթերի վրա: Օրինակ, Գուդվինի¹⁶ գործով վճռում Դատարանը հղում կատարեց Եվրոպական խորհրդարանի բանաձևի վրա:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության իրավական ակտերը

Բազմաթիվ վճիռներում Դատարանը հղում է կատարել նաև ՄԱԿ-ի կողմից ընդունված միջազգային պայմանագրերին: Մասնավորապես, Պրետտոյի¹⁷ գործով վճռում Դատարանը

¹⁶ Տե՛ս Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1996) 22 EHRR 123:

¹⁷ Տե՛ս Պրետտոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1983) 6 EHRR 182:

հղում կատարեց Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրին Կոնվենցիայի 6(1)-րդ հոդվածով տրվող արդար դատավարության իրավունքների շրջանակները մեկնաբանելու համար: Ջերսիլդի¹⁸ գործով վճռում Դատարանը քննության առավ Բուլոր տեսակի ռասայական խտրականությունները արգելելու մասին միջազգային կոնվենցիան, որպեսզի որոշի, թե ինչ սահմաններում պետք է ռասայական խոսքը պաշտպանված լինի Եվրոպական կոնվենցիայի ներքո:

Նախադեպի իրավունք

Եվրոպական Դատարանում նախադեպի իրավունքը որպես այդպիսին չի գործում: Այսինքն, Դատարանը պարտադրված չէ իր նախկին որոշումներով: Կոսիմի գործով վճռում Դատարանը կատարեց հետևյալ ձևակերպումը.

»Ճիշտ է, որ Դատարանը չի պարտադրված հետևելու իր նախկին վճիռներին; իրականում սա բխում է Դատարանի կանոնակարգի 51-րդ հոդվածի առաջին մասից: Սակայն, դատարանը սովորաբար հետևում է և կիրառում իր նախկին վճիռները: Նման պրակտիկան նպատակ է հետապնդում պահպանել վճիռների որոշակիություն և հետևողականություն: Չնայած այս ամենին, նման պրակտիկան չի խանգարում Դատարանին շեղվելու իր նախկին որոշումներից, եթե դատարանը համոզված է, որ դրա համար կա խիստ անհրաժեշտ պատճառ: Նման շեղումը կարող է արդարացված լինել, օրինակ, այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ցույց տալ, որ Կոնվենցիայի մեկնաբանությունը արտահայտում է հասարակարգում տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Կոնվենցիան մեկնաբանվում է ներկա իրավիճակից ելնելով:»¹⁹

Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ դատարանը շեղվել է իր նախկին վճիռներից²⁰: Ինչպես նաև կարելի է նշել բազմաթիվ վճիռներ, որոնցում դատարանը հետևել է իր նախկին վճիռներին, որոնք էապես ազդել են կոնկրետ վճռի ելքի վրա:

Այն հանգամանքը, որ Կոնվենցիան շուրջ հիսուն տարի հետո դեռ համարվում է արդյունավետ իրավական փաստաթուղթ, իսկ Եվրոպական դատարանը աշխարհի ամենաարդյունավետ միջազգային ատյաններից մեկը, հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոնվենցիայի լայն և երկիմաստ դրույթներն անընդհատ ենթարկվում են մեկնաբանության Եվրոպական դատարանի վճիռներով: Սա է պատճառը, որ «Կոնվենցիան համարվում են «կենդանի» իրավական փաստաթուղթ և որպես այդպիսին Կոնվենցիայով տրված իրավունքները պետք է մեկնաբանվեն ներկա օրվա [ժամանակակից] պայմաններից ելնելով»:²¹

Ո՛չ Կոնվենցիայի և ո՛չ էլ Դատարանի կանոնագրքում բացակայում է որևէ դրույթ, որը պարտադիր է համարում Դատարանի վճիռներով սահմանված սկզբունքները ԵԽ-ի անդամ երկրի համար: Բայց շատ երկրների ներքին օրենսդրությամբ կան դրույթներ, որոնք պարտավորեցնում են Դատարանի վճիռները հաշվի առնել ոչ թե որպես պարտադիր ուժ ունեցող իրավունքի աղբյուր, այլ որպես հիմնավոր փաստարկ Կոնվենցիայով տրվող իրավունքների մեկնաբանության համար

Կան բազմաթիվ վճիռներ, որտեղ Դատարանը, ինչպես նաև դիմումատուն կամ պատասխանող մասնակից պետությունը, հղում են կատարել Եվրոպայի արդարադատության

¹⁸ Տե՛ս Ջերսիլդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1995) 19 EHRR 1:

¹⁹ Տե՛ս Կոսսին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը, 1990, կետ 35:

²⁰ Տե՛ս Դե Ուայլդն, Օմսը և Վերսուսն ընդդ. Բելգիայի գործը: Տե՛ս նաև Յուրբերն ընդդեմ Շվեյցարիայի, Բորգերն ընդդեմ Բելգիայի գործը:

²¹ Տե՛ս Թայրերն ընդդեմ Անգլիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1995) 20 ECHR 247:

դատարանի (Եվրոմիության դատարանի), ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի, Միջամերիկյան մարդու իրավունքների դատարանի վճիռներին: Սակայն, ինչպես նշվեց վերևում, դրանք չունեն պարտադիր նշանակություն և դա արվում է զուտ փաստարկները հիմնավորելու նպատակով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ նման հղումներն էապես ազդում են վճռի ելքի վրա և, ուստի, մեծ կարևորություն ունեն:

Եզրափակելով, պետք է նշել, որ Եվրոպական դատարանի վճռի վրա հղում կատարել չի նշանակում օգտագործել նախադեպի իրավունք, այլ նշանակում է կատարել Կոնվենցիայի մեկնաբանություն: Եվրոպական դատարանի վճիռները Կոնվենցիային մեկնաբանության հիմնական աղբյուրն է:

Չեղիմակավոր միջազգային կազմակերպությունների զեկույցները, հաշվետվություններն ու ուսումնասիրությունները

Գանգատ ներկայացնելիս լայնորեն ընդունված է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հեղինակավոր կազմակերպությունների զեկույցների, հաշվետվությունների կամ ուսումնասիրությունների, այդ թվում նաև «բարձր որակավորում ունեցող» մասնագետների աշխատությունների վրա հղում կատարելը: Թեև դրանք չեն կարող դրվել վճռի հիմքում, սակայն նման հավելյալ փաստերն օգտակար են փաստարկները հիմնավորելու և փաստերն ավելի համոզիչ դարձնելու համար: Օրինակ, Ակսոյն ընդդեմ Թուրքիայի²² գործով վճռում Դատարանը հիմք ընդունեց «Միջազգային համաձայնում» կազմակերպության 1995 թվականի զեկույցը այն մասին, որ Թուրքիայի հարավ արևելյան շրջաններում ներպետական դատական պաշտպանության միջոցները մասսայաբար անտեսվում են՝ հատկապես ազգությամբ քուրդ քաղաքացիների նկատմամբ, ինչպես նաև, որ այդ շրջաններում «արտակարգ իրավիճակներ» պատրվակի տակ արձանագրվում են Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածների լայնամասշտաբ խախտումներ քուրդ բնակիչների նկատմամբ: Չետաքրքրական է, որ կազմակերպության անունը տեղ է գտել վճռի նախաբանի այն մասում, որտեղ նշվում են իրավունքի և տեղեկության աղբյուրները:

Հաճախ, Դատարանի նախագահի միջամտությամբ թույլատրվում է, որպեսզի շահագրգիռ կազմակերպությունը, որը չի հանդիսանում դատավարության կողմ, իր նախաձեռնությամբ ներկայացնի զեկույցներ կամ իր տեսակետները ի հոգուտ Դիմումատուի (երրորդ կողմից միջամտություն) :

²² Տե՛ս Ակսոյն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 1996թ, վճիռը, կետ 80:

ՄԱՍ III. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավական վերլուծությունն մասուն համառոտ անդրադարձ կկատարվի Եվրոպական կոնվենցիայի համապատասխան նորմերի կիրառմանն ու Եվրոպական Դատարանի վճիռներին՝ Կոնվենցիայի 6-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման ուղղությամբ:

1. Արդար դատաքննության իրավունքը

Կոնվենցիայի 6(2) հոդվածը սահմանում է.

Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Վերը նշված արտահայտությունը լայնորեն հայտնի անմեղության կանխավարկածն է, որն ընդգրկված է Կոնվենցիայի «արդար դատաքննության» իրավունքը ամրագրող դրույթի շրջանակներում: Անմեղության կանխավարկածը բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման: Անմեղության կանխավարկածը համարվում է խախտված, եթե խախտվել է անձի լռելու իրավունքը, ինքն իր դեմ վկայություն չտալու իրավունքը, հարկադրանքի ազդեցությամբ կորզվել են ինքնամեղադրող ցուցմունքներ և դրանք օգտագործվել են մեղադրանքում, ինքնամեղադրող հայտարարությունները կազմել են մեղադրանքի էական գերակշռող մասը, ինչպես նաև նախաքննության և դատաքննության մասին համապատասխան մարմինների և լրատվամիջոցների միջոցով կամ այլ կերպ տարածված տեղեկատվությամբ: Քանի որ տվյալ գործի փաստերը վերաբերվում են վերջին դեպքին, ուստի ստորև կխոսվի անմեղության կանխավարկածի խախտման հատկապես այն դեպքերի մասին, որոնք առաջանում են նախաքննության մարմինների կողմից տեղեկատվության տրամադրելով անմեղության կանխավարկածի խախտելուն:

Դատաքննության և նախաքննության լուսաբանումը հիմնականում բխում է հասարակության պահանջից, ինչն ապահովում է մարդու՝ տեղեկություններ ստանալու իրավունքը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը, որը ներառում է նաև տեղեկատվության մատչելիությունը: Եվրոպական դատարանի վճիռների համաձայն, հասարակությունը պետք է տեղեկացված լինի արդարադատության իրականացման հետ կապված հարցերին, ինչը հիմնականում պայմանավորված է իրավական պետության ամրապնդման ու ժողովրդավարական հասարակության զարգացման համար արդարադատության պատշաճ իրականացման դերով և նշանակությամբ: Ըստ Եվրոպական դատարանի, անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատարանի, այլ նաև պետական իշխանությունների կողմից: Ալենե Դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի²³ գործով վճռում Դատարանը նշել է.

«Կոնվենցիայի 10 հոդվածով երաշխավորվող՝ անձնական կարծիքի արտահայտման ազատությունը տարածվում է նաև տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության վրա: Յետևաբար, 6-հոդվածի 2-րդ կետը չի կարող խանգարել իշխանություններին՝ հասարակությանը տեղեկացնելու կատարվող քրեական հետաքննությունների մասին, սակայն պահանջում է, որ իշխանությունները դա կատարեն զուսպ և նրբանկատ՝ ինչպես պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը»:

²³ Տե՛ս Ալենե Դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 1995թ. վճիռը, կետ 38:

Այս իմաստով, բախվում են Կոնվենցիայի 10-րդ և 6-րդ հոդվածները: Առաջինը ենթադրում է, որ հանրությունն իրավունք ունի ստանալ տեղեկատվություն. հատկապես՝ եթե դա վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերին: Այս իրավունքից բխում է, որ նախաքննության մարմինները և դատարանները պարտավոր են տրամադրել տեղեկատվություն. հատկապես՝ հանրությանը հուզող դեպքերի և հարցերի առնչությամբ: Երկրորդը ենթադրում է, որ անձն ունի արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է համարվում անմեղության կանխավարկածը և որը տարածվում է նաև նախաքննության վարույթի վրա. թեև 6-րդ հոդվածը վերաբերվում է միայն »դատաքննությանը«, սակայն Դատարանը սահմանել է, որ »...ոչ մի հիմնավորում չկա արգելելու համար, որպեսզի 6-րդ հոդվածով տրվող անմեղության կանխավարկածի իրավունքը տարածվի նաև նախաքննության վրա«:

Եվրոպական դատարանն Ալլենե դե Ռիբենոնի գործով վճռում արձանագրեց, որ խախտվել է անմեղության կանխավարկածի իրավունքն առ այն, որ Փարիզի ոստիկանության բարձրաստիճան աշխատակիցներից մի քանիսը Դիմումատուին ձերբակալելուց մեկ օր անց մամուլի ասուլիսի ժամանակ Դիմումատուին անվանել են հանցագործության սադրիչ, այն է՝ հանցագործության մասնակից, ինչը ենթադրում է հանցագործություն կատարելու մեջ մեղավորության մասին հայտարարություն: Նման հայտարարությունները պայմաններ են ստեղծում, որ հասարակությունն հավատա դրան, և միևնույն ժամանակ կանխորոշում են դատարանի կողմից գործի ապացույցների գնահատումը:

Նախաքննության մասին անհրաժեշտ տեղեկությունների տարածման վերաբերյալ գործեր քննելիս Եվրոպական դատարանը, մի կողմից, հաշվի է առնում հասարակության՝ տեղեկություններ ստանալու իրավունքը, ինչը հիմնականում արտահայտվում է նախաքննության մարմինների կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող գործերի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու միջոցով, մյուս կողմից՝ արդարադատության իրականացման շահերն ու նախաքննության և դատավարության մասնակիցների անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրականացումը:

Այս միտքն իր արտահայտությունն է գտել նաև Եվրախորհրդի Նախարարների Կոմիտեի 2003թ. հուլիսի 10-ին նշակած՝ թիվ (2003)13 Հանձնարարականի Հավելված 3-ի 2-րդ սկզբունքում՝ հետևյալ խմբագրությամբ.

»Անմեղության կանխավարկածի սկզբունքի հարգումն արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մասն է: հետևաբար՝ ընթացող քրեական գործի վարույթի վերաբերյալ տեղեկություններն ու կարծիքները...պետք է...տարածվեն միայն այն պայմանով, եթե դա չի վնասում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքը«:

Դյու Ռոյի գործում Դիմումատուն վիճարկում էր Ֆրանսիայի ներպետական օրենսդրության մի դրույթ, որը բացարձակ արգելք էր սահմանում քրեական գործով վարույթի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հաղորդելու վրա: Դատարանը եզրակացրեց, որ նման դրույթը հակասում է Կոնվենցիային.

»...Նման դրույթը հիմնված չէ որևէ օբյեկտիվ հիմքի վրա և անբողջությամբ խախտում է հանրությանն իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու...իրավունքը«²⁴:

Հարկ է նշել, որ վերը նշված Հանձնարարականը պատրաստվեց և ընդունվեց այս վճռի ազդեցության արդյունքում:

²⁴ Տե՛ս Դյու Ռոյը և Մալարին ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 2000թ. հոկտեմբեր 3-ի վճիռը:

Այսպիսով, նախաքննության կամ դատաքննության մասին տեղեկատվություն տարածելու համատեքստում գործը քննելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Դատարանը առաջնորդվում է տեղեկատվություն ստանալու հանրության և անմեղության կանխավարկածի իրավունք ակնկալող անձի բախվող շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռություն սահմանելու չափանիշով: Կոնվենցիայի համատեքստում սա արտահայտվում է 6-րդ և 10-րդ հոդվածների միջև բախումով:

Այս մտահոգությամբ առաջնորդվելով, ԵՍ Նախարարների կոմիտեն կազմեց վերը նշված քրեական գործով նախաքննության և դատաքննության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին թիվ (2003)13 Հանձնարարականը: Ինչպես նշված է Հանձնարարականի հավելվածում, որը փաստորեն հանդիսանում է Հանձնարարականի պաշտոնական մեկնաբանությունը, այն ուղղված է առաջին հերթին պետական մարմիններին. հետաքննության մարմիններին և դատարաններին:

Փաստաթղթում ներկայացված սկզբունքները վերաբերվում են նախաքննության և դատաքննության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացքում բախվող երեք հիմնարար իրավունքներին. արդար դատաքննության իրավունքին (6 հոդված), տեղեկատվություն տարածելու և ստանալու իրավունքին (10-րդ հոդված) և անձնական կյանքի պաշտպանվածության իրավունքին (8-րդ հոդված): Նշված յուրաքանչյուր հոդված պետական մարմիններին հնարավորություն է ընձեռում սահմանափակել դատաքննության կամ նախաքննության վերաբերյալ տեղեկատվության հոսքը և դա կատարել խիստ չափավոր: Այս իմաստով, այս փաստաթուղթը ձգտում է կատարելու այն, ինչ Եվրոպական դատարանն իր բոլոր վճիռներում. միևնույն գործի շրջանակներում հավասարակշռելու երկու կամ մի քանի բախվող իրավունքները՝ միայն տվյալ գործի փաստերից ելնելով:

Հանձնարարականի 8-րդ սկզբունքը նշում է, որ կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվություն մատուցելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վնասակար հետևանքներին, որ կարող է տեղեկատվության տարածումը ունենալ նման խմբերի վրա: Ըստ Ուորմի գործով վճռի, տեղեկատվություն հայտնելը կամ մեկնաբանելը «համահունչ է» 6-րդ հոդվածի պահանջներին, եթե դրանք չեն անցնում թույլատրելիության սահմանները, որոնք որոշվում են արդարադատության իրականացման շահերից ելնելով: Իսկ «թույլատրելիության սահմաններ» նշանակում է, որ՝ «...մեկնաբանությունը հավասարազոր չէ հայտարարության, եթե ամենայն հավանականությամբ կարող է վնասել՝ կանխամտածված թե ոչ, անձի՝ արդար դատաքննություն ստանալու հնարավորությունը կամ խարխլել դատարանների հանդեպ հանրության վստահությունը՝ որպես արդարադատություն իրականացնողների»²⁵: Այս ձևակերպումից ակնհայտ է, որ Դատարանը սահմանում է մի այնպիսի չափանիշ (ամենայն հավանականությամբ կարող է վնասել), որն ստիպում է ցուցաբերել ծայրահեղ զգուշություն քրեական դատավարության մասին լրատվություն հաղորդելիս:

2. Արտահայտվելու ազատությունը

1. Ընդհանուր սկզբունքներ

Քաղաքական խոսքի լայն պաշտպանվածությունը

Քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճի ազատությունը կազմում է ժողովրդավարական ինքնակառավարման սկզբունքի հիմքը, «...որը կարմիր թելի պես

²⁵ Տե՛ս Ուորմն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճռը (1987) 52 DR 136, կետ 50:

անցնում է ողջ Կոնվենցիայով»:²⁶ Ըստ մարդու իրավունքների միջազգային նորմերի, խոսքի ազատության պաշտպանության հիմնական նպատակն է պաշտպանել քաղաքացիների քաղաքական դեպքերի զարգացումներին իրազեկ լինելու իրավունքը, որպեսզի դրանով հնարավորություն տրվի նրանց արդյունավետ կերպով մասնակցելու ժողովրդավարական ինքնակառավարմանը: »Խոսքի ազատության սկզբունքը բխում է ժողովրդավարական ինքնակառավարման ծրագրի իրագործման անհրաժեշտությունից...ըստ որի հասարակությանը հուզող հարցերը պետք է լուծվեն ընդհանուր բաց բանավեճով»:²⁷

Քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճի նշանակության մասին նշվում է Դատարանի բազմաթիվ վճիռներում: Եթե զրպարտության կամ վիրավորանքի համար ներկայացրած մեղադրանքի հիմքում ընկած փաստերը վերաբերվում են քաղաքական խոսքին. քաղաքական և պետական բարձր պաշտոնյաների, ինչպես նաև պետական իշխանությունների քննադատությանը, ապա Դատարանը նման դեպքերում ավելի լուրջ քննության է առնում պետական իշխանությունների կողմից քաղաքական խոսքի սահմանափակմանը վերաբերող բոլոր փաստերը, ինչպես նաև ներպետական դատարանի կողմից դրա անհրաժեշտությունը հիմնավորող գնահատականները:

Կոնվենցիայի անդամ մի շարք երկրների դատարաններ արգելում են պետական իշխանություններին, կազմակերպություններին և նույնիսկ քաղաքական կուսակցություններին զրպարտության համար գանգատներ ներկայացնել: Սրա նպատակն է ցույց տալ, որ կարևոր տեղ է հատկացվում քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճերի ազատությանը:

Քաղաքական գործիչները և պետական բարձր պաշտոնյաներն ավելի քիչ են պաշտպանված 10-րդ հոդվածով

Կոլոմբանիի²⁸ գործով վճռում Դատարանը նշել է, որ »...պետական պաշտոնյաների հատուկ պաշտպանվածության սկզբունքը...այլևս անհամատեղելի է ժամանակակից նորմերի և քաղաքական համատեքստի հետ, քանի որ այս սկզբունքի նպատակն է նրանց օժտել անձեռնմխելիության իրավունքով զուտ իրենց պաշտոնի կամ կարգավիճակի համար. անկախ այն հանգամանքից, արդյոք քննադատությունը արդարացի է«: Ըստ այս գործի փաստերի, Լե Մոնդ թերթի խմբագրին ներկայացվել էր քրեական մեղադրանք, որի հիմքում ընկած էր 1881թ. ընդունված մի իրավական նորմ, ըստ որի պետական պաշտոնյաներին տրվում էր պաշտպանվածության հատուկ կարգավիճակ: »Արտիկլ 19« հասարակական կազմակերպությունը զրպարտության նորմերին վերաբերվող ուսումնասիրության մեջ կատարում է հետևյալ ձևակերպումը. » ...ոչ մի դեպքում չպետք է թույլատրել, որպեսզի զրպարտության նորմերը պետական պաշտոնյաներին պաշտպանվածության առումով առավելություն տան. անկախ նրանց դիրքից կամ պաշտոնից: Այս սկզբունքը վերաբերվում է բողոքի հայցի ներկայացման և վարույթի մեթոդներին, պատժաչափերին, չափանիշներին, որով որոշվում է մեղադրյալի մեղավորությունը զրպարտության համար«²⁹:

Հանդիսայդի գործի Դատարանի կողմից սահմանվեցին ազատ խոսքի իրավունքի ավելի բարձր չափանիշներ, դրանով նվազեցնելով քաղաքական գործիչների և պետական պաշտոնյաների պաշտպանվածության ոլորտը: Հանդիսայդի գործում նշվում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը »կիրառվում է ոչ միայն տեղեկատվության կամ գաղափարների առնչությամբ, որոնք հասարակության շրջանում ընդունվում են որպես նպաստավոր, կամ դիտվում են որպես անվնաս...այլ նաև այնպիսիների առնչությամբ, որոնք պետությանը կամ բնակչության մի մասին ցնցում են, վիրավորում կամ անհանգստություն պատճառում: Այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության և ազատականության

²⁶ Տե՛ս Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986թ, հուլիս 8-ի վճիռը, Շարք Ա, հատ.103, կետ 42: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.) /Կ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Լ. Հակոբյան. - Եր, Տիգրան Մեծ, 2002.

²⁷ Տե՛ս Meiklejohn, A., Political Freedom: The Constitutional Powers of the People (Oxford, OUP, 1965), at 27:

²⁸ Տե՛ս Կոլոմբանի ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 2002թ հունիս 26-ի վճիռը:

²⁹ Տե՛սՏես. "Defining Defamation", սկզբունք 8: ARTICLE 19, Լոնդոն, ISBN 1 902598 25 3, հուլիս 2000թ:

պահանջները, առանց որոնց չկա ժողովրդավարական հասարակություն»³⁰: Նման սկզբունքի կիրառումով Դատարանը լայնացրեց լրագրողական նյութի պաշտպանվածության ոլորտը, քանի որ «...լրագրողական ազատությունը նաև նախատեսում է որոշակի չափազանցության կամ սահմանների դիմելու հնարավորությունը»:³¹

Պետական պաշտոնյաների և պետական մարմինների քննադատության լայն սահմանների և նրանց կողմից ցանկացած քննադատության նկատմամբ «մեծագույն հանդուրժողականություն» ցուցաբերելու պահանջի վերաբերյալ Դատարանը տալիս է մի քանի բացատրություն: Նախ, դա վերը նշված քննադատության լայն սահմանների ապահովումն է, որն անհրաժեշտ է մասնավոր անձանց ժողովրդավարական ինքնակառավարման գործընթացին արդյունավետ կերպով մասնակցելու համար: Մնացած մեկնաբանությունները վերաբերվում են երկու բախվող շահերի, հասարակության և անձի միջև արդարացի հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությանը: Մասնավորապես, Դատարանը նշում է կառավարության գերիշխող դիրքը «...որն անհրաժեշտ է դարձնում , որպեսզի նա ցուցաբերի զսպվածություն»³²: Հատկանշական է այն հանգամանքը, որ «...պետական իշխանությունների մոտ ցանկացած քննադատության վերաբերյալ բաց է մնում միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը»³³: Պետական պաշտոնյաներն ունեն դիրք և լծակներ, որը նրանք հաջողությամբ օգտագործում են, օրինակ, դատաքննության ընթացքում: Պետական պաշտոնյաների հեղինակությունը պաշտպանելիս դատարանի կողմից օգտագործվում են ավելի բարձր չափանիշներ և կիրառվում են ավելի խիստ պատժաչափեր մեղադրյալների նկատմամբ:³⁴

Չրպարտության քրեական նորմերը

Եվրոպական դատարանի կողմից կայացված բազմաթիվ վճիռներում անդրադարձ է կատարվում Չրպարտության քրեական նորմերին: Լինգեսն ընդդեմ Ավստրիայի գործով, որտեղ դիմումատուն քրեական պատասխանատվության էր ենթարկվել քաղաքական գործչին Չրպարտելու համար (նրան անվանել էր «անբարոյական», «անարժան», «ցածրակարգ օպորտունիստ»), Եվրոպական դատարանը հայտնեց այն միտքը, որ լրագրողներին Չրպարտության համար քրեական պատասխանատվության ենթարկելը կարող է ապագայում զրկել նրան նման քննադատությամբ զբաղվելու ցանկությունից: Այս միտումն իր զարգացումն է գտել ոչ միայն Եվրոպական դատարանի վճիռներում, այլ նաև մի շարք հեղինակավոր կազմակերպությունների գործունեությունում: «Արտիկլ 19» հասարակական կազմակերպության կողմից մշակված Չրպարտության սահմանմանը վերաբերող սկզբունքներում, մասնավորապես Սկզբունք 4-ում, ներառվում են Չրպարտության քրեական նորմերի բացառման վերաբերյալ մի շարք պահանջներ: Կարևորագույններից մեկը Սկզբունք 4-ն է, համաձայն որի ա ենթակետի.

«Չրպարտության բոլոր քրեական նորմերը պետք է ապաքրեականացվեն ու փոխարինվեն համապատասխան քաղաքացիական նորմերով: Այն երկրներում, որտեղ Չրպարտության համար քրեական նորմեր դեռ կիրառվում են, անհրաժեշտ է ներմուծել այս սկզբունքը»:³⁵

³⁰ Տե՛ս Հանդիսայնդ ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1976թ.-ի վճիռը, Շարք Ա, հատ.24, էջ 23, կետ 49:

³¹ Տե՛ս Պրագերը և Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1995թ ապրիլ 26-ի վճիռը, Շարք Ա, հատ.313, կետ 38:

³² Տե՛ս Կաստելսն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 1992թ. ապրիլ 23-ի վճիռը, Շարք Ա, հատ. 236, կետ 46:

³³ Նույն տեղում:

³⁴ Տե՛ս “Defining Defamation”, ARTICLE 19, Lnնդոն, ISBN 1 902598 25 3, հուլիս 2000:

³⁵ Տե՛ս նույն տեղում, Սկզբունք 4:

Համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի այլ անձանց հեղինակությունը պաշտպանելու նպատակով արտահայտվելու ազատության ցանկացած սահմանափակում պետք է օրինաչափ նպատակ հետապնդի և արդյունավետ լինի: Համաձայն »Արտիկլ 19« հասարակական կազմակերպության, զրպարտող բնույթ կրող հայտարարությունների քրեականացումն անձի հեղինակության պաշտպանության համար արդյունավետ միջոց չէ:

Գնահատական դատողություն

Դատարանն իր բազմաթիվ վճիռներում սահմանել է, որ գործով մեղադրյալին կամ պատասխանողին չի կարելի ստիպել ապացույց ներկայացնել գնահատական-դատողության կամ մեկնաբանության ճշմարտացիությունը ապացուցելու համար: Դատարանը գնահատական-դատողության կապակցությամբ իր վճիռներում զարգացրել է հետևյալ մոտեցումը.

»... Պետք է հանգամանալից տարբերակում անցկացնել փաստերի և գնահատող դատողությունների միջև: Փաստերի գոյությունը կարող է ապացուցելի լինել այն դեպքում, երբ գնահատող դատողությունների ճշմարտացիությունը ոչ միշտ է ապացուցման ենթակա«³⁶:

Դե Հաեսի գործով վճռում Եվրոպական դատարանը սահմանեց, որ. »... ներկայացված մեղադրանքները ոչ ավելի են, քան կարծիքներ ... նման կարծիքները կարող են չափազանցված լինել, հատկապես՝ որևէ փաստացի հիմքի բացակայության դեպքում...«³⁷: Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը առաջնորդվում է այն սկզբունքով, որ գնահատական-դատողությունը չի կարելի որակել որպես զրպարտող հայտարարություն, քանի դեռ այն հիմնված է փաստերի վրա, որոնք ներկայացվում են բարեխղճորեն և ճշտությամբ:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրեր (public interest)

Շատ հաճախ վճռի դրական ելքը որոշվում է այն հանգամանքով, թե արդյոք հրապարակված նյութը ներկայացնում է հասարակական հետաքրքրություն: Սա միջազգային նորմերով ընդունված իրավական բարձր չափանիշ է, որը կարող է գերակշռել 10-րդ հոդվածի երկրորդ մասում տրված իրավաչափ նպատակները, որոնց սովորաբար հղում են կատարում պետական իշխանությունները խոսքի իրավունքը սահմանափակելիս: Սանդի Թայմսի գործով վճռի դրական ելքը պայմանավորված էր հենց այս չափանիշի կիրառումով: Թեև Անգլիայում դատաքննության ընթացքը լուսաբանելու իրավունքը սահմանափակող շատ խիստ նորմեր կան, այնուամենայնիվ Դատարանը որոշեց, որ քանի որ թերթը լուսաբանում էր մի դատավարություն, որտեղ վիճարկվող հարցերը գտնվում էին հասարակության ուշադրության կենտրոնում, ապա հասարակության տեղեկատվություն ստանալու իրավունքը գերակշռում էր »արդարադատության արդարացի իրականացման խնդրում պետության շահին«: Տվյալ դեպքում պետական շահ էր հանդիսանում դատաքննության լուսաբանումը կանխելը:³⁸

2. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանությունը

Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է.

³⁶ Տե՛ս Thorgerison v. Iceland գործով Եվրոպական դատարանի վճիռը (1992), 14 EHRR 843.

³⁷ Տե՛ս Դե Հաեսը և Գիյսելսն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 1997թ. վճիռը, կետ 47, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, Վճիռների ընտրանի (1978-2000թթ.) /4. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան. Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2002թ.:

³⁸ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1979թ. ապրիլ 26-ի , վճիռը, Շարք Ա, հատ. 30, կետ 65:

1. *Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչնդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային և կինոմատոգրաֆիական կազմակերպությունների լիցենզավորում:*

2. *Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Չոդվածի առաջին մասում տրված են իրավունքները, իսկ երկրորդ մասում՝ այդ իրավունքները սահմանափակելու հիմքերը: Այսինքն, արտահայտվելու ազատությունը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել պետության կողմից: Ինչպես նաև, որ ցանկացած սահմանափակում դեռ չի համարվում Կոնվենցիայի խախտում, եթե դրանք չեն կատարվել հետևյալ պահանջների խախտումով.

1. սահմանափակումը կատարվել է օրենքով սահմանված կարգով,
2. սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ,
3. սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում և «համաչափ» է հետապնդվող իրավաչափ նպատակին:

»Նախատեսված է օրենքով« արտահայտության կիրառումը կոնվենցիայի իմաստով մեկնաբանվում է հետևյալ կերպ.

ա. օրենքը պետք է ձևակերպված լինի պարզորոշ, որպեսզի նրանք, ում վրա ամենայն հավանականությամբ տարածվելու է տվյալ օրենքը, հնարավորություն ունենան հասկանալ այն և ըստ դրա կարգավորեն իրենց արարքները օրենքը խախտելուց խուսափելու համար: Սա կանխորոշելիության թեստն է,

բ. օրենքը պետք է լինի մատչելի և հասանելի,

Նշված սկզբունքները ավելի բազմակողմանիորեն ներկայացվել են Սանդի Թայմսի գործով վճռում

Ըստ Սանդի Թայմսի գործով վճռի.

»...«օրենքով նախատեսված» արտահայտությունից բխում են հետևյալ երկու պահանջները. առաջին՝ օրենքը պետք է լինի միևնույն չափով մատչելի՝ քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Երկրորդ՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա քաղաքացիներին

դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նա պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհուրդներից, հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը: Այդ հետևանքները պարտադիր չէ կանխատեսել բացարձակ ճշգրտությամբ. փորձը ցույց է տալիս, որ դա անկարելի է: Ավելին, չնայած որոշակիությունը շատ ցանկալի է, այն կարող է ուղեկցվել քարացածության հատկանիշներով, այն դեպքում, երբ օրենքը պետք է օժտված լինի փոփոխվող հանգամանքների հետ համընթաց գնալու ունակությամբ: Յետևաբար, շատ օրենքներում անխուսափելիորեն գործածվում են այնպիսի տերմիններ, որոնք ավելի կամ պակաս չափով անորոշ են. դրանց մեկնաբանումը և կիրառումը՝ պրակտիկայի խնդիր է»³⁹:

Օրենքի հաստատված և նշարելի լինելու պահանջը նշանակում է, որ գործադիրին տրված իրավական հայեցողությունը պետք է կազմված լինի այնպիսի ձևակերպումներով, որոնք գործադիրին չեն շնորհի անսահմանափակ իրավունք: »Այս իմաստով, օրենքը պետք է բավարար ճշգրտությամբ նշի հայեցողության ոլորտը և դրա կիրառման ձևը«:

Սահմանափակումը պետք է հետապնդի **»իրավաչափ նպատակ«**: 10(2) հոդվածում նշված են իրավաչափ նպատակների սպառիչ ցանկը, որոնք են.

- ազգային անվտանգություն,
- հասարակության անվտանգություն կամ տարածքային ամբողջականությունը,
- առողջության և բարոյականության պաշտպանությունը,
- անկարգությունների կամ հանցագործության կանխումը,
- այլ անձանց հեղինակությունն ու իրավունքների պաշտպանությունը,
- արդարադատության հեղինակության և անաչառության պահպանությունը,
- խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտման կանխում:

Ցանկացած այլ նպատակով կատարված սահմանափակումը առաջացնում է 10-րդ հոդվածի խախտում:

»Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում« արտահայտությունը նշանակում է, որ պատասխանող մասնակից պետությունը պետք է համոզիչ կերպով ցույց տա, որ սահմանափակումը պայմանավորված էր.

- սոցիալական սուր պահանջի առկայությամբ,
- օգտագործված միջոցները համաչափ էին հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ,
- սահմանափակումն արդարացված էր:

»Անհրաժեշտ« տերմինը նշանակում է «սոցիալական սուր պահանջի առկայություն»:⁴⁰ Սա չի նշանակում անփոխարինելի, միաժամանակ չի նույնանում «ողջամիտ» կամ «ցանկալի» բառերի հետ: Այն կարելի է բաժանել 3 բաղկացուցիչ մասերի, որոնք են.

1. արդյո՞ք կա սոցիալական սուր պահանջի առկայություն որոշ սահմանափակումների համար,

³⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 49:

⁴⁰ Տե՛ս Handyside v UK գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 1 EHRR 737:

2. եթե այո, արդյոք սահմանափակումը համապատասխանում է այդ պահանջին,
3. եթե այո, արդյոք դա համարժեք սահմանափակում է:

Չնայած «համաչափության» հասկացությունը կոնվենցիայում չի նշվում, այնուամենայնիվ այս սկզբունքը Դատարանի վճիռներում որոշիչ նշանակություն ունի: Սահմանափակումները չեն կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակարգում», եթե դրանք համարժեք չեն հետապնդվող իրավաչափ նպատակին⁴¹ :

Ըստ Դատարանի, անձի իրավունքների և հանրության շահի միջև անհրաժեշտ հավասարակշռության կարելի է հասնել միայն, եթե անձի նկատմամբ կիրառված սահմանափակումները համաչափ են իրավաչափ նպատակին: Սա նշանակում է որ ապացուցման ծանրությունը դրվում է պատասխանող մասնակից պետության վրա և ուստի, պետությունը պետք է «համոզիչ» կերպով ցույց տա, որ սահմանափակելու համար կիրառված միջոցներն ավելի հեռու չեն գնում, քան անհրաժեշտ է տվյալ նպատակին հասնելու համար:

Համաչափության սկզբունքը լայն կիրառություն ունի և կիրառվում է կոնվենցիայի մյուս հոդվածների առնչությամբ՝ հատկապես 8-ից 11-րդ հոդվածների:

Սահմանափակումը համարվում է արդարացված, եթե պետությունը, որպես պատասխանող կողմ, կարողանում է համոզիչ կերպով ցույց տալ, որ իրավունքը սահմանափակելու անհրաժեշտությունը արդարացված է և նպատակահարմար. այսինքն՝ ծառայում է իր նպատակին: *Observer and the Guardian v UK* վճռում Դատարանը գտավ, որ պետությունը հետապնդում էր իրավաչափ նպատակ գրքի հրապարակումը արգելելով, քանի որ դրա համար առկա էր սոցիալական սուր պահանջ: Սակայն որոշեց, որ նման արգելանքը այլևս անհրաժեշտ չէր, քանի որ գիրքն արդեն հասու էր հանրությանը ինտերնետի միջոցով:

Նեղ մեկնաբանության սկզբունքը

10(2) հոդվածում տրված սահմանափակումների ցանկը սպառիչ է⁴² և դրանք պետք է նեղ մեկնաբանվեն:⁴³ Իրավաչափ նպատակները չեն կարող պատճառ լինել այնպիսի միջոցներ կիրառելի համար, որոնք իրականում ավելի հեռահար նպատակներ են հետապնդում:⁴⁴ Եվրոպական դատարանը սահմանափակումներին բավականին խիստ մոտեցում է ցուցաբերում:

Պետությունների վրա է դրված է իրեն գործողությունները հիմնավորելու պարտավորությունը և այս իմաստով բոլոր սահմանափակումները պետք է նեղ ոլորտ ընդգրկեն: *Sunday Times v UK* գործով վճռում Դատարանը նշում է.

»Դատարանը կանգնում է ոչ թե երկու բախվող սկզբունքների միջև ընտրություն կատարելու փաստի առջև, այս խոսքի ազատության սկզբունքի առջև, որը հանդիսանում է մի շարք բացառությունների առարկա, որոնք իրենց հերթին պահանջում են սահմանափակ մեկնաբանություն...բավարար չէ, որպեսզի վիճարկվող միջամտությունը պատկանի բացառությունների

⁴¹ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1979թ. ապրիլ 26-ի , վճիռը, Շարք Ա, հատ. 30, տես:

⁴² Տե՛ս *Golder v UK* գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 1 EHRR 524:

⁴³ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1979թ. ապրիլ 26-ի , վճիռը, 2 EHRR 245:

⁴⁴ Եվրոպական կոնվենցիայի 18-րդ հոդվածը նշում է. «Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են»:

կատեգորիային, որոնք նշված են 10-րդ հոդվածի 2-րդ կետի ցանկում, բավարար չէ նաև, որ միջամտությունը տեղի է ունեցել այն պատճառով, որ հոդվածի բովանդակությունը հայտնվել է չափազանց ընդհանուր կամ բացարձակ արտահայտություններով ձևակերպված իրավական նորմի գործողության ոլորտում: Դատարանը պետք է հավաստիանա, որ միջամտությունը եղել է անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից քննության առնվող գործի շուրջ ստեղծված փաստերը և հանգամանքները»⁴⁵:

Այլ խոսքով, սահմանափակելու անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում որոշվում է յուրաքանչյուր գործի փաստերից ելնելով և ընդդեմ սահմանափակումների կանխավարկածի ներքո:

Հայեցողության իրավունք

Միջազգային իրավունքի տեսանկյունից՝ Եվրոպական դատարանը փաստերի և ապացույցների գնահատման հարցում ստորադաս է ազգային դատարանին: Առաջին հերթին ազգային իշխանությունների պարտականությունն է որոշել՝ տվյալ սահմանափակումը խախտում է Կոնվենցիան, թե՛ ոչ, կամ արդյոք տվյալ սահմանափակումը »անհրաժեշտ է«, »համաչափ է«, կամ դրա համար կա »սոցիալական սուր պահանջի« առկայություն, թե ոչ: Եվրոպական դատարանը ճշտում է միայն, իր վերահսկողության գործառույթը կիրառելով, արդյոք սահմանափակումը համարվում է Կոնվենցիայի խախտում: Սա կատարելիս, Դատարանը միշտ խուսափել է փաստերի և ապացույցների մասին իր գնահատականը փոխարինել փաստերին և ապացույցների ներպետական դատարանների տված գնահատականով: Ավելին, Եվրոպական դատարանը ներպետական դատարաններին »գործելու ազատություն« է ընձեռում, քանի որ կարծում, թե ազգային իշխանություններն ավելի նպաստավոր իրավիճակում են, քան միջազգային ատյանը: Այսինքն, Դատարանը ներպետական դատարաններին է տրամադրում փաստերի և ապացույցների գնահատման, իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը որոշելու »հայեցողության իրավունքը«: Ինչպես նշվում է Հանդիսայդի գործով վճռում.

*»...Պետական իշխանությունների դիրքն ավելի նպաստավոր է, քան միջազգային ատյանի դատավորինը՝ »սահմանափակման«
»անհրաժեշտության« մասին...կարծիք կազմելու համար...ազգային իշխանությունների վրա է դրված սոցիալական սուր պահանջի առկայության անհրաժեշտության վերաբերյալ առաջնային գնահատական տալու խնդիրը...այսպիսով՝ ներքին հայեցողության ոլորտը Եվրոպական վերահսկողության հետ ձեռք ձեռքի է ընթանում, ինչը ներառում է ինչպես որոշման հիմքում ընկած օրենքը, այնպես էլ՝ բուն որոշումը«:*

3. Հավաքների և միավորման ազատությունը

Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները ժողովրդավարական հասարակության արտահայտվելու համար հզոր միջոց են հանդիսանում: Այս հոդվածը ապացուցել է իր արդյունավետությունը, և Դատարանն էլ պետությունների վրա ապացուցման ծանր բեռ է դնում այս իրավունքներին միջամտելու դեպքում: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը պաշտպանում է խաղաղ հավաքների և այլոց հետ միավորվելու ազատության իրավունքները: Չնայած այս իրավունքները միմյանցից տարբերվում են, սակայն ընդգրկված են միևնույն հոդվածի մեջ, քանի որ նախատեսում են անձանց միավորվելու իրավունքը

⁴⁵ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1979թ. ապրիլ 26-ի , վճիռը, 2 EHRR 245:

ընդհանուր շահեր արտահայտելու կամ պաշտպանելու նպատակով: 11-րդ հոդվածը ավելի պարզորոշ է սահմանում անձանց միավորվելու և այլոց հետ շփվելու իրավունքները անձնական, տնտեսական, քաղաքական, մշակութային և սոցիալական շահեր պաշտպանելու նպատակով:

Սրանով է բացատրվում 10-րդ և 11-րդ հոդվածների սերտ կապվածությունը, որն ավելի պարզորոշ արտահայտվեց Young James and Webster v UK վճռում.

»...Անկախ իր ինքնուրույն դերից և կիրառելիության ոլորտից, 11-րդ հոդվածը, տվյալ գործում, պետք է նույնպես դիտարկվի 10-րդ հոդվածի լույսի ներքո: Կարծիքների պաշտպանությունը և դրանք արտահայտելու ազատությունը 11-րդ հոդվածով սահմանված հավաքների և միությունների կազմելու ազատությունների բաղկացուցիչ մասն է»⁴⁶:

2. Կոնվենցիայի 11-րդ հոդվածը սահմանում է.

1. *Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք, ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:*

2. *Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:*

Կոնվենցիայի 11-րդ հոդվածը, ի թիվս 8, 9 և 10 հոդվածների, մյուս հոդվածներից տարբերվում է նրանով, որ նշված հոդվածներով պետությանը հնարավորություն է ընձեռնվում միջամտել այդ իրավունքների իրականացմանը: Պետությունը իրավասու է միջամտել նշված իրավունքների իրականացմանը, սակայն դա կարող է իրականացվել միայն այն օրինաչափ նպատակների համար, որոնք նախատեսված են Կոնվենցիայի համապատասխան հոդվածների երկրորդ մասում: Այդ հոդվածների առաջին մասը սահմանում է իրավունքը, իսկ երկրորդ մասը՝ այն առանձնահատուկ դեպքերը, երբ տվյալ իրավունքը կարող է սահմանափակվել: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, պետության (պետական մարմինների) միջամտությունը արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը համապատասխանում է Եվրոպական կոնվենցիայի պահանջներին, եթե՝

4. այդ սահմանափակումն արվում է համաձայն օրենքին (տես հոդված 8 (3)); և օրենքով սահմանված կարգով (տես հոդված 9(2), հոդված 10 (2), հոդված 11 (2)),
5. սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդական հասարակությունում և այդ սահմանափակումը «համաչափ» է հետապնդվող նպատակին,
6. սահմանափակումն օրինական նպատակ է հետապնդում:

1. Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների սահմանափակումների իրավական հիմքը պետք է հիմնավորվի: Այս խնդիրը ենթակա է կարգավորման Եվրոպայի

⁴⁶ Տե՛ս Young James and Webster v UK գործով Եվրոպական դատարանի վճիռը (1982) 4 EH RR 38:

խորհրդի անդամ պետությունների ներքին օրենդրությամբ սահմանված կարգով: Եվրոպական կոնվենցիայի 11(2) հոդվածում նշված՝ **»նախատեսված է օրենքով«** արտահայտության կիրառումը կոնվենցիայի իմաստով մեկնաբանվում է հետևյալ կերպ՝

ա) Օրենքը կամ կիրառվող կանոնը պետք է մատչելի լինի, ընդ որում Եվրոպական դատարանը նշում է, որ **»օրենք«** բառը **»օրենքով նախատեսված«** ձևակերպման մեջ ներառում է ոչ միայն օրենքները, այլ նաև չգրված իրավունքը⁴⁷: Սա նշանակում է, որ մարդիկ, ում իրավունքները հնարավոր է որ սահմանափակվեն տվյալ օրենքով կամ կանոնով, պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ, թե ինչ սահմանափակում է նախատեսված տվյալ օրենքով կամ կանոնով⁴⁸:

2. **Սահմանափակումն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» և «համաչափ»** է հետապնդվող նպատակին: Սահմանափակումը պետք է ունենա օրինական նպատակ և համաչափ լինի հետապնդվող նպատակին: Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը հիմնավորելու համար պետք է ապացուցել, որ այն հետապնդում է հիմնավորված նպատակ և որ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Որպեսզի արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը դիտվի որպես ժողովրդավարական հասարակությանը անհրաժեշտ գործողություն, այն պետք է համապատասխանի հրատապ սոցիալական կարիքներին և համաչափ լինի հետապնդվող նպատակին:

»Համաչափության սկզբունքը«⁴⁹ կիրառվում է այն դեպքերում, երբ պետական մարմինները սահմանափակում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հավաքների և միավորման ազատության, ինչպես նաև մի շարք այլ իրավունքները՝ ավելի բարձր նպատակի հասնելու համար: Պետական մարմինները պարտավորվում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հոդվածի նկատմամբ սահմանափակում կիրառելու դեպքում ապացուցել, որ կիրառված սահմանափակումները չեն գերազանցում տվյալ կոնկրետ նպատակին հասնելու համար անհրաժեշտ սահմանը՝ եթե նույնիսկ հստակ է այն հանգամանքը, որ կոնվենցիայով երաշխավորված հոդվածների սահմանափակումը իրավաչափ նպատակ է հետապնդել⁵⁰:

3. Սահմանափակումը պետք է հետապնդի **»իրավաչափ նպատակ«**: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի սահմանափակումները կհամապատասխանեն կոնվենցիային այն դեպքում միայն, երբ դրանց նպատակը կոնվենցիայի 11(2)-րդ հոդվածով սահմանված իրավունքների և շահերի պաշտպանությունն է: Այդ շահերը ներառում են հետևյալը՝

- պետական անվտանգություն,
- հասարակության անվտանգություն,
- անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը,
- առողջության և բարոյականության պաշտպանություն,
- այլ անձանց իրավունքներն ու ազատությունների պաշտպանություն:

2. *Խաղաղ հավաքների ազատությունների իրականացման շրջանակները*

Խաղաղ հավաքների ազատության իրավունքը չպետք է նեղ մեկնաբանվի: Դատարանը սահմանել է, որ հավաքների իրավունքը ընդգրկում է ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային

⁴⁷ Տե՛ս Սանդի Թայմս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, կետ 47:

⁴⁸ Տե՛ս սույն Հուշագրում ներկայացված Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանություն ենթաբաժինը:

⁴⁹ **»Համաչափ«** բառը չի օգտագործվում ո՛չ Եվրոպական կոնվենցիայի տեքստում ո՛չ էլ դրան կից արձանագրություններում, սակայն **»Համաչափության սկզբունքը«** Եվրոպական դատարանի կողմից սահմանված մոտեցումն է մարդու իրավունքների պաշտպանությանը:

⁵⁰ Տե՛ս օրինակ Բարտոլդն ընդդեմ Գերմանիայի գործով Եվրոպական դատարանի 1984թ. հոկտեմբերի 25-ի վճիռը:

բնույթ ունեցող մջջոցաուսմները⁵¹: Այս իրավունքը տարածվում է ոչ միայն անհատների և մարդկանց խմբերի, այլ նաև կազմակերպությունների վրա⁵²: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի իմաստով ցույցերի, երթերի և հանրահավաքների անցկացումը հանրային մայրուղիների վրա թույլատրելի է⁵³: Երբ այս իրավունքն իրագործվում է հանրային մայրուղու վրա, պետք է հաշվի առնել նաև մայրուղին օգտագործող անձանց իրավունքը⁵⁴: Պետք է նկատի ունենալ, որ 11-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքի իրագործումը կարող է հանգեցնել երթևեկության որոշ խցանումների և, ուստի, դա պետք է համարել «իրավաչափ նպատակ»: Քանի դեռ այս իրավունքի օգտագործումը կատարվում է խաղաղ նպատակով և չի անցնում «խաղաղ» նպատակի խելամիտ սահմանները՝ հիմք ընդունելով կոնկրետ գործի փաստերը, ապա Եվրոպական դատարանը, իր կողմից զարգացրած նախադեպերով խրախուսում է հանդուրժողականության ցուցաբերումը նման խցանումների առնչությամբ:

Հավաքների ազատության իրավունքի իրականացման կարևորագույն հատկանիշներից մեկը դրա «խաղաղ» լինելու հանգամանքն է: Հանրահավաքի ընթացքում հանկարծակի առաջացած որոշ ընդվզումներ դեռ բավարար պայման չեն, որպեսզի հավաքը համարվի ոչ խաղաղ: Եթե հանրահավաքն անցկացվում է խաղաղ նպատակով սակայն նկատվում է միտում, որ տեղի են ունենալու անկարգություններ, 11-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքներն այնուամենայնիվ պետք է պաշտպանվեն: Նման դեպքերում այս իրավունքին ցանկացած միջամտություն պետք է կատարվի 11-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավաչափ նպատակներին համապատասխան:

Քանի դեռ հավաքն անցկացվում է խաղաղ նպատակով, կարևոր չէ, թե ինչ խնդիր է պատճառ հանդիսացել հավաքներ անցկացնելու համար: Պաշտպանվածության տակ են գտնվում նույնիսկ այնպիսի գաղափարները, որոնք ցնցող են կամ անհանգստացնում են հանրության որոշ շերտերին: Այս մոտեցումը սահմանվել է Դադջենն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում, որտեղ Դատարանը հայտարարեց հետևյալը.

«Չնայած հանրության այն անդամները, որոնք կարծում են, որ համասեռամոլությունն անբարոյականություն է, կարող են ցնցվել, վիրավորվել կամ անհանգստանալ այլ անձանց կողմից միմյանց հետ համասեռամոլությամբ զբաղվելու իրողությունից, այն չի կարող ինքնին հանգեցնել պատասխանատվություն կիրառելուն, եթե չափահաս անձինք իրենց համաձայնությամբ են նման գործողություններ կատարում»⁵⁵:

Arzte Fur das leben v. Austria գործով վճռում, Դատարանը սահմանեց.

«Հանրահավաքը կարող է ձանձրացնել կամ զայրույթ առաջացնել այն մարդկանց մոտ, ովքեր դեմ են այն գաղափարներին կամ պահանջներին, որոնք փորձ են արվում բարձրացվել տվյալ հանրահավաքով: Հանրահավաքի մասնակիցները պետք է այնուամենայնիվ հնարավորություն ունենան հանրահավաք անցկացնել առանց վախենալու, որ իրենց հակառակորդների կողմից կենթարկվեն ֆիզիկական բռնությունների. նման վախը կարող է հանգեցնել նրան, որ ընդհանուր գաղափարներ կամ շահեր հետապնդող կազմակերպություններին կամ մարդկանց կարող է ետ պահել

⁵¹ Տե՛ս Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1980) 21 DR 138:

⁵² Նույն տեղում:

⁵³ *Rassemblement juassien and United Jurassienne v. Switzerland* (1979) 17 DR 93 գործով որոշման մեջ Հանձնաժողովը սահմանեց, որ «...այս իրավունքները ընդգրկում են և մասնավոր տարածքում անցկացվող հավաքներ, և հանրահավաքներ, որոնք անցկացվում են մայրուղիներում»:

⁵⁴ Տե՛ս *MG v. Germany Appl. 13079/97* (1989) unreported.

⁵⁵ Տե՛ս Դադջենն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1982) 4 EHRR 1949:

հանրության վրա ազդեցություն գործող իրարամերժ հարցերի շուրջ իրենց կարծիքներն ազատորեն արտահայտելուց»⁵⁶:

Christians against **Racism and Facism** v UK գործով վճռում Դատարանը կատարել է հետևյալ պարզաբանումը այնպիսի դեպքերի վերաբերյալ, երբ հանրահավաքի մասնակիցները բախվում են մեկ այլ հանրահավաքի մասնակիցների հետ.

»Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խաղաղ հավաքների ազատության իրավունքը վերաբերում է յուրաքանչյուրին, ով խաղաղ հանրահավաք կազմակերպելու նտադրություն ունի: Հանձնաժողովի կարծիքով, հանրահավաքի ընթացքում մեկ այլ հանրահավաքի մասնակիցների կողմից անկարգությունների հնարավորությունը, կամ ծայրահեղորեն տրամադրված անձանց գործողությունները անկարգության կոչերով, որոնք տվյալ հանրահավաքը կազմակերպող միությանը կամ անձանց խնդրին չեն պատկանում, բայց միանում են տվյալ հանրահավաքին, չեն կարող այդպիսով զրկել անձանց հանրահավաք անցկացնելու կամ հանրահավաքին մասնակցելու իրավունքից: Նույնիսկ եթե գոյություն ունի իրական վտանգ, որ հանրային որևէ հավաք կարող է վերածվել անկարգությունների այնպիսի զարգացումների պատճառով, որոնք գտնվում են տվյալ հանրահավաքը կազմակերպողների հսկողությունից դուրս, այդպիսի հավաքները զուտ այդ պատճառով չեն կարող դուրս ընկնել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի գործողության ոլորտից«:

Քանի դեռ հանրահավաքի կազմակերպիչները կարողանում են հիմնավորել խաղաղ հավաք կազմակերպելու իրենց նտադրությունը, պետական իշխանությունները պարտավոր է ապահովել և պաշտպանել այս իրավունքի իրագործումը: Սա պետության վրա դնում է դրական (պոզիտիվ) պարտավորություն, որը կարող է սահմանափակվել միայն 11(2) հոդվածով:

բ) Պետությունների վրա դրված պոզիտիվ պարտավորությունները 11-րդ հոդվածի շրջանակներում

Պետության վրա դրված պարտավորությունները համարվում են դրական, որովհետև պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի ոչ միայն 11 հոդվածով տրված իրավունքները պաշտպանվեն, այլ նաև հնարավորություն տրվի դրանք արդյունավետորեն իրագործել: Նույն *Arzte Fur das leben v. Austria* գործով վճռում Դատարանը հստակ սահմանեց պետության վրա դրվող այս պարտավորությունը.

»Հանրահավաքը կարող է ձանձրացնել կամ զայրույթ առաջացնել այն մարդկանց մոտ, ովքեր դեմ են այն գաղափարներին կամ պահանջներին, որ փորձ են արվում բարձրացվել տվյալ հանրահավաքով: Հանրահավաքի մասնակիցները պետք է այնուամենայնիվ հնարավորություն ունենան հանրահավաք անցկացնել առանց վախենալու, որ իրենց հակառակորդների կողմից կենթարկվեն ֆիզիկական բռնությունների. նման վախը կարող է հանգեցնել նրան, որ ընդհանուր գաղափարներ կամ շահեր հետապնդող կազմակերպություններին կամ մարդկանց կարող է ետ պահել հանրության վրա ազդեցություն գործող իրարամերժ հարցերի շուրջ իրենց կարծիքները ազատորեն արտահայտելուց: Ժողովրդավարության պայմաններում հակընդդեմ հանրահավաքին մասնակցելու իրավունքը չի

⁵⁶ *St' u Arzte Fur das leben v. Austria* ի գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1988) 13 EHRR 204:

կարող արգելք հանդիսանալ հանրահավաքին մասնակցելու իրավունքն իրագործելու համար»:

»Խաղաղ հավաքների իսկական, արդյունավետ իրավունքը չի կարող նվազեցվել և հավասարեցվել պետության կողմից զուտ չմիջամտելու մի պարտականության: Այս հարցին զուտ բացասական մոտեցում ցուցաբերելը չի կարող համատեղելի համարվել 11-րդ հոդվածի առարկային և նպատակին: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի նման 11-րդ հոդվածը երբեմն պահանջում է ձեռնարկել դրական միջոցներ. նույնիսկ, անհրաժեշտության դեպքում, անհատների միջև հարաբերությունների շրջանակներում»⁵⁷:

Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքները կիրառելիս պետության վրա դրվում է պոզիտիվ (դրական) պարտավորություն, որովհետև.

- ա. Կոնվենցիայի 1-ին հոդվածը պետություններին պարտավորեցնում է իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները:
- բ. Կոնվենցիայով սահմանված իրավունքների ու ազատությունների ապահովումը պետությունների կողմից պետք է լինի գործնականում կիրառելի և արդյունավետ, և ոչ թե տեսական և վերացական⁵⁸:
- գ. Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիան խախտելու համար պետք է տրամադրել ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ:

11-րդ հոդվածը պետության վրա դնում է երկու առանձին պարտավորություն.

- ա. հավաքների ազատության իրականացմանը միջամտելուց ձեռնպահ մնալը,
- բ. ապահովել, որպեսզի նրանք, ովքեր ցանկանում են իրագործել իրենց 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը, ի վիճակի լինեն դա անել:

Հավաքների ազատությանը միջամտելուց ձեռնպահ մնալու պետության վրա դրված պարտավորությունը պետք է նեղ մեկնաբանվի և նման միջամտության անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի 11-րդ հոդվածի երկրորդ մասում տրված սահմանափակումների հիման վրա: Հավաքների ազատությանը պետության կողմից միջամտելը կարող է ընդգրկել հանրահավաքին մասնակցած անձին հանրահավաքից հետո պատասխանատվության ենթարկելը, այդ թվում քրեական, վարչական կամ կարգապահական: Միջոցառումից հետո անձին պատասխանատվության ենթարկելը, օրինակ քրեական գործ հարուցելը կամ կարգապահական տույժ նշանակելը, նույնքան 11-րդ հոդվածի միջամտություն է առաջացնում, որքան մասնակիցներին բռնի ուժով հանրահավաքից դուրս հանելը:

Անկարգությունները կանխելը 11-րդ հոդվածի՝ հավաքների ազատության իրավունքին միջամտելու իրավաչափ նպատակ է: Սակայն կարևորն այստեղ հավաքների ազատության և անկարգությունները կանխելու միջև հավասարակշռություն հաստատելն է: Նման հավասարակշռություն հաստատելը չպետք է հանգեցնի մի այնպիսի իրավիճակի, երբ անձինք ստիպված ձեռնպահ են մնում իրենց գաղափարները ազատորեն արտահայտելուց:

⁵⁷ St' u Arzte Fur das leben v. Austria գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1988) 13 EHRR 204:

⁵⁸ St' u Artico v Italy գործով Եվրոպական դատարանի վճիռը (1981) 3 EHRR 1:

Չնայած կարգազանցների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելը համարվում է իրավաչափ նպատակ, սակայն Եվրոպական դատարանի պրակտիկայում հազվադեպ է պատահում, երբ իրավաչափ են համարվում այն անձանց նկատմամբ կիրառված գործողությունները, որոնք ուղղակի չեն կարողացել տարանջատել իրենց գործողությունները այլ անձանց գործողություններից: Էզելին ընդդեմ Ֆրանսիայի գործում Դիմումատուն փաստաբան էր և մասնակցել էր մի հանրահավաքի: Մասնակիցների մի մասը հանրահավաքի մի որոշ պահի սկսեցին հանդես գալ ոստիկանության դեմ կոչերով և պատերին նկարներ նկարելով: Չնայած Դիմումատուն անձամբ չէր մասնակցել հակաօրինական գործողություններին, սակայն փաստաբանների միությունը Դիմումատուին ենթարկել էր կարգապահական պատասխանատվության այն հիմքով, որը նա իրեն չէր տարանջատել հանրահավաքի մասնակիցներից, որոնք անօրինական արարքներ էին թույլ տվել: Եվրոպական Դատարանը նման որոշումը համարեց 11-րդ հոդվածի խախտում: Չնայած ընտրվել էր նվազ խստության պատժաչափ, սակայն դա բարոյական վնաս էր և այդ իմաստով հանգեցնում էր հավաքների ազատության իրավունքի սահմանափակում: Չնայած անկարգությունների կանխումը իրավաչափ նպատակ է հետապնդում ըստ 11-րդ հոդվածի, սակայն հավաքների ազատության և անկարգությունները կանխելու միջև հավասարակշռություն հաստատելը չպետք է խոչընդոտի անձանց՝ իրենց հանդուժողները հստակորեն արտահայտելուն: *Arzte Fur das leben v. Austria* գործով վճռով Դատարանն ընդունեց պետության վրա դրված պոզիտիվ պարտավորության իրականացումը. իրավունքը պաշտպանելու նպատակով միջոցներ ձեռնարկելու հանգամանքը: Քայլեր ձեռնարկելիս պետությանը տրվում է նաև հայեցողության իրավունք: Պետության հիմնական պարտավորությունը կայանում է նրանում, որ արվի ամեն ինչ, որպեսզի ձեռնարկված միջոցները անձանց ապահովեն տվյալ իրավունքից օգտվելը: Դատարանն այս առումով նշել է.

»Չնայած անդամ պետությունների պարտականությունների մեջ է մտնում խելամիտ և համապատասխան միջոցներ կիրառելը օրինական հանրահավաքը խաղաղ անցկացնելու հնարավորություն ապահովելու համար, նրանք չեն կարող բացարձակ երաշխիքներ տրամադրել և այդ իմաստով նրանք ունեն հայեցողության լայն իրավունք միջոցների ընտրության հարցում: Այս առումով, Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նրանց վրա դրված պարտավորությունը միջոցների ընտրության պարտավորություն է, և ոչ թե պարտավորություն հասնելու այն արդյունքներին, որոնց նրանք ձգտում են«⁵⁹:

գ) խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումները ըստ 11(2) հոդվածի

Կոնվենցիայի 11(2) հոդվածը տրամադրում է հավաքների և միությունների ազատության սահմանափակումների հիմքերը: 11(2) հոդվածի սահմանափակումները հետևյալն են.

- ա. սահմանափակումները պետք է կատարվեն օրենքով նախատեսված կարգով:
- բ. անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, ի շահ պետական անվտանգությանը կամ հասարակության անվտանգությանը, անկարգությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:
- գ. Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

⁵⁹ Տե՛ս *Arzte Fur das leben v Austria* գործով Եվրոպական դատարանի վճիռը (1988) 13 EHRR 204:

Այս պայմանները սպառնիչ են⁶⁰ և պետք է նեղ մեկնաբանվեն⁶¹ : Իրավաչափ նպատակները չեն կարող որպես պատճառ հանդես գալ այնպիսի միջոցներ կիրառելու համար, որոնք իրականում այլ նպատակներ են հետապնդում: Եվրոպական դատարանը սահմանափակումներին բավականին խիստ մոտեցում է ցուցաբերում: Պետությունների վրա է դրված իր գործողությունները հիմնավորելու պարտավորությունը և այս իմաստով բոլոր սահմանափակումները պետք է նեղ ուղրտ ընդգրկեն: Այլ կերպ ասած, սահմանափակելու անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում որոշվում է յուրաքանչյուր գործի փաստերից ելնելով և ընդդեմ սահմանափակումների կանխավարկածի լույսի ներքո:

Այս լույսի ներքո, բոլոր սահմանափակումները պետք է.

ա. լինեն օրենքով նախատեսված կարգով: Սա նշանակում է.

1. սահմանափակումների օրինական հիմքերը պետք է լինեն բառացիորեն ձևակերպված, նշմարելի և հաստատված,
2. օրենքը պետք է լինի հասանելի: Այսինքն, նրանք, ում վրա տարածվել է սահմանափակումը, պետք է ի վիճակի լինեն պարզել, թե ինչ է ասում օրենքը և,
3. օրենքը պետք է կազմված լինի բավական պարզորոշ, որպեսզի նրանք, ում վրա ամենայն հավանականությամբ տարածվելու է տվյալ օրենքը, հնարավորություն ունենան հասկանալ այն և ըստ դրա կարգավորեն իրենց արարքները օրենքը խախտելուց խուսափելու համար: Սա կանխորոշելիության թեստն է:

Maestri v Italy գործում Դիմումատուն դատավոր էր, որին աշխատանքից ազատել էին մի կազմակերպության անդամակցելու համար: Դատարանն այս գործում կատարել է հետևյալ հայտարարությունը.

«...Դատարանը նորից շեշտում է, որ օրենքով նախատեսված կարգով կամ ըստ օրենքի» ձևակերպումները Կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածներում ոչ միայն պահանջում են, որպեսզի վիճարկվող միջոցը ներպետական օրենսդրության մեջ ունենա որոշակի հիմքեր, այլ նաև վերաբերվում են վիճարկվող օրենքի որակին: Օրենքը պետք է լինի մատչելի և ձևակերպված բավական ճշգրտությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրան համապատասխանեցնել իր վարքագիծը. նա պետք է հնարավորություն ունենա հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ արարքը»⁶²:

բ. հետապնդել իրավաչափ նպատակ, որոնք են ազգային անվտանգությունը և հանրային անվտանգությունը պաշտպանելը, անկարգությունները կանխելը....

գ. և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում: «Անհրաժեշտ» նշանակում է «սոցիալական սուր պահանջի առկայություն»⁶³: Սա չի նշանակում անփոխարինելի, միաժամանակ չի նույնանում «ողջամիտ» կամ «ցանկալի» բառերի հետ: Այն կարելի է բաժանել 4 բաղկացուցիչ մասերի, որոնք են.

- արդյո՞ք կա սոցիալական սուր պահանջի առկայություն սահմանափակումների համար,

⁶⁰ Տե՛ս Golder v UK գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 1 EHRR 524:

⁶¹ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 2 EHRR 245:

⁶² Տե՛ս Maestri v Italy գործով Եվրոպական դատարանի վճիռը, 3974/98, 17/02/2004:

⁶³ Տե՛ս Յանդիսայդն ընդդեմ Միավորված Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 1 EHRR 737:

- եթե այո, արդյո՞ք սահմանափակումը համապատասխանում է այդ պահանջին,
- եթե այո, արդյո՞ք դա համարժեք սահմանափակում է,
- բոլոր դեպքերում, արդյո՞ք իշխանությունների կողմից սահմանափակումների համար առաջ քաշված պատճառները »նպատակահարմար են և բավարար«:

Ակնհայտ, որ սահմանափակումները չեն կարող համարվել »անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում«, եթե դրանք համարժեք չեն հետապնդվող իրավաչափ նպատակին⁶⁴: 11-րդ հոդվածի ցանկացած սահմանափակում արդարացնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են համարժեքությունը, առկա վտանգը և գործի փաստերը: Եզեյիս ընդդեմ Ֆրանսիայի գործում Դատարանը հայտարարեց.

».... Որպեսզի միջամտությունը անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, այն պետք է համարժեք լինի իր նպատակներին, որոնք նշված են 11(2) հոդվածում: Սա նշանակում է, որ պետք է հավասարակշռություն հաստատել այդ նպատակների և արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության հատուկ և շատ կարևոր իրավունքների միջև: Դա նշանակում է, որ այդ ազատությունների սահմանափակումը ցանկացած ձևով անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, բացառությամբ եթե անձը դատապարտելի արարք է թույլ տվել իր իրավունքներն իրագործելիս«:

»...Սա նշանակում է, որ պետք է հավասարակշռություն հաստատել այդ նպատակների և արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության հատուկ և շատ կարևոր իրավունքների միջև: Դա նշանակում է, որ այդ ազատությունների սահմանափակումը ցանկացած ձևով անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, բացառությամբ եթե անձը հակաօրինական արարք է թույլ տվել իր իրավունքներն իրագործելիս«⁶⁵:

»Սոցիալական սուր պահանջ« արտահայտությունը հստակ սահմանված չի, սակայն քանի դեռ իշխանությունները ցույց չեն տալիս խիստ անհրաժեշտության առկայություն, քիչ հավանական է, որ կարելի է հղում կատարել այս չափանիշի վրա: Observer and the Guardian v UK վճռում Դատարանը սահմանեց, որ պետական իշխանությունները իրավաչափ նպատակ են հետապնդել գրքի հրատարակումը արգելելով, սակայն հաշվի առնելով, որ գիրքն արդեն հասու էր հանրությանը, Դատարանը համարեց, որ նման արգելանքն այլևս անհրաժեշտ չէ:

Դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է երթերը և հավաքները արգելելու վերաբերյալ անդամ պետությունների համապատասխան մարմինների կողմից կայացված որոշումներին⁶⁶: Հանձնաժողովը Christians against racism and Fascism v UK իր կայացրած որոշման մեջ սահմանել է, որ հանրահավաքի ընթացքում մեկ այլ հանրահավաքի մասնակիցների կողմից անկարգությունների հնարավորությունը, կամ ծայրահեղորեն տրամադրված անձանց անկարգություն հրահրողները, որոնք տվյալ հանրահավաքը կազմակերպող միությանը կամ անձանց խմբին չեն պատկանում, բայց միանում են տվյալ

⁶⁴ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 2:

⁶⁵ Տե՛ս Enzelin v France գործով Եվրոպական դատարանի վճիռը (1992) 14 EHRR 362:

⁶⁶ Տե՛ս Զրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1980) 21 DR 138:

հանրահավաքին, չեն կարող այդպիսով զրկել անձանց հանրահավաք անցկացնելու կամ հանրահավաքին մասնակցելու իրավունքից:

Հանրահավաքների վրա դրվող ընդհանուր արգելքը կարող է անհրաժեշտ համարվել միայն այն դեպքում, եթե առկա է իրական վտանգ, որ հանրահավաքը վերածվելու է անկարգությունների, որոնք հնարավոր չէ կանխել ավելի մեղմ միջոցներով: Բայց անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր փաստերը, այդ թվում արգելելու ժամկետները, հանրահավաքի մասնակիցների վրա դրանց ազդեցությունը՝ դա համեմատելով անվտանգության համար միջոցներ ձեռնարկելու դրդապատճառների հետ:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանվող երկրորդ իրավունքը, այլոց հետ միավորվելու իրավունքը, չի սահմանափակվում միայն արհմիություններով. չնայած այն հանգամանքին, որ 11-րդ հոդվածում օգտագործված է հենց այս բառը որպես պաշտպանության տակ գտնվող մի շարք իրավունքների տարատեսակ: Այն ընդգրկում է այլոց հետ միավորվելու ազատությունը, որն անհրաժեշտ է ընդհանուր շահեր պաշտպանելու համար: Այս շահերն ընդգրկում են նաև իրավունքներ, որոնք պաշտպանվում են նաև 10-րդ հոդվածով: Սույն Հուլիսագրում մանրամասն անդրադարձ չի կատարվի միավորման ազատության իրավունքի իրականացմանը, քանի որ այն ուղղակի կապ չունի Մրցույթի դատական գործի փաստերի հետ:

4. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է.

Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի բովանդակությունն արդեն իսկ հուշում է այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի հիմնական նպատակներից բացի, այն է՝ մարդկանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Կոնվենցիայով պարտավորություն է դրվում անդամ պետությունների վրա ապահովելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ և ընդգծվում է մարդու իրավունքների պաշտպանության հարցում Եվրոպական դատարանի օժանդակ լինելու հանգամանքը՝ ինչը նպաստում է ազգային մակարդակներում իրավական պետության կայացմանն ու մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը:

Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1-ին բաժնում»: Կոնվենցիայի այս հոդվածով երաշխավորված անդամ պետությունների այս պարտավորությունը, իր ուղղակի ազդեցությունն է գտնում Կոնվենցիայի 13-րդ հոդվածում:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության պարտավորությունը նախ և առաջ դրված է կոնվենցիայի անդամ պետությունների վրա: Դատարանը Հանդիսայդն ընդդեմ Միավորված Թագավորության գործում նշել զարգացրել է այս մոտեցումը և սահմանել է, որ Կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների պաշտպանության համակարգը սուբսիդիար է: Կոնվենցիայի համաձայն բոլոր բարձր պայմանավորվող կողմերը ստանձնում են պարտավորություն՝ առաջին հերթին ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Կոնվենցիայի համաձայն ստեղծված մարմինները ունեն իրենց ներդրումը այս պարտավորության կատարման հարցում, սակայն դրանք ներգրավվում են այդ

գործընթացում շարունակական հիմունքներով և երբ սպառվել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները:

Դատարանը բազմիցս սահմանել է, որ միջազգային իրավունքի համաձայն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցների սպառման կանոնը պահանջում է, որպեսզի Դիմումատուին հնարավորություն ունենա արդյունավետ »կիրառել« իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները և օգտվել իր իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր հնարավոր միջոցներից:

Հատկանշական են Կոնվենցիայի 13-րդ հոդվածի տեքստում ամրագրված »...իրավական պաշտպանության արդյունավետ միջոց«, և »...եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք« հասկացությունները, որոնք կարևոր նշանակություն և դեր են ունենում դատարանի կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման փաստը ուսումնասիրելու համար համապատասխան թեստ կիրառելիս:

Դատարանի պրակտիկան ցույց է տալիս, որ Դատարանը նման հարցերը դիտարկելիս կիրառում է հետևյալ թեստը.

1. Արդյո՞ք 13-րդ հոդվածը կիրառելի է կոնկրետ գործում.

Այս հարցը դիտարկելիս հատկանշական է այն հանգամանքը, որ 13-րդ հոդվածի խախտում արձանագրվում է բացառապես այն դեպքում, երբ Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի կամ ազատության խախտում է քննարկվում: Միաժամանակ 13-րդ հոդվածը կիրառելի չէ այն դեպքերում, երբ վիճարկվում են Կոնվենցիայի 5 (4) և 6(1) հոդվածների խախտումները:

Ինչպես Կոնվենցիայի նորմերը, այնպես էլ Դատարանի կողմից մշակված ստանդարտները պարտավորություններ չեն սահմանում անդամ պետությունների՝ Եվրոպական Կոնվենցիան իրենց ազգային օրենսդրություններում ներառելու համար⁶⁷:

2. Եթե 13-րդ հոդվածը կիրառելի է, ա՞նկա է արդյոք այդ իրավունքի խախտում.

Չնայած Կոնվենցիայի 13-րդ հոդվածի տեքստի ձևակերպմանը, այն առումով որ 13-րդ հոդվածի կիրառելիությունը պայմանավորված է կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքի կամ ազատության խախտումը վիճարկելու հետ, Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով առավել կարևորվում է Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքի իրականացումը⁶⁸:

Եվրոպական դատարանը սահմանում է, որ »...13-րդ հոդվածին համապատասխան, պահանջվող իրավական պաշտպանության միջոցները պետք է լինեն »արդյունավետ« և՛ գործնականում, և՛ օրենքով, մասնավորապես այն առումով, որ դրանց օգտագործմանը չպետք է անհիմն կերպով խոչընդոտեն Պատասխանող մասնակից պետության իշխանությունների գործողությունները կամ, ընդհակառակը, անգործությունը«⁶⁹: Այս դրույթի մեկնաբանում էլ բերում է Դատարանի կողմից կիրառող հաջորդ թեստին, այն է՝

3. Արդյո՞ք իրավական պաշտպանության միջոցը արդյունավետ է.

Իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը պարզելու համար Եվրոպական դատարանը հստակ մեխանիզմներ է մշակել, որոնք առաջին հերթին ուղղված են բացահայտելու »իրավական պաշտպանության միջոցի «արդյունավետ» լինելու և

⁶⁷ Տե՛ս Իռլանդիան ընդդեմ Միավորված Թագավորության գործով Եվրոպական Դատարանի վճիռը, (1979-1980) 2 EHRR 25. Տե՛ս նաև Շցեդիայի վարորդների միությունն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-1980) 1 EHRR 617:

⁶⁸ Տե՛ս Սիլվերն ընդդեմ Միավորված Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1983) 5 EHRR 347.

⁶⁹ Տե՛ս Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 96: Տե՛ս նաև Ղայան ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 1998թ. վճիռը, կետ 106:

»իրավունքը խախտող ի պաշտոնե գործող անձի« ներքին օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության պատշաճ սուբյեկտ լինելու հանգամանքները:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ Դատարանի կողմից 13-րդ հոդվածին առնչվող գործերի ուսումնասիրության հարցերում չկա միասնական մոտեցում: Դատարանը Ղայան ընդդեմ Թուրքիայի գործում սահմանել է, որ. »... 13-րդ հոդվածի հիման վրա կարելի է պահանջել պաշտպանության ներպետական միջոց, որպեսզի գանգատը լուծվի ըստ էության՝ Կոնվենցիային համապատասխան, և վերականգնվի խախտված իրավունքը, թեև մասնակից պետություններին տրամադրվում է հայեցողության որոշակի ուղորտ այն առումով, թե նրանք ինչպես են կատարում այդ հոդվածով սահմանված իրենց պարտավորությունները...«⁷⁰:

Դատարանն այս մոտեցումը առավել ցայտուն և հստակ ձևով արտահայտել է Լիանդերն ընդդեմ Շվեդիայի գործում, որտեղ Դատարանը նշել է, որ գաղտնի հսկողության դեպքում Կոնվենցիան երաշխավորում է իրավական պաշտպանության այնքան արդյունավետ միջոց, որքան որ հնարավոր է ապահովել⁷¹: Եվրոպական դատարանը Քլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով վճռում սահմանեց հետևյալ դիրքորոշումը.

»...Դատարանն արդեն նշել է, որ հենց միջոցառումների գաղտնիության հետևանքով է, որ շահագրգռված անձին դժվար է, իսկ երբեմն նույնիսկ անհնար՝ սեփական նախաձեռնությամբ հասնել իրավական պաշտպանության որևէ միջոցի, հատկապես, եթե հսկողությունը դեռ շարունակվում է [ընթացքի մեջ է]... Գաղտնի հսկողությունը և դրա հետևանքները փաստեր են, որոնք Դատարանը, չնայած ավստոսանքով, ճանաչել է անհրաժեշտ՝ ժողովրդական հասարակության արդի պայմաններում, պետական անվտանգության և անկարգությունների ու հանցագործությունների կանխարգելման շահերից ելնելով: ... Կոնվենցիան պետք է ընկալել որպես մեկ ամբողջություն, և այդ պատճառով, ինչպես իր զեկուլյցում նշել է Յանձնաժողովը, 13-րդ հոդվածի ցանկացած մեկնաբանություն պետք է համաձայնեցվի Կոնվենցիայի տրամաբանության հետ...«⁷²:

Չնայած այս հանգամանքին, Դատարանը միաժամանակ հիշեցնում է, որ հիմնարար իրավունքների խախտման փաստը քննարկելու դեպքում նման մոտեցումը ենթակա է առավել խորը ուսումնասիրման: Դատարանը Չահալն ընդդեմ Միավորված Թագավորության գործում սահմանել է, որ իրավական պաշտպանության միջոցի հնարավոր արդյունավետության մոտեցումը չի կարող կիրառվել այն դեպքում, երբ մարդու արտաքսումը կարող է ռիսկ առաջացնել կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելում) խախտման առումով:

Եվրոպական դատարանը Քլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով վճռում «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» սահմանումը բնորոշել է հետևյալ մեկնաբանությամբ. »...սույն քննության նպատակների համար »իրավական պաշտպանության արդյունավետ միջոց«-ը 13-րդ հոդվածի իմաստով, իրենից պետք է ներկայացնի մի միջոց, որը, գաղտնի հսկողության ցանկացած համակարգին բնորոշ բողոքարկման սահմանափակ հնարավորությունները հաշվի առնելով՝ առավելագույնս արդյունավետ կլինի ...«⁷³:

Հատկանշական է այն հանգամանքը, որ 13-րդ հոդվածի իմաստով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը չի ենթադրում միայն դատարանները: Այն դեպքերում երբ առկա չէ դատական պաշտպանության որևէ մեխանիզմ, ապա Եվրոպական Դատարանը՝ այդ մարմնի կողմից արդյունավետ պաշտպանություն ապահովելու հարցը դիտարկելիս

⁷⁰ Տե՛ս Ղայան ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 1998թ. վճիռը, կետ 106:

⁷¹ Տե՛ս Լիանդերն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1987) 9, EHR 133.

⁷² Տե՛ս Քլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 161:

⁷³ Նույն տեղում, կետ 69:

հաշվի է առնում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են որոշում կայացնող մարմնի անկախությունը, ուժը, կայացրած որոշման պարտադիր լինելու հանգամանքը: Գովելն ընդդեմ Միավորված Թագավորության գործում Կոմիտեն հաշվի է առել այն փաստը, որ Ոստիկանության համապատասխան մարմինը արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ չի ապահովել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով, քանի որ այն բավարար անկախություն չուներ: Մեկ այլ կարևոր հանգամանք է Դատական պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը 13-րդ հոդվածի իմաստով, որը ենթակա է խորը ուսումնասիրության յուրաքանչյուր կոնկրետ գործում:

5. Խտրականության արգելումը

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կարևորագույն դեր ունի խտրականության բացառումը: Այս դրույթը սահմանված է մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջազգային մեխանիզմներում և մի շարք կոնվենցիաներում, որոնք ուղղված են խտրականության բացառմանը: Նման կոնվենցիաների թվին են դասվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառման մասին 1979թ. կոնվենցիան, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1966 թ. միջազգային կոնվենցիան, Կրթության բնագավառում խտրականության դեմ 14 դեկտեմբերի 1960թ. կոնվենցիան և այլն:

Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը երաշխավորում է խտրականության բացառումը և այն մասնավորապես սահմանում է.

Սույն կոնվենցիայով շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

14-րդ հոդվածի իմաստով հետևյալներն են այն հարցերը, որոնց առկայության դեպքում հնարավոր են խտրականության դրսևորումներ. սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ դրությունը: Եվրոպական դատարանը իր կողմից կայացված վճիռներում զարգացրել է «այլ դրություն» հասկացության տակ ընկնող չափանիշները, որոնք մասնավորապես ներառում են սեռական կողմնորոշումը, անուսնական վիճակը, մասնագիտական կարգավիճակը, դատվածության փաստի առկայությունը, հաշմանդամ լինելու փաստը:

14-րդ հոդվածով երաշխավորված «խտրականություն» հասկացությունը չի ներառում բոլոր տիպի խտրականությունների բացառումը, այն մասնավորապես վերաբերում է կիրառվող մոտեցումների և կայացվող որոշումների տարբերություններին, որոնք պայմանավորված չեն ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորումներով: 14-րդ հոդվածի իմաստով խտրականության դրսևորումները հիմնականում արտահայտվում են.

1. կիրառվող միջոցի, այդ թվում դատական, վարչական մարմնի կամ այլ համապատասխան մարմնի որոշման կայացման նպատակով ու ազդեցությամբ,
2. կիրառվող միջոցի և հայցվող նպատակի միջև համաչափության ողջամիտ կապի առկայությամբ:

Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Դատարանը 14-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտումների հարցը քննարկելիս հիմք է ընդունում հետևյալը.

1. Արդյո՞ք կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը ունի կիրառության երկու մակարդակ: Նախ այն կիրառվում է այն դեպքերում, երբ գործում հստակ ամրագրված են Եվրոպական կոնվենցիայով և Կոնվենցիային կից արձանագրություններով երաշխավորված որևէ իրավունքի կամ ազատության խախտում: Այս սկզբունքը իր հստակ արտահայտությունն է գտել Abdulaziz, Cabales and Balkandali-ի գործում, երբ Դիմումատուները, բողոքում էին այն փաստի կապակցությամբ, որ իրենց ամուսիններին իրավունք չի տրվել մուտք գործել Միավորված Թագավորություն, այն դեպքում, երբ իրենք Միավորված Թագավորությունում ժամանակավոր բնակության իրավունք ունեին: Եվրոպական դատարանը չի արձանագրել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) խախտում, սակայն արձանագրել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 8-րդ հոդվածի հետ համատեղ:

Սակայն միևնույն ժամանակ կոնվենցիայի խախտում կարող է արձանագրվել նաև անկախ կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտման փաստից⁷⁴:

4. Եթե կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը, ապա ա՞ռկա է խտրականության տարր.

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության տարրերի առկայության փաստի ապացուցման համար անհրաժեշտ է համեմատության միջոցով հայտնաբերել և ցույց տալ տարբեր մարդկանց նկատմամբ տարբեր որոշումների կայացումը, այն դեպքում երբ առկա են միևնույն հանգամանքներն ու փաստերը: Այս մոտեցումը դատարանը առավել հստակ զարգացրել է Ֆրեդին ընդդեմ Շվեդիայի գործում⁷⁵: Եվրոպական դատարանը Belgian Linguistics գործում նշել է. «...14-րդ հոդվածի իմաստով Դիմումատուն է կրում պարտավորություն ապացուցելու հնարավոր խտրականության, մասնավորապես միևնույն կանոնի կիրառման տարբերությունները տարբեր կարգավիճակի և [անձանց] դեպքերում...»⁷⁶: Այս ապացուցելու համար անհրաժեշտ է հիմնավոր կերպով ներկայացնել որ տարբեր մարդկանց նկատմամբ, որոնց դեպքում առկա են եղել միևնույն հանգամանքները, փաստերն և իրավիճակները այլ մոտեցում, այդ թվում դատարանի կամ վարչական մարմնի որոշում է կայացվել: Նման տարբերության ապացուցմանը պետք է հետևի դրա հիմնավորումը որը, որպես կանոն, դժվար գործընթաց է:

5. Եթե առկա է խտրականության տարր, ապա դա հետապնդում է իրավաչափ նպատակ

Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր դեպքերում տարբեր որոշումների կայացումը միևնույն իրավիճակներում և միևնույն հանգամանքների առկայության դեպքում, կարող է հանգեցնել խտրականության: Նման տարբերության դեպքում խտրականության տարրերի առկայությունը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին թե արդյո՞ք խնդրո առարկա տարբերությունները ունեն «ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում»⁷⁷: Այս հարցում Դատարանը առավել ուշադրություն է դարձնում պետություններին տրվող հայեցողության որոշակի դաշտին, քանզի ազգային իշխանությունների դերը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում տարբերվում է միջազգային կամ տարածաշրջանային մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Տարբերություններից հիմնականը կայանում է նրանում, որ ազգային իշխանությունների վրա է

⁷⁴ St' u Jacobs and White, The European Convention on Human Rights Clarendon Press, 1966 pp 285-286:

⁷⁵ St' u Ֆրեդին ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (1991) 13 EHRR 784:

⁷⁶ St' u Belgian Linguistics case (No 2) (1979-80) 1 EHRR 252, կետ 9:

⁷⁷ Նույն տեղում, 1 EHRR, 241:

դրված առաջնային պարտավորությունը ապացուցել, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակումը համապատասխանում է Կոնվենցիայի նորմերին, այն է՝ սահմանափակման իրավաչափ նպատակ հետապնդելը, սուր սոցիալական պահանջներին սահմանափակման համապատասխանությունը և սահմանափակման անհրաժեշտ և համաչափ լինելը: Եվրոպական դատարանի դերը այս հարցում կայանում է նրանում, որ այն դիտարկում է համապատասխան ներպետական ատյանների կողմից կատարված սահմանափակումների համապատասխանությունը Կոնվենցիայի պահանջներին և նորմերին⁷⁸:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության առկայության և դրա իրավաչափ նպատակ հետապնդելու հարցում Դատարանի մոտեցումը սահմանափակվում է կոնկրետ սահմանափակման անհրաժեշտ լինելու հանգամանքի բացահայտմամբ՝ հիմք ընդունելով գործի փաստերը, սահմանափակման իրավաչափ նպատակ հետապնդելն ու դրա համաչափ լինելու հանգամանքը, ինչն ուղղված է անհատի իրավունքների պաշտպանության և հասարակության շահերի միջև «արդարացի հավասարակշռություն» սահմանելուն:

⁷⁸St'u Keir Starmer, European Human Rights Law. The Human Rights Act 1998 and the European Convention on Human Rights, Leal Action Group, 1999, para 4.90, p. 187:

ՄԱՍ IV. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մասում կվերլուծվեն Դատական գործով «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերը ներկայացնող թիմերի կողմից Սրցույթում ներկայացվելիք հիմնական հավանական փաստարկներն ու այդ կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներում արտացոլված հիմնական ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները: Վերլուծությունը ներկայացված է Սրցույթի Դատական գործի 30 և 31-րդ կետերում ներառված Դիմումատուի և Պատասխանող մասնակից պետության խնդրանքի համապատասխան:

Դատավորներին խորհուրդ է տրվում չսահմանափակվել սույն մասում տրված վերլուծություններով և ուսումնասիրել նաև սույն Յուլազգրի III բաժնում Կոնվենցիայի 6-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների վերաբերյալ վերլուծությունը: Ստորև ներկայացված փաստարկներն այն հիմնական փաստարկներն են որոնք սռանցքային նշանակություն ունեն գործի լուծման համար և որոնց թիմերը կարող են անդրադառնալ, սակայն չի բացառվում թիմերի կողմից այլ փաստարկների ներկայացումը:

ա). Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները (Դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը) խախտել են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իր արտահայտվելու ազատության իրավունքը՝ ներառյալ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու և տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածները, սովորաբար, հանդես են գալիս միասին, եթե գործի փաստերը վերաբերվում են հավաքների ազատության սահմանափակմանը: Ուստի, Դիմումատուն կարող է հաջողությամբ վիճարկել նույն փաստարկները երկու հոդվածների շրջանակներում:

10-րդ հոդվածով տրվող իրավունքների խախտումը Դիմումատուն կարող է վիճարկել միայն քրեական գործով վարույթի շրջանակներում: Ընդհանուր առմամբ, Դիմումատուի դիրքերն ավելի նպաստավոր են քրեական գործով վարույթի առնչությամբ, և հակառակը՝ ավելի թույլ են վարչական վարույթի առնչությամբ: Որոշիչ նշանակություն է ձեռք բերում այն հանգամանքը, թե որ դեպքում է պետությունը գործել «համաչափորեն»։ այսինքն՝ պահպանել 10-րդ և 11-րդ հոդվածների ամենակարևոր չափանիշներից մեկը՝ իրավունքը սահմանափակելու համար օգտագործված միջոցների «համաչափությունը» հետապնդվող իրավաչափ նպատակին(ներին): Քրեական վարույթում Դիմումատուն ենթարկվել էր ազատազրկման, որը Պատասխանող մասնակից պետության դիրքերը թուլացնում է, իսկ վարչական վարույթում Դիմումատուն ենթարկվել էր միայն նվազագույն տուգանքի, որը Պատասխանող մասնակից պետության դիրքերն ամրացնում է:

10-րդ հոդվածը վիճարկելիս, Դիմումատուները սովորաբար պնդում են, որ իրավունքները խախտվել են, քանի որ սահմանափակումները

1. չեն կատարվել օրենքով սահմանված կարգով, կամ,
2. չեն հետապնդել 10(2) կետում նշված իրավաչափ նպատակներից մեկը կամ մի քանիսը, կամ,
3. անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում:

Տվյալ գործի փաստերից ելնելով, ավելի նպատակահարմար է, որպեսզի Դիմումատուն վիճարկի երրորդ չափանիշը: Սակայն, համոզիչ փաստարկներ բերելու դեպքում հնարավոր է, որ Դիմումատուն կարողանա հաջողությամբ ցույց տալ, որ իրավախախտումներ տեղի են ունեցել նաև առաջին երկու չափանիշների առնչությամբ:

Վիճարկելով «օրենքով սահմանված կարգով» չափանիշը, Դիմումատուն պետք է պնդի, որ քրեական մեղադրանք առաջադրելը չի կատարվել «օրենքով սահմանված կարգով», քանի որ Քրեական օրենսգրքի 315, 316 և 318 հոդվածները պարզ և հստակ ձևակերպված չեն և որ դրանք հնարավորություն չեն տալիս անձին կանխորոշելու իր գործողությունները այնպես, որպեսզի խուսափեն պետական պաշտոնյային վիրավորանք հասցնելուց կամ զրպարտելուց. հատկապես կարծիք հայտնելիս: Այս իմաստով, նպատակահարմար է, որպեսզի Դիմումատուն հղում կատարի Սանդի Թայմսի գործով վճռին, որում տրվել է «օրենքի» և «օրենքի որակ» հասկացությունների ձևակերպումը. մասնավորապես՝ օրենքի «մատչելիության» և «հստակության» չափորոշիչները:

Դիմումատուի հաջորդ քայլը պետք է լինի վիճարկել, որ նշված սահմանափակումները չէին հետապնդում 10(2) կետի իրավաչափ նպատակներից առնվազն մեկը, քանի որ դրանք իրականում հետապնդում էին այլ, «ավելի հեռուն» գնացող նպատակներ: Որպես օրինակ, կարել է նշել ազատ խոսքի սահմանափակումը, կոռուպցիան թաքցնելը, վիճահարույց հարցերի շուրջ հասարակական բանավեճի խթանումը կանխելը և այլն: Սակայն, դրանք կլինեն ավելի շատ վերացական հայտարարություններ՝ զուրկ փաստացի հիմքերից: Այդ պատճառով Դատարանը կարող է դրանք հիմնավորված չհամարել: Իսկ Պատասխանողը կարող է հեշտությամբ հենվել 10(2) կետի մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակների վրա, (այլ անձանց իրավունքների պաշտպանություն կամ անձի հեղինակության պաշտպանություն) իր պնդումները հանդիչ կերպով հիմնավորելու համար: Առավել ևս, որ դրանց համար առկա են փաստացի հիմքեր:

Դիմումատուն կարող է հաջողությամբ վիճարկել «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» չափանիշը: Դիմումատուն պետք է նշի, որ քրեական մեղադրանք առաջադրելու և մեկ տարով ազատազրկելու համար չկար «սոցիալական սուր պահանջի առկայություն», որ մեկ տարվա ազատազրկումը և նույնիսկ քրեական մեղադրանքի առաջադրումը «համաչափ միջոցներ» չեն հետապնդվող իրավաչափ նպատակին(ներին): Այս պնդումը զարգացնելու համար Դիմումատուն կարող է հղում կատարել զրպարտության և վիրավորանքի միջազգային նորմերի վերջին տասնամյակի զարգացումներին. մասնավորապես՝ զրպարտության և վիրավորանքի փաստերով Եվրոպական դատարանի վճիռներին, ԵԽ բազմաթիվ Բանաձևերին և Հանձնարարականներին, ԵԱՀԿ փաստաթղթերին, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետազոտություններին և զեկույցներին, միջազգային այլ ատյանների վճիռներին:

Նախ և առաջ, Դիմումատուն կարող է հղում կատարել Հայաստանի վերաբերյալ ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի ընդունած 1304, 1361, 1374 և 1405 Բանաձևերին, որտեղ կան բազմաթիվ անդրադարձներ զրպարտության և վիրավորանքի ներպետական նորմերի և պրակտիկայում դրանց կիրառության մասին 2002-2004 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում: Այս փաստաթղթերում ԵԽ-ն Հայաստանին կոչ է արել ապաքրեականացնել զրպարտության և վիրավորանքի նորմերը կամ դրանք կիրառել խիստ համաչափորեն. այնպես՝ որպեսզի արդյունքում չտուժի մարդկանց ազատ արտահայտվելու և կարծիքներ հայտնելու իրավունքը: Պատասխանողը կարող է պնդել, որ նշված փաստաթղթերը պարտադիր իրավական ուժ չունեն, սակայն սա կլինի թույլ փաստարկ, քանի որ ՀՀ իշխանությունները բազմաթիվ անգամ հայտարարել են, որ ընդունում են այդ փաստաթղթերի պարտադիր նշանակությունը և որոշակի քայլեր են ձեռնարկել դրանցում նշված բազմաթիվ այլ պահանջների կատարման ուղղությամբ:

Դիմումատուն կարող է հղում կատարել նաև ԵԱՀԿ բազմաթիվ կոչերին ուղղված ՀՀ իշխանություններին զրպարտության և վիրավորանքի նորմերը ապաքրեականացնելու վերաբերյալ, որին նույնպես ՀՀ իշխանությունները պատրաստակամություն են հայտնել անդրադառնալ:

Եվրոպական դատարանը կայացրել է բազմաթիվ վճիռներ զրպարտության և վիրավորանքի նորմերի վերաբերյալ, մասնավորապես՝ Կոլոմբանիի, Կաստելսի, Ֆրեզոյի և Ռուարի գործով վճիռները և այլն: Այս և այլ նմանատիպ որոշումներում հիմնականում այն

կարծիքն է արտահայտվում, որ քաղաքական և հանրային գործիչների վերաբերյալ քննադատության սահմանները պետք է ավելի լայն լինեն, քան հասարակ քաղաքացիների և որ պետությունը պետք է ծայրահեղ հանդուրժողականություն ցուցաբերի նրանց նկատմամբ քրեական բնույթի մեղադրանք առաջադրելիս: Այս մասին ավելի մանրամասն նշված է վերը նշված 10-րդ հոդվածի մեկնաբանության ենթաբաժնում:

Դիմումատուի համար կարևոր փաստարկ կլինի այն պնդումը, որ ՀՀ ներպետական իրավական նորմերը պետական պաշտոնյաներին և սովորական քաղաքացիներին զրպարտությունից և վիրավորանքից պաշտպանվելու անհավասար պայմաններ են տրամադրում: Սա ակնհայտ է դառնում Քրեական օրենսգրքի 135, 136 և 318 հոդվածները ուսումնասիրելիս: Սա 10-րդ հոդվածի ակնհայտ խախտում է համարվում, որի մասին հստակ նշված է, օրինակ, Կոլումբանիի գործով վճռում: Այս իմաստով ԵԱՀԿ-ն, ինչպես նաև միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպություններ, օրինակ՝ Արտիկլ 19-ը, կոչով դիմել են Հայաստանի Հանրապետության իշխանություններին նշված անհավասարությունը վերացնելու նպատակով: Դիմումատուն «կարծիք» էր հայտնել, որը համաձայն Եվրոպական դատարանի պրակտիկայի ենթակա չէ ապացուցման: Բացի այդ, Դիմումատուի հայտնած կարծիքը հիմնված էր որոշ փաստացի հիմքերի վրա:

Եթե նշված փաստարկները Դիմումատուն զարգացնի ներպետական պրակտիկայի վերաբերյալ բազմաթիվ փաստերով, ապա հաջողությամբ կարող է վիճարկել, որ կատարված հայտարարության համար քրեական մեղադրանք առաջադրելը և արդյունքում 1 տարով ազատազրկելը համաչափ միջոցներ չեն «անձի հեղինակությունը պաշտպանելու» իրավաչափ նպատակին հասնելու համար և արդյունքում կարող է հիմնավորել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքը, քանի որ Դիմումատուի՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատության իրավունքի սահմանափակումը պետական մարմինների կողմից կատարվել է օրենքով նախատեսված կարգով, հետապնդել է օրինական (իրավաչափ) նպատակ, այն է՝ Երևանի քաղաքապետի հեղինակության և իրավունքների պաշտպանությունը, և նման սահմանափակումն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Պատասխանող մասնակից պետությունը պետք է նշի, որ սահմանափակումները չեն հանգեցնում 10-րդ հոդվածի խախտում, քանի որ դրանք կատարվել են օրենքով սահմանված կարգով, հետապնդել են 10(2) կետի առնվազն մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակներ և «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»:

Նշվածը պնդելու համար, Պատասխանող մասնակից պետությունը պետք է հիմնավորի, որ օրենքը, այսինքն ՀՀ Քրեական օրենսգրքի 135, 136 և 318 հոդվածները ձևակերպված են բավարար ճշգրտությամբ և պարզությամբ: Բացի այդ, հղում կատարելով Սանդի Թայմսի գործով վճռի 49 կետի վրա, Պատասխանողը պետք է պնդի, որ Դիմումատուն կարող էր կանխատեսել իր արարքների բոլոր հետևանքները՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով նաև անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվությունից: Սա թերևս դժվար կլինի վիճարկել Դիմումատուի համար, քանի որ նման խորհրդատվական ծառայություններ Երևանում իրականում չատ կան՝ ուստի հասանելի էին Դիմումատուին:

Պատասխանող մասնակից պետությունը հեշտությամբ կարող է ցույց տալ, որ առաջադրված մեղադրանքները հետապնդում էին պետական բարձր պաշտոնյաների հեղինակությունը պաշտպանելու իրավաչափ նպատակ: Ավելին, Պատասխանող մասնակից պետությունը կարող է նաև նշել, հիմնվելով գործի փաստերի վրա, որ դատախազությունը, ստանձնելով «հասարակական կարգ ու կանոնի», «քաղաքացիների առողջության դեմ ոսնձգությունների», «հանցագործությունները կանխելու» և «այլոց իրավունքները

պաշտպանելու» հիմնական պատասխանատուի դերը, որն ամրագրված է երկրի գլխավոր օրենքով՝ Սահմանադրությամբ, պարտավոր էր միջամտել և կանխել Դիմումատուի գործողությունները, որոնք պարունակում էին հանցակազմ:

Պատասխանող մասնակից պետության համար ավելի դժվար կլինի հաղթահարել երրորդ չափանիշը: Սակայն, կան որոշ փաստեր, որոնք Պատասխանող մասնակից պետությանը իրական հնարավորություն են ընձեռում հիմնավորելու, որ միջամտության համար առկա էր սոցիալական սուր պահանջ և որ միջամտությունը իրականացվել էր պահպանելով համաչափության չափանիշները:

Սոցիալական սուր պահանջի առկայությունը հիմնավորելու համար Պատասխանող մասնակից պետությունը կարող է հղում կատարել ներպետական իրավիճակին. 2003 թվականի իշխանափոխությունից հետո երկրում ստեղծվել էր անկայուն ներքաղաքական վիճակ, շարունակվում էին ընդդիմության կողմից հրավիրվող բազմամարդ հանրահավաքները, երկիրը գտնվում էր ծանր տնտեսական վիճակում, երկրում կային շատ փախստականներ և այլն: Այս ամենը հաշվի առնելով, իշխանությունների համար ամենակարևորը դա երկրի ներքին կայունության ամրապնդումն էր, որի համար էլ կարևոր է ապակայունացնող ցանկացած գործողություններին համարժեք հարված հասցնելը: Այս իմաստով, քանի դեռ երկիրը գտնվում է անցումային շրջանում, դեռ վաղ է խոսել զրպարտության և վիրավորանքի նորմերի ապաքրեականացման մասին:

Ավելի կարևոր է անդրադառնալ համաչափության չափանիշին: Պատասխանող մասնակից պետությունը կարող է Դատարանի ուշադրությունը հրավիրել մի շարք կարևոր փաստերի վրա, որով ակնհայտորեն պարզ է դառնում, որ պահպանվել էր «համաչափության» սկզբունքը: Մասնավորապես, թեև Դիմումատուն ի սկզբանե ենթարկվել էր մեկ տարվա ազատազրկման, սակայն հետագայում Վերաքննիչ դատարանը որոշել էր, որ պատժաչափը չի համապատասխանում Դիմումատուի հանցանքի ծանրությանը և անձին և այդ հիմքով պատիժը փոխարինեց վեց ամսվա ազատազրկման ժամկետով՝ այսինքն. կրկնակի նվազեցրեց ազատազրկման ժամկետը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը հաշվի առավ Դիմումատուի «անձը». նրա՝ հասարակական գործիչ լինելու հանգամանքը, ընտանեկան կարգավիճակը և առողջական վիճակը: Այս ամենը վկայում է այն մասին, որ ներպետական դատարանները տրամադրում են դատական պաշտպանության արդյունավետ հնարավորություններ և հետևողականորեն կիրառում են Կոնվենցիայի սկզբունքները: Ավելին, հետագայում Դիմումատուն պայմանականորեն վաղաժամ ազատ արձակվեց պատժի մեկ երրորդը կրելուց հետո՝ այսինքն. 2 ամիս հետո: Ի մի բերելով, կարելի է վստահորեն նշել, որ իրականում Դիմումատուն քրեակատարողական հիմնարկում անցկացրեց միայն երկու ամիս: Իսկ այս ժամկետը համեմատելով համապատասխան հոդվածով տրված պատժաչափի ամբողջ «սանդղակի» հետ, ակնհայտ է, որ նշանակվել էր միջինից էլ ցածր խստության պատիժ, քանի որ առավելագույնը նման հանցանքի համար նախատեսվում է մինչև երկու տարի ազատազրկում: Ուստի, պատժաչափի նշանակումը ընտրվել էր համաչափորեն: Այս պնդումները ներկայացնելիս Պատասխանողը կարող է հղում կատարել ԵԴ համապատասխան որոշումներին, օրինակ, Տամների գործով վճռին և այլն:

Ավելին, ի պատասխան Դիմումատուի պնդումներին կապված էս Բանաձևերի և ԵԱՀԿ հայտարարությունների հետ, Պատասխանող մասնակից պետությունը կարող է պնդել, որ այդ փաստաթղթերում նշվում է կամ քրեական հոդվածները ապաքրեականացնելու կամ դրանց համաչափ և հազվադեպ կիրառման մասին: Այսինքն, առաջարկվում է երկու լուծում և կոչ է արվում ընտրել դրանցից մեկը: Ներպետական պրակտիկան ցույց է տալիս, որ զրպարտության և վիրավորանքի նորմերը Հայաստանի Հանրապետության ներպետական պրակտիկայում իրականում հաճախ չեն կիրառվում: Դրա համար պետք է ուսումնասիրել վիճակագրական տվյալները և համեմատել դրանք Ես անդամ մյուս երկրների հետ: Համեմայն դեպս, անվիճելի է, որ դրանք համատարած կիրառում ունեն: Ուսումնասիրելով, թե քանի անգամ են նշված հոդվածները կիրառվել, հատկապես քաղաքական գործիչների կամ պետական բարձր պաշտոնյաների առնչությամբ, կարելի է վստահաբար հանգել այն եզրակացությանը, որ

գրպարտության և վիրավորանքի քրեական նորմերը ՀՀ-ում կիրառվում են շատ հազվադեպ, իսկ պատժաչափերի առնչությամբ՝ խիստ համաչափորեն: Համաձայն Լինգենսի գործի կարծիք հայտնելու իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել՝ հատկապես փաստացի հիմքերի բացակայության դեպքում:

բ) Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները, մասնավորապես Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու և Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումները խախտել են Եվրոպական կոնվենցիայով իրեն երաշխավորված հավաքների ազատության իրավունքը:

Դիմումատուն, սույն իր պնդումը հիմնավորելու համար, Եվրոպական դատարանի կողմից կայացված համապատասխան վճիռներում արտահայտված մոտեցումների և դրանցում կիրառված չափանիշների և ստանդարտների համադրման միջոցով պետք է ապացուցի, որ սահմանափակվել է իր՝ հավաքների ազատության իրավունքի իրականացումը պետական մարմինների կողմից հետևյալ երկու միջամտությունների իրականացմամբ. մասնավորապես՝

1. Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումով,
2. Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումով:

Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումը խախտել է Դիմումատուի՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հավաքների ազատության իրավունքը: Դիմումատուն իր իրավունքի այս սահմանափակումը ապացուցելու համար պետք է պնդի հետևյալը.

Կոնվենցիայի նորմերի և Եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն երթերը, ցույցերն ու հանրահավաքները արգելելու մասին որոշումները արդարացվում են միայն բացառիկ դեպքերում⁷⁹: Դիմումատուն նման միջամտության ոչ անհրաժեշտ լինելը կարող է ապացուցել հետևյալ թեստի կիրառման միջոցով:

ա. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը.

Դիմումատուն այս թեստը պետք է հիմնավորի նրանով, որ իր՝ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը տեղի է ունեցել միջամտություն, այն է. Երևանի քաղաքապետը, ծառահատումների և կոռուպցիայի հարցի շուրջ հանրության ուշադրությունը հրավիրելու և այս հիմնախնդրի շուրջ հասարակական բանավեճ խթանելու նպատակով «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ հրավիրված երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշում է կայացրել:

բ. Եթե այո, ապա արդյո՞ք Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումը եղել է օրենքով նախատեսված կարգով.

⁷⁹ Տե՛ս Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (1980) 21 DR 138.

Դիմումատունն այստեղ պետք է նշի, որ Երևանի քաղաքապետի որոշումը նախատեսված է եղել օրենքով, այն է՝ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով: Սակայն, միևնույն ժամանակ Դիմումատունն կարող է պնդել, որ Երևանի քաղաքապետի որոշումը չի ունեցել բավարար հիմնավորվածություն և հստակություն (օրենքի, կամ կիրառվող կանոնի հստակության և հիմնավորվածության վերաբերյալ հարցերը ներկայացված են սույն Հուշագրի Մաս III-ի 2-րդ և 3-րդ ենթակետերում):

գ. Եթե միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, ապա արդյոք այն հետապնդել է իրավաչափ նպատակ.

Դիմումատունն պետք է պնդի, որ Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ փոխադրելու մասին որոշումը թեև նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է 11-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավաչափ նպատակ, սակայն.

- 1) Երևանի քաղաքապետի որոշումը չի եղել հստակ ձևակերպված և հիմնավորված, այն՝ 11-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավաչափ նպատակներին համապատասխանելու առումով, քանի որ, համաձայն Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների, «...Պետությունները իրավասու չեն սահմանափակումներ իրականացնել այնպիսի հիմքերով, որոնք հստակ սահմանված չեն...»⁸⁰:
- 2) Նման սահմանափակումը անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում, քանի որ առկա չի եղել «սուր սոցիալական պահանջ» այն է՝ «հստակ և ակնհայտ վտանգ» նման սահմանափակում իրականացնելու համար: Համաձայն Եվրոպական դատարանի վճիռների, «անհրաժեշտության» թեստը Կոնվենցիայի իմաստով բավականին հստակ է դրված: *Arrowsmith v. UK* գործով Կոմիտեն սահմանեց, որ «...»անհրաժեշտության« կոնցեպցիայի նկատմամբ, որպես սահմանափակումների, տույժերի և այլ [միջամտությունների] հիմնավորում, կիրառելի է «սուր սոցիալական պահանջը», ինչը պետք է ներառի «հստակ և ակնհայտ վտանգի» թեստը և պետք է դիտարկվի կոնկրետ գործի փաստերի լույսի ներքո...»⁸¹: Համաձայն Եվրոպական կոնվենցիայի, հավաքների ազատության իրավունքի իրականացման համար միակ սահմանափակումը դրա «խաղաղ» լինելու հանգամանքն է: Խաղաղ նպատակ ունենալը նույնպես այս նորմի պաշտպանվածության ներքո է, նույնիսկ եթե հանրահավաքի ընթացքում առաջանում են անկարգություններ: *Christians against Racism and Fascism v. UK* գործով Կոմիտեն սահմանեց. «... Կոնվենցիայի 11(1) հոդվածի իմաստով խաղաղ հավաքների ազատության իրավունքը երաշխավորվում է բոլոր նրանց, ովքեր մտադրություն ունեն խաղաղ հանրահավաք կազմակերպել»: Կոմիտեն նույն գործում նշել է «... հանրահավաքի անցկացումն արգելելը կարող է հիմնավորվել միայն, եթե առկա է անկարգությունների առաջացման իրական վտանգ, ինչը հնարավոր չէ կանխել այլ, առավել մեղմ միջոցի կիրառմամբ...»⁸²: Դիմումատունն միևնույն ժամանակ կարող է պնդել, որ Եվրոպական դատարանը բազմիցս հիշեցրել է, որ չնայած այն հանգամանքին, որ անկարգությունների կանխումը 11-րդ հոդվածի իմաստով իրավաչափ նպատակ է, այնուհանդերձ անհրաժեշտ է հավասարակշռություն ապահովել հավաքների և միավորման ազատության իրացման և անկարգությունների կանխման միջև, քանի որ անկարգությունների կանխումը չպետք է բերի նրան, որ մարդիկ հնարավորություն չունենան արտահայտել իրենց մտքերն ու անհանգստությունները:

⁸⁰ Տե՛ս *De Eilde, Ooms and Versyp v. Belgium* գործով Եվրոպական դատարանի վճիռը (1979-80) 1 EHRR 373:
⁸¹ Տե՛ս *Arrowsmith v. UK* գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1978) 3 EHRR 218:
⁸² Տե՛ս *Christians against Racism and Fascism v. UK*. գործով Կոմիտեի որոշումը, (1980) 21 DR 138:

3) Դիմումատուին կարող է նաև պնդել, որ թեև Երևանի քաղաքապետը արգելել էր երթի իրականացումը և հանրահավաքի անցկացումը առաջարկել էր տեղափոխել այլ օր, իրենց կողմից արդեն նշանակված օրը և երթուղով խաղաղ երթի և հանրահավաքի իրականացումը պայմանավորված էր հիմնախնդրի լրջությամբ և հանրության շրջանում բանավեճերի խթանմամբ:

2. Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումը:

Դիմումատուին իր իրավունքի այս սահմանափակումը ապացուցելու համար պետք է պնդի.

ա. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականագմանը.

Դիմումատուին պետք է պնդի, որ իր նկատմամբ կայացված Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը, վարչական տուգանքի ենթարկելու մասին, խախտել է իր հավաքների ազատության իրավունքը:

Դիմումատուին պետք է պնդի, որ համաձայն Եվրոպական դատարանի վճիռների, միջոցառման [հանրահավաքից, ցույցից և այլն] անցկացումից հետո տույժերի, այդ թվում քրեական, վարչական կամ կարգապահական վարույթի հարուցումը այնքանով է դիտվում միջամտություն հավաքների ազատության իրավունքին, որքանով դա կարող է դիտվել միջոցառման [հանրահավաքից, ցույցից և այլն]մասնակցին բռնի ուժով դուրս հանելը⁸³:

բ. Արդյո՞ք միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և գ. արդյո՞ք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ.

Դիմումատուին պետք է պնդի, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, սակայն չի հետապնդել իրավաչափ նպատակ, քանի որ հանրահավաքն ու երթը խաղաղ նպատակ են ունեցել և դրանց անցկացման ժամանակ ոչ մի միջադեպ տեղի չի ունեցել: Իսկ ինչ վերաբերում է չարտոնված հանրահավաքին և երթին, ապա Դիմումատուին պետք է պնդի, որ համաձայն Եվրոպական դատարանի վճիռների, անօրինական հավաքները [օրենքով սահմանված կարգով արգելված] նույնպես պաշտպանվում են Կոնվենցիայի 11-րդ հոդվածով: Կոմիտեն G. v. Germany գործով իր որոշման մեջ ամրագրեց հետևյալը «... թեև միջոցառումը անօրինական էր ներքին օրենսդրության տեսանկյունից, այնուամենայնիվ, այն իր բնույթով [խաղաղ] էր և միջամտությունը Դիմումատուի իրավունքի իրականացմանը ենթակա է հիմնավորման 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով...»⁸⁴:

Դիմումատուին կարող է պնդել, որ իրեն վարչական պատասխանատվության ենթարկելը չի հետապնդել իրավաչափ նպատակ, քանի որ չի հետապնդել 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներից և ոչ մեկը և, հետևաբար, նման միջամտությունը անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում, քանի որ առկա չի եղել «սոցիալական սուր պահանջ»:

Դիմումատուին իր փաստարկներում կարող է նաև հիշատակել ԵԽ-ի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ընդունված համապատասխան Հանձնարարականները, որոնցում քննադատության է արժանանում Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից հանրահավաքներին մասնակցող անձանց նկատմամբ մասսայականորեն վարչական պատասխանատվության կիրառումը:

⁸³ St' u Keir starmar, European Human Rights Law and the Human Rights Act 1998. Legal Action Group 1999, մաս 25.17 (2), էջ 630:

⁸⁴ St' u G. v. Germany գործով Կոմիտեի որոշումը, (1989) 60 DR 256:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետությունը չի խախտել եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի հավաքների ազատությունը, քանի որ պետական մարմինների կողմից այս իրավունքների սահմանափակումը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, և ընտրվել է իրավունքը սահմանափակելու համաչափ միջոց. իրավաչափ նպատակին հասնելու համար:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող թիմը սույն առարկությունը հիմնավորելու համար եվրոպական դատարանի կողմից կայացված համապատասխան վճիռներում արտահայտված մոտեցումների և դրանցում կիրառված չափանիշների և ստանդարտների համադրման միջոցով պետք է ապացուցի, որ պետական մարմինների կողմից այս իրավունքների սահմանափակումը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, և ընտրվել է իրավունքը սահմանափակելու համաչափ միջոց իրավաչափ նպատակին հասնելու համար: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները պետք է հիմնավորեն վերը նշված պնդումները հետևյալ երկու միջամտությունների առնչությամբ.

1. Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումը,
2. Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումը:

1. Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումը չի խախտել Դիմումատուի՝ եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հավաքների ազատության իրավունքը հետևյալ հիմնավորմամբ:

Կոնվենցիայի նորմերի և եվրոպական դատարանի վճիռների համաձայն երթերը, ցույցերն ու հանրահավաքները արգելելու մասին որոշումները արդարացվում են միայն բացառիկ դեպքերում⁸⁵: Պատասխանող մասնակից պետությունը նման միջամտության անհրաժեշտ լինելը պետք է ապացուցի հետևյալ թեստի միջոցով:

ա. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականագմանը.

Պատասխանող մասնակից պետությունը պետք է նշի, որ իր հավաքների ազատության իրավունքի իրականացմանը տեղի է ունեցել օրենքով սահմանված միջամտություն, այն է՝ Երևանի քաղաքապետը ծառահատումների և կոռուպցիայի հարցի շուրջ հանրության ուշադրությունը հրավիրելու և այս հիմնախնդրի շուրջ հասարակական բանավեճ խթանելու նպատակով «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ հրավիրված երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշում է կայացրել:

բ. Եթե այո, ապա արդյո՞ք Երևանի քաղաքապետի՝ երթը արգելելու և հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու մասին որոշումը եղել է օրենքով նախատեսված կարգով.

Պատասխանող մասնակից պետությունը պետք է վկայակոչի օրենքը հիմնավորելու համար, որ միջամտությունը եղել է օրենքով սահմանված կարգով: Պատասխանող մասնակից պետությունը կարող է նաև կիրառել օրենքի մատչելիության և հստակության թեստը, որին

⁸⁵ Տե՛ս Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի ընդդեմ Միացյալ Թագավորության գործով եվրոպական դատարանի վճիռը (1980) 21 DR 138.

մանրամասն անդրադարձ է կատարվել սույն Հուշագրում:

գ. Եթե միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, ապա արդյո՞ք այն հետապնդել է հրավաչափ նպատակ.

1. Պատասխանող մասնակից պետությունը պետք է նաև հիշատակի, որ նման որոշման հիմքում ընկած է պետության դրական (պոզիտիվ) պարտավորության իրականացումը, ինչն ուղղված է այն մարդկանց իրավունքների պաշտպանությանը, ովքեր ցանկանում են իրացնել իրենց հավաքների ազատության իրավունքը: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները իրենց հայտարարությունը հիմնավորելու համար կարող են վկայակոչել Մրցույթի դատական գործում Երևանի քաղաքապետի որոշման հիմնավորումները, մասնավորապես շեշտադրելով այն փաստը, որ ընդդիմությունը տվյալ օրը նպատակ ուներ հրավիրել բազմամարդ հանրահավաք և հաշվի առնելով 2003 թվականի հուլիսին տեղի ունեցած իշխանափոխության հետևանքով Հանրապետությունում ստեղծված անկայուն քաղաքական վիճակը *»մեկից ավելի զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը քաղաքի կենտրոնական և ծանրաբեռնված շրջանում լրջորեն վտանգում է հասարակական կարգ ու կանոնը...և կարող է ստեղծել իրական վտանգի սպառնալիք այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին...«*: Հատկանշանակ է, որ այս նախադասությունը համահունչ է *»ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին«* Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներ հետ: Համաձայն կոնվենցիայի 11 –րդ հոդվածի 2-րդ մասի, սահմանափակումները, որոնք արվում են ի շահ հասարակական անվտանգության և հասարակական կարգ ու կանոնի պահպանության, համարվում են իրավաչափ նպատակ:
2. Պատասխանող մասնակից պետությունը կարող է նաև հիշատակել *Rai and Others v. UK* գործով Կոմիտեի որոշումը, որը մասնավորապես սահմանում է *»...Նկատի ունենալով այն հանգամանքը, որ թույլտվություն տալը մերժելը չի վերաբերել Դիմումատուի կողմից երթի իրականացման արգելմանը, այլ մերժվել է միայն առանձնապես կարևոր նշանակություն ունեցող տարածքում դրա իրականացումը (երթը կարելի էր անցկացնել Լոնդոնի այլ մասերում) Կոմիտեն եզրակացրեց, որ տվյալ գործով սահմանափակումը համաչափ է և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում...«⁸⁶:*
3. Նման սահմանափակումը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, քանի որ առկա է եղել *»սուր սոցիալական պահանջ«*, այն է՝ *»հստակ և ակնհայտ վտանգ«* նման սահմանափակում իրականացնելու համար: Պատասխանող մասնակից պետությունը կարող է վկայակոչել Դատարանի *Plattform Arzte fur das Leben v. Austria* գործով որոշումը, որտեղ Դատարանը սահմանել է, որ *»... հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրականացումը չի կարող նվազեցվել զուտ մինչև պետության չմիջամտելու պարտավորության... պետության կողմից բացառապես նեգատիվ կոնցեպցիան չի կարող համընկնել 11-րդ հոդվածի նպատակին և առարկային... 11-րդ հոդվածը երբեմն պահանջում է պոզիտիվ պարտավորությունների իրականացում...«*: Նման մոտեցումը համընկնում է Կոնվենցիայի արդյունավետության սկզբունքի հետ. *»Կոնվենցիան պաշտպանում է իրավունքներ, որոնք արդյունավետ են և գործնական«⁸⁷ : Հայաստանի*

⁸⁶ Տե՛ս *Rai and Others v. UK* գործով Կոմիտեի որոշումը (1995) 82-A, DR 134:

⁸⁷ Տե՛ս Արտիկոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, (1981), EHRR 1.

Հանրապետության ներկայացուցիչները կարող են համապատասխան հիմնավորումներ ներկայացնել, որ հանրահավաքի անցկացումը ցանկացած այլ օր տեղափոխելու մասին որոշումը չի հանգեցրել Դիմումատուի հավաքների և միավորման ազատության իրավունքի խախտման, այլ արգելվել է միայն դրա անցկացումը Դիմումատուի կողմից առաջարկվող օրը: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները կարող են ևս մեկ անգամ հիշատակել այն փաստը, որ նման արգելք կիրառելու միջոցով կանխվել է «հստակ և ակնհայտ վտանգի» ռիսկը, որը կարող էր առաջանալ մեկից ավելի *զանգվածային հրապարակային միջոցառումների բախումների դեպքերում:*

2. Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումը:

Պատասխանող մասնակից պետությունը պետք է հիմնավորի, որ *Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումը չի խախտում Դիմումատուի հավաքների ազատության իրավունքը:*

ա. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը.

Պատասխանող մասնակից պետությունը պետք է պնդի, որ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելը չի խախտել հավաքների ազատության իրավունքը, քանի որ նման միջամտությունը նախատեսված է եղել օրենքով սահմանված կարգով:

բ. Արդյո՞ք միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և գ. արդյո՞ք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ.

Պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչները կարող են հայտարարել, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և հետապնդել է իրավաչափ նպատակ, այն է՝ ի շահ հասարակական անվտանգության և անկարգություններն ու հանցագործությունները կանխելու և այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սա հիմնավորելու համար Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմը կարող է վկայակոչել Ոստիկանությունում կազմված վարչական իրավախախտման մասին արձանագրությունը, որում նշվում էր, որ Դիմումատուն «...կազմակերպել և մասնակցել է չարտոնված հանրահավաքին և երթին, որով խախտել է ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման ու անցկացման սահմանված կարգը», ինչպես նաև «զազրախոսել և չարամտորեն հրաժարվել է ենթարկվել ոստիկանության աշխատողի չարտոնված երթը դադարեցնելու վերաբերյալ օրինական պահանջներին»: Պատասխանող մասնակից պետությունը այս մասում կարող է նաև առարկել, որ առկա է եղել «սոցիալական սուր պահանջ» այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, ի շահ հասարակության անվտանգության պետական մարմինների կողմից կատարված միջոցառումները, մասնավորապես՝ Դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելը:

Պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչները կարող են նաև հիշատակել Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներ առ այն, որ անկարգությունները կանխելու իրավաչափ նպատակը առավել հաճախ է օգտագործվում պատասխանող մասնակից պետությունների կողմից՝ որպես հավաքների ազատության իրավունքի իրականացմանը միջամտելու և այն սահմանափակելու իրավաչափ նպատակ: Ըստ Դատարանի պրակտիկայի,

այդ միջամտությունը հիմնավորելու համար կարելի է առանձնացնել հետևյալ երկու չափանիշները, որոնք Պատասխանող մասնակից պետությունը պետք է հաշվի առնի իր փաստարկները ներկայացնելիս.

ա. թեև 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անկարգությունների կանխումը համարվում է իրավաչափ նպատակ, այնուհանդերձ, պետք է այնպիսի հավասարակշռություն ապահովելով հավաքների ազատության իրավունքի իրականացմանը միջամտելիս, որ դա չհանգեցնի անձանց ձեռնպահ մնալ իրենց կարծիքներն ու անհանգստությունները հայտնելուց,

բ. 11-րդ հոդվածի պաշտպանվածության ներքո գտնվող միջոցառումների իրականացումից հետո պատասխանատվության ենթարկելը, այդ թվում քրեական կամ վարչական պատասխանատվության, համարվում է նույնչափ միջամտություն անձի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը, որքան անձին բռնի ուժով հանրահավաքից դուրս բերելը:

Պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչը պետք է հիմնավոր փաստարկներ ներկայացնի վերը նշված այս երկու մոտեցումները Սրցույթի դատական գործի փաստերի հետ համադրելու միջոցով ցույց տալ, որ միջամտությունը Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը հետապնդել է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում և առկա է եղել »սուր սոցիալական պահանջ« նման միջամտություն իրականացնելու համար: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները կարող են նաև հիմնավորել միջամտության համաչափությունը այն փաստով, որ Դիմումատուի նկատմամբ ընտրվել է առավել մեղմ պատասխանատվության միջոց:

Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմը, որպես հակափաստարկ Դիմումատուի բերած այն փաստարկին, որ ԵԽ-ի կողմից ընդունված Հանձնարականներով քննադատության են արժանանում Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից հանրահավաքներին մասնակցող անձանց նկատմամբ մասսայականորեն վարչական պատասխանատվության կիրառումը, կարող է նշել, որ դրանք պարտադիր իրավաբանական ուժ չունեն Հայաստանի Հանրապետության համար ու բացի այդ այս դեպքում Դիմումատուն չի զրկվել ազատությունից, այլ նրա նկատմամբ կիրառվել է պատասխանատվության համաչափ միջոց:

գ) Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված խտրականության արգելման իրավունքը՝ մասնավորապես. իրեն քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված է եղել իր հանոգումներով և հասարակական ակտիվ գործունեությամբ:

Դիմումատուն իր հայտարարությունը հիմնավորելու համար պետք է ապացուցի հետևյալը.

ա. Արդյո՞ք կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը և ա՞ռկա է խտրականության տարր.

Այս մասում Դիմումատուն պետք է ապացուցի, որ 14-րդ հոդվածը կիրառելի է գործի նկատմամբ և հիմնավորի, որ իրեն քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված է եղել իր հանոգումներով և հասարակական ակտիվ գործունեությամբ: Սա հիմնավորելու համար Դիմումատուն պետք է հիմնավոր կերպով ներկայացնի, որ տարբեր մարդկանց նկատմամբ, որոնց դեպքում առկա են եղել միևնույն հանգամանքները, փաստերը և իրավիճակները, այլ մոտեցում (այդ թվում դատարանի կամ վարչական մարմնի որոշում) է ցուցաբերվել քան իր: Դիմումատուն սա ապացուցելու համար կարող է համեմատություններ կատարել Հայաստանի Հանրապետության դատարանների որոշումների միջև, ինչպես նաև

օրինակներ բերել դատական պրակտիկայից:

բ. Եթե առկա է խտրականության տարր, ապա դա հետապնդ՞ում է իրավաչափ նպատակ.

Դիմումատուն պետք է ապացուցի, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության դրսևորումները անհրաժեշտ չեն եղել և չեն հետապնդել իրավաչափ նպատակ, քանի որ Դիմումատուն իրականացրել է իր՝ արտահայտվելու ազատության իրավունքը: Եվրոպական դատարանը Հանդիսայդի գործով վճռում սահմանեց, որ «...10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պարագայում այն կիրառելի է ոչ միայն »տեղեկատվության« կամ »գաղափարների« նկատմամբ, որոնք ընդունվում են նպաստավոր կամ դիտվում են որպես անվնաս կամ անտարբեր, այլ նաև այնպիսին, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստություն են պատճառում պետությանը կամ բնակչության մի մասին»: Եվրոպական դատարանը բազմիցս հիշեցրել է, որ բազմակարծությունը ժողովրդավարական հասարակության կարևոր հիմնաքարերից է և այն խրախուսվում է նման հասարակության զարգացման համար: Հիմք ընդունելով հարցի կարևորությունն ու »Պահպանեք բնություն« հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ակտիվ միջոցառումները, այդ հիմնահարցը բնակչության շրջանում տարածելու և այն կանխելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու կարևորությունը, սահմանափակումը չի հետապնդել իրավաչափ նպատակ և այն համաչափ չի եղել, քանի որ այն »արդարացի հավասարակշռություն« չի սահմանել անհատի իրավունքների պաշտպանության և հասարակության շահերի միջև:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված խտրականության բացառման իրավունքը, քանի որ Դիմումատուն քրեական պատասխանատվության է ենթարկվել ոչ թե իր համոզմունքների կամ հասարակական ակտիվ գործունեության, այլ քրեորեն հետապնդելի արարք կատարելու համար:

Պատասխանող մասնակից պետությունն իր այս հայտարարությունը հիմնավորելու համար պետք է ապացուցի հետևյալը.

ա. Արդյո՞ք կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը և ա՞ռկա է խտրականության տարր.

Այս մասում Պատասխանող մասնակից պետությունը պետք է առարկի, որ 14-րդ հոդվածը կիրառելի է գործի նկատմամբ և պնդի, որ Դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված չի եղել իր համոզմունքներով և հասարակական ակտիվ գործունեությամբ:

Այս առարկությունը պնդելու համար Պատասխանող մասնակից պետությունը պետք է հիմնավոր ձևով ցույց տա, որ Հայաստանի Հանրապետությունում չկա դատական պրակտիկա, երբ միևնույն հանգամանքների, փաստերի և իրավիճակների առկայության դեպքում այլ մոտեցում (այդ թվում դատարանի կամ վարչական մարմնի որոշում) է ցուցաբերվել, քան թե տեղի է ունեցել Դիմումատուի նկատմամբ: Պատասխանող մասնակից պետությունը սա ապացուցելու համար կարող է համեմատություններ կատարել ազգային դատարանների որոշումների միջև, ինչպես նաև օրինակներ բերել դատական պրակտիկայից:

Պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչները կարող են նաև պնդել, որ Դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված է եղել »այլ անձանց հեղինակությունը պաշտպանելու« իրավաչափ նպատակով, և որ պետական մարմինները կատարել են իրենց դրական պարտավորությունը այդ կապակցությամբ, որում չի եղել խտրականության որևէ դրսևորում:

դ) Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի՝ որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքով հռչակված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարության ժամանակ՝ Դիմումատուի անձը կապելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի կողմից արված հայտարարության մեջ օգտագործված «քրեորեն հետապնդելի արարք» և «իրավախախտում» արտահայտությունների հետ:

Դատարանի առջև Դիմումատուն վիճարկելու է, որ պետական իշխանությունները, ի դեմս գլխավոր դատախազության, խախտել են Կոնվենցիայով տրված արդար դատաքննության իր իրավունքը, մասնավորապես՝ 6-րդ հոդվածի երկրորդ մասով ամրագրված անմեղության կանխավարկածը: Դիմումատուն անմեղության կանխավարկածի խախտումը պետք է հիմնավորի՝ հիմնվելով ներպետական օրենսդրության և դատական պրակտիկայի, միջազգային նորմերի, մասնավորապես՝ Կոնվենցիայի, Եվրոդատարանի վճիռների, ԵՄ փաստաթղթերի, մարդու իրավունքի այլ միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի և դատական պրակտիկայի հիման վրա:

Որպեսզի Դիմումատուն կարողանա հաջողությամբ վիճարկել խախտված իրավունքները Դատարանի առջև, նա պետք է կարողանա հստակ ներկայացնել իր փաստարկները հետևյալ հաջորդականությամբ.

- պնդել, որ խախտվել է 6-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածը (անմեղության կանխավարկածը բացարձակ իրավունք է), որը արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է,
- Նշել փաստացի այն գործողությունները, որոնցով խախտվել է անմեղության կանխավարկածը և դրանց հետևանքները (դատախազության տարածած հաղորդագրությունը),
- Նշել, որ նախաքննության վերաբերյալ տեղեկատվություն տարածելը և հանրության կողմից այդ մասին տեղեկատվության ստանալու իրավունքը տվյալ գործում, տվյալ գործի փաստերից ելնելով, չի կարող գերակշռել անմեղության կանխավարկածին,
- պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը տարածվում է ոչ միայն դատաքննության, այլ նաև նախաքննության վրա, ուստի՝ 6(2) հոդվածը տարածվում է սույն գործի փաստերի վրա:

Դիմումատուն պետք է Դատարանի առջև վիճարկի իր գանգատը նույն հիմքով, ինչը դա կատարել էր ազգային դատարանի առջև: Հակառակ դեպքում նրա փաստարկները կարող են չընդունվել Դատարանի կողմից այն հիմնավորումով, որ դիմումատուն չի սպառել ներպետական դատավարության բոլոր միջոցները տվյալ փաստարկի վերաբերյալ: Ուստի, Դիմումատուն պետք է վիճարկի, որ 2004 թվականի հուլիսի 7-ին հրապարակայնորեն արված հայտարարության մեջ Գլխավոր դատախազությունը «քրեորեն հետապնդելի արարք» և «իրավախախտում» արտահայտությունները կապել է իր անձի հետ: Դիմումատուն պետք է կարողանա համոզիչ կերպով ցույց տալ, որ ցանկացած «օբյեկտիվ դիտորդ» (անկողմնակալ անձ) կարդալով հայտարարությունը և բառերը դիտարկելով հայտարարության համատեքստում, ամենայն հավանականությամբ կհանգի այն եզրակացության, որ Կարապետ Աբգարյանը իսկապես կատարել էր «քրեորեն հետապնդելի արարք» և որ այդ արարքը որակվում էր «քրեորեն հետապնդելի»: Նշանակում է, մինչև մեղադրանք ներկայացնելն իրեն կպցվել է հանցագործի պիտակը, իսկ իր կատարած արարքը՝ հանցանք: Ուստի, խախտվել է իր՝ անմեղության կանխավարկածը, քանի որ միայն դատարանն է իրավասու, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, որոշել, թե կատարված արարքն արդյոք հանցանք է,

իսկ արարքը կատարողը՝ հանցագործ: Փաստորեն, ըստ այդ հայտարարության դիմումատուն մեղավոր է ճանաչվել այն դեպքում, երբ նրա մեղքը դեռ չի ապացուցվել:

Վերը նշվածը հիմնավորելու համար, Դիմումատուն կարող է հղում կատարել Դատարանի նախկին վճիռներից մի քանիսին. մասնավորապես՝ Ալլենե դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի գործը, որի փաստերը նման են տվյալ գործի փաստերին: Հիմնվելով այս վճռի վրա, Դիմումատուն կարող է հաջողությամբ վիճարկել մի շարք կարևոր հարցեր, որոնք կարող են ամրացնել իր դիրքերը: Դիմումատուն կարող է նշել, որ վիճարկվող հայտարարության մեջ «առկա է մեղավորության մասին հայտարարություն»: Նաև, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի, այլ նաև այլ հանրային պաշտոնյայի և պետական մարմինների կողմից: Նպատակահարմար է հղում կատարել Հայաստանի ներպետական պրակտիկայում հանդիպող բազմաթիվ դեպքերի վրա, որպեսզի ցույց տրվի, որ նման դեպքերն Հայաստանում հաճախ են կատարվում: Սա արվում է փաստարկներն ավելի համոզիչ դարձնելու համար: Օրինակ, կան բազմաթիվ կարծիքներ փաստաբանների և դատավորների կողմից, որ անմեղության կանխավարկածը շատ հաճախ խախտվում է ՀՀ Ոստիկանության »02« հեռուստատեսային հաղորդումներով կամ Հ1 հեռուստաընկերության մի շարք հայտարարություններով:

Դիմումատուն կարող է հղում կատարել Ռիբենոնի գործով վճռի կետ 35-ի ձևակերպման վրա, որտեղ Դատարանը մեջբերում է է կատարում մեկ այլ, Մինելիի գործով վճռից, որով Դատարանը սահմանում է անմեղության կանխավարկածը խախտելու ցածր չափանիշներ: Սա խոսում է Դիմումատուի օգտին: Այստեղ Դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ »մեղավորության ձևական հաստատման բացակայության դեպքում բավական է, որ դատավորի մատնանշած հիմնավորումները հիմք տան կարծելու, որ նա մեղադրյալին մեղավոր է ճանաչել«: Այսինքն, անմեղության կանխավարկածը խախտելու փաստը հաստատելու համար չի պահանջվում փաստացի ապացույց, այլ բավական է միայն ցույց տալ, որ վիճարկվող հայտարարությունը կարող էր »հիմք տալ կարծելու« որ անձին մեղսագրվում է տվյալ հանցագործությունը:

Դիմումատուն կարող է հղում կատարել նաև Ռիբենոնի գործով Դատարանի վճռի ամենակարևոր, 38 կետում արված հայտարարությանը, որտեղ Դատարանը հայտարարում է, որ թեև 6(2) կետը չի կարող »իշխանություններին խանգարել հասարակությանը տեղեկացնել կատարվող քրեական հետաքննությունների մասին, սակայն այն պահանջում է, որ իշխանությունները դա անեն զուսպ և նրբանկատորեն...«: Դիմումատուն պետք է համոզիչ կերպով ցույց տա, որ թեև նշված հայտարարությունը կոչված էր ծառայելու իր նպատակին, այն է՝ տեղեկացնել հասարակությանը նախաքննության մասին, սակայն գլխավոր դատախազությունը դա չէր արել »զուսպ և նրբանկատորեն«:

Եվ վերջապես, Դիմումատուն կարող է հղում կատարել նաև ԵԽ Նախարարների կոմիտեի 2003թ հուլիսի թիվ՝ 2003(13) Հանձնարարականին, որն ուղղված է առաջին հերթին անդամ պետության՝ Հայաստանի պետական մարմիններին, մասնավորապես՝ հետաքննության մարմիններին: Դիմումատուն կարող է հղում կատարել Հանձնարարականի նախաբանին, որը շեշտում է անմեղության կանխավարկածի և տեղեկատվություն տարածելու և ստանալու իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելու նշանակության մասին և որը, փաստորեն, կոչ է ուղղված անդամ պետության պետական իշխանություններին: Այնուհետև, Դիմումատուն կարող է հղում կատարել Հանձնարարականի 2-րդ և 11-րդ սկզբունքների վրա, որտեղ նշվում է նախաքննության փուլում անմեղության կանխավարկածը խախտելուց զերծ մնալու համար մշակված սկզբունքների մասին, և փորձել գործի փաստերով ցույց տալ, որ խախտվել են նշված սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ՝ Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արդար դատաքննության իրավունքը, քանի որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կայքերի և լրատվության

բաժնի կողմից արված հայտարարությունում հնչած «քրեորեն հետապնդելի արարք» և «իրավախախտում» արտահայտությունները նկարագրել են կոնկրետ փաստը և չեն հասցեագրվել Դիմումատուին:

Պատասխանող մասնակից պետության շահերը ներկայացնող թիմը իր փաստարկները ներկայացնելիս կարող է պնդել հետևյալը.

1. տվյալ գործը ներկայացնում էր հանրային հետաքրքրություն,
2. նման գործերի վերաբերյալ իշխանությունները պարտավոր են նախաքննության և դատաքննության մասին տեղեկատվություն հայտնել հանրությանը,
3. նման դեպքերում տեղեկատվություն ստանալու հանրային շահը գերակշռում է, հատկապես երբ խոսքը գնում է հանրային հետաքրքրություն ներկայացնող գործի մասին,
4. տեղեկատվության տրամադրումը կատարվել է զգուշորեն և նրբանկատորեն, առանց խախտելու անմեղության կանխավարկածը,
5. Դիմումատուն չի կարողանում համոզիչ և փաստացիորեն ցույց տալ, որ վիճահարույց հայտարարությունը ազդեցություն էր ունեցել նախաքննության կամ դատաքննության հետագա ընթացքի վրա:

Պատասխանող մասնակից պետությունը նախ կարող է վիճարկել այն հանգամանքը, որ վիճարկվող հոդվածը, Կոնվենցիայի 6(2) հոդվածը, կիրառելի չէ տվյալ գործի փաստերի վրա, քանի որ անմեղության կանխավարկածը տարածվում է միայն դատաքննության վարույթի վրա: Սակայն, սա թույլ փաստարկ է, քանի որ Ղատարանը Մինելիի և Ալլեննե դե Ռիբենոնի գործով հաստատել է, որ անմեղության կանխավարկածը տարածվում է նաև նախաքննության ընթացքի վրա և որ այն կարող է խախտվել նաև հանրային մարմինների և հետաքննության մարմինների կողմից:

Պատասխանող մասնակից պետության ամենակարևոր փաստարկը պետք է հանդիսանա այն, որ դատախազությունն իրականացնում էր հանրությանը տեղեկատվություն տրամադրելու իր գործառույթը և որ դա պայմանավորված է նաև տեղեկատվություն ստանալու հասարակական պահանջով: Պատասխանող մասնակցի պետությունը կարող է այս մոտեցումն ավելի հիմնավորել, հղում կատարելով այն հանգամանքին, որ տվյալ գործը հանրային մեծ հետաքրքրություն առաջացրած դեպք է, և որ նման դեպքերում մեծանում է նախաքննության մասին տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտությունը: Փաստորեն, հղում կատարելով «հանրային հնչություն ներկայացնող դեպքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու» չափանիշին, պետությունը բավականին ամրացնում է իր դիրքերը, քանի որ նշված չափանիշը շատ կարևոր դեր է կատարում Ղատարանի վճիռներում: Այս դեպքում, Պատասխանող մասնակից պետությունը պետք է բազմաթիվ փաստեր ներկայացնի հիմնավորելու համար, որ Կարապետ Աբգարյանի հետ կապված դեպքերը գտնվում էին հանրության ուշադրության կենտրոնում և որ դրանք առաջացրել էր հանրային մեծ հետաքրքրություն: «Յանրային հետաքրքրության», որպես գերակշռող չափանիշի մասին խոսելիս Պատասխանող մասնակից պետությունը կարող է հղում կատարել Ղատարանի մի շարք վճիռների վրա, ինչպես օրինակ Սանդի Թայմսի, Լինգենսի, Օբերշլիքի, Կաստելսի, Դե Յանսի գործերով վճիռներին: Այսպիսով, Պատասխանող մասնակից պետությունը պետք է հիմնվի «հանրային հետաքրքրության» չափանիշի վրա, որպեսզի կարողանա հաջողությամբ վիճարկել հայտարարության մի փոքր անզգուշությամբ ձևակերպված բովանդակությունը: Այսինքն, պետք է փորձել համոզել, որ տվյալ դեպքում երկու բախվող շահերից, այն է՝ հանրության տեղեկատվություն ստանալու և անձի արդար դատաքննության իրավունքները, գերակշռում է առաջինը, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում էր հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքի մասին տեղեկատվություն տրամադրելուն:

Պատասխանող մասնակից պետությունը կարող է պնդել նաև, որ վիճարկվող տեղեկատվությունը չէր կարող խախտել անմեղության կանխավարկածը, քանի որ հնարավոր չէ պարզորոշ ցույց տալ, որ դա կարող էր էապես ազդել Դատարանի հետագա որոշման վրա, առավել ևս որ դրանք չեն կարող պարտավորեցնել դատավորներին որոշում կայացնելիս: Սա հիմնավորելու համար Պատասխանող մասնակից պետությունը կարող նմանապես հղում կատարել Ալլենե դե Ռիբենոնի գործի փաստերին (այս քայլով Պատասխանող մասնակից պետությունը կարող է միաժամանակ նաև ցույց տալ, որ այդ գործի վրա հղում կատարելը Դիմումատուի կողմից անհիմն է): Ռիբենոնի գործի փաստերը ցույց են տալիս, որ վիճահարույց հայտարարությունը էապես ոչ մի ազդեցություն չէր ունեցել քննության հետագա ընթացքի վրա և որպես ապացույց հանդիսանում էր այն փաստը, որ ի վերջո նրա դեմ հարուցված գործը կարճվել էր հանցակազմի բացակայության պատճառով: Ուստի, որևէ ապացույց չկար, որ Ռիբենոնի գործում արված հայտարարությունը խախտել էր անմեղության կանխավարկածը, քանի որ դա ոչ մի ազդեցություն չէր ունեցել նրա դեմ բերված մեղադրանքները հետագայում հերքելու գործընթացի վրա: Ուստի, Ռիբենոնի գործի վրա հղում կատարելը աննպատակահարմար է տվյալ գործի փաստերից ելնելով:

Պատասխանող մասնակից պետությունը կարող է վիճարկել, որ 2003(13) Հանձնարարականին հղում կատարելը անհիմն է, քանի որ ԵՄ Հանձնարարականները պարտադիր իրավաբանական ուժ չունեն և՛ Հայաստանի, և՛ ԵՄ անդամ պետությունների համար: Այս իմաստով, կարելի է հղում կատարել Հանձնարարականի պաշտոնական մեկնաբանություններին (այսուհետ՝ »Հավելված«), որը հրապարակվել է Հանձնարարականի հետ միասին և որտեղ տրվում է Հանձնարարականների՝ որպես ԵՄ փաստաթղթի իրավական սահմանումը: Հավելվածի առաջին մասում նշվում է, որ Հանձնարարականները իրավական պարտադիր բնույթ չունեն, սակայն պարտադիր են որպես քաղաքական փաստաթղթեր: Ուստի, դրանք չեն կարող հիմք հանդիսանալ դատական վարույթում, քանի որ քաղաքական փաստաթղթեր են: Բացի այդ, Հանձնարարականը պատրաստվել է քաղաքական և ոչ դատական մարմնի կողմից՝ ԵՄ Նախարարների կոմիտեի կողմից:

Ավելին, Պատասխանող մասնակից պետությունը կարող է հղում կատարել փաստաթղթի նախաբանին պնդելու համար, որ փաստաթուղթը վերաբերվում է լրատվամիջոցների կողմից նախաքննության և դատաքննության մասին տեղեկատվություն հաղորդելու դեպքերին, ուստի այն կիրառելի չէ տվյալ գործի փաստերի վրա: Այս և վերը նշված պնդումներին Դիմումատուն կարող է պատասխանել, որ Հանձնարարականում տեղ են գտել այնպիսի չափանիշներ, որոնք Դատարանում արդեն կիրառվում են որպես իրավական նորմեր և կարող է բերել բազմաթիվ օրինակներ: Ավելին, շատ դեպքերում հենց Դատարանի վճռի ազդեցությամբ է ընդունվում Հանձնարարականը: Օրինակ, Գուդվինի գործով Դատարանի վճռի ազդեցությամբ ընդունվեց 2000(7) Հանձնարարական լրագրողական աղբյուրների գաղտնիության մասին: Ուստի, թեկուզ իր բնույթով Հանձնարարականը քաղաքական փաստաթուղթ է, սակայն պրակտիկայում դրանցում արտահայտվում են այնպիսի սկզբունքներ, որոնք արդեն կիրառվում են Դատարանում որպես իրավական նորմեր:

ե) Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ՝ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչը հնարավորություն կտար իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, վիճարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ, 11-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորվող արտահայտվելու ազատության, հավաքների և միավորումների ազատության և արդար դատաքննության իրավունքները:

Դիմումատուն այս իր հայտարարությունը հիմնավորելու համար պետք է ապացուցի հետևյալը.

ա. Արդյո՞ք 13-րդ հոդվածը կիրառելի է Մրցույթի դատական գործի նկատմամբ.

Դիմումատունն այս մասուն կարող է պնդել, որ Երևանի քաղաքապետի որոշումները ներպետական դատարաններում բողոքարկելը անարդյունավետ միջոց է, քանի որ մինչ այդ «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձինք երկու անգամ, օրենքով նախատեսված կարգով, բոլոր աստանի դատարաններին բողոքարկել էին կազմակերպության կողմից իրականացվելիք հանրահավաքների և երթերի անցկացումը արգելելու վերաբերյալ քաղաքապետի որոշումները, և բոլոր դեպքերում դատարանների վճիռների և որոշումների արդյունքում ուժի մեջ են թողնվել քաղաքապետի կողմից կայացրած հանրահավաքների և երթերի անցկացումը արգելելու մասին որոշումները: Սակայն, Դիմումատուին անհրաժեշտ է հստակեցնել իր պնդումներն այս հոդվածի մասով, հակառակ դեպքում Պատասխանող մասնակից պետության պնդումները կարող են ավելի համոզիչ լինել Դատարանի համար: Պետք է հիշել, որ Դատարանը որոշումները կայացնում է կոնկրետ փաստերի հիման վրա և երբեք վերացական դատողություններ չի անում, ինչի մասին հայտարարվել է Դատարանի բազմաթիվ վճիռներում:

Հղում կատարելով համապատասխան վճիռներին, օրինակ, Քենան ընդդեմ Սիացյալ Թագավորությունը, Ակդիվարն ընդդեմ Թուրքիայի, Չահալն ընդդեմ Սիացյալ Թագավորությանը, Դիմումատուն կարող է պնդել, որ ներպետական դատական պաշտպանության միջոցներն արդյունավետ են միայն «տեսականորեն», սակայն պրակտիկայում խիստ անարդյունավետ են: Ակդիվարի գործով վճռում Դատարանը նշում է, որ «որպեսզի ներպետական պաշտպանության միջոցները, որոնք հասանելի են դիմումատուին, համարվեն արդյունավետ, դրանք պետք է լինեն մատչելի, բողոքարկելու համար բավարար պայմաններ տրամադրեն, տեսականորեն և պրակտիկայում դրսևորվեն բավարար չափով արդյունավետ»⁸⁸: Պրակտիկայում դրանց անարդյունավետությունը հիմնավորելու համար, Դիմումատուն կարող է հղում կատարել 2003–2004 թվականների ընթացքում տարբեր հասարակական կազմակերպությունների, անհատների և քաղաքական գործիչների կողմից ներպետական դատարաններ բերված բազմաթիվ բողոքներին, որտեղ նրանք վիճարկում էին քաղաքապետի նմանատիպ որոշումները և որոնցից ոչ մեկի դեպքում հայցվորների օգտին որոշումներ չէին կայացվել: Այնուհետև, Դիմումատուն կարող է հղում կատարել ներպետական և միջազգային մի շարք կազմակերպությունների պատրաստած զեկույցներին, հանրահավաքն ու ցույցերն արգելելու վերաբերյալ ներպետական պրակտիկայում տեղի ունեցած բազմաթիվ դեպքերին: Ավելին, կարևոր է անդրադառնալ ԵԽ-ի կողմից ընդունված թիվ 1361 և թիվ 1374 Բանաձևերին, 2004 թվականի մարտ-հունիս ամիսների ընթացքում ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակի կատարած մի շարք հայտարարություններին: Դիմումատուն կարող է ավելի լայնացնել իր պնդումները, ընդգրկելով նաև դատարանների անկախության և անաչառության մասին դատողություններ, սակայն սա բավական մեծ և դժվար թեմա է, և հիմնականում պարունակում է տեսական բնույթի տեղեկություններ:

բ. Եթե 13-րդ հոդվածը կիրառելի է, ա՞նկա է արդյոք այդ իրավունքի խախտում և գ. արդյո՞ք իրավական պաշտպանության միջոցը արդյունավետ է.

Դիմումատուն պետք է պնդի, որ իրավական պաշտպանության միջոցները արդյունավետ չեն ո՛չ գործնականում և ո՛չ էլ օրենքով, մասնավորապես այն առումով, որ դրանց օգտագործումը անհիմն կերպով խոչընդոտում է իր իրավունքների իրականացմանը: Անարդյունավետության մասին իր պնդումները Դիմումատուն կարող է հիմնավորել նաև պնդելով, որ Հանրահավաքների և երթերի մասին օրենքին Հայաստանում ուժի մեջ մտավ միայն 2004թ. մայիսի վերջին և, ուստի, մինչև այդ դատարանների որոշումները հիմնված էին 1997թ. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի վրա, որն օրենք

⁸⁸ St' u Akdivar v Turkey գործով Եվրոպական դատարանի վճիռը (1997) 23 EHRR 142:

համարվել չէր կարող: Գործի փաստերից երևում է, որ վերը նշված երկու բողոքները ներպետական դատարաններին ներկայացվել էր մինչև վերը նշված օրենքն ուժի մեջ մտնելը: Այդ իմաստով, Դիմումատուն կարող է պնդել, որ Դատարաններն ընդունում էին կամայական որոշումներ. օգտագործելով իրենց հայեցողությունը, սակայն դրանք հիմնված չէին որևէ օրենքի վրա: Իսկ »Իրավական ակտերի մասին« ԶԶ օրենքի համաձայն, իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավունքների, իրավունքների սահմանափակումների, պարտականությունների վերաբերյալ նորմեր կարող են սահմանվել միայն օրենքով, և ոչ թե Նախագահի հրամանագրով: Այս իմաստով, անարդյունավետ էր նաև այն իրավական դաշտը, որոնց հիման վրա դատարանները կայացնում էին իրենց որոշումները: Դիմումատուն կարող է հղում կատարել Ղայան ընդդեմ Թուրքիայի գործով վճռի 106 կետին, հիմնավորելով իր կողմից օրենքի »արդյունավետությանը« հղում կատարելը: Ըստ նշված կետի, »13-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ծավալը կախված է Դիմումատուի՝ Կոնվենցիայի հիման վրա բերված գանգառի բնույթից: Այդուհանդերձ, 13-րդ հոդվածին համապատասխան, պահանջվող պաշտպանության միջոցները պետք է լինեն »արդյունավետ« և՛ գործնականում, և՛ օրենքով, մասնավորապես, այն առումով, որ դրանց օգտագործումը չպետք է անհիմն կերպով խոչընդոտեն պատասխանող պետության իշխանությունների գործողությունները կամ, ընդհակառակը, անգործությունը« (տես՝ նաև Աքսոյի գործով Դատարանի վճիռը, կետ 95):

Այս ամենը ի մի բերելով, Դիմումատուն կարող է պնդել, որ որոշումներ ընդունելիս ներպետական դատարանները ղեկավարվում էին ոչ թե օրենքով, այլ հայեցողությամբ. ուստի կայացնում էին կամայական որոշումներ: Այդ իմաստով, իրենք զրկված էին արդյունավետ ներպետական դատական պաշտպանության մեխանիզմներից:

Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ՝ Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ Դիմումատուն ունեցել է ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք և այն կիրառել է առանց պետական մարմինների միջամտության: Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Դիմումատուի այդ իրավունքը, և ներպետական իրավական պաշտպանության միջոցները համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին:

Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմը պետք է վիճարկի, որ Դիմումատուի պնդումներն ըստ էության չեն և որ դրանք ավելի շատ վերացական բնույթ ունեն: Այս իմաստով, Պատասխանող մասնակից պետությունը կարող է պահանջել Դատարանից չընդունել Դիմումատուի փաստարկները 13-րդ հոդվածի հիմքով, քանի որ դա հակասում է Դատարանի պրակտիկային: Սա հիմնավորելու համար նպատակահարմար է հղում կատարել մի շարք վճիռների, որոնցում Դատարանը սահմանել է, որ Դատարանը որոշում կայացնում է կոնկրետ գործի կոնկրետ փաստերով և որ Դատարանը սովորաբար ձեռնպահ է մնում վերացական դատողություններ անելուց: Տվյալ դեպքում, Դիմումատուն փորձում է վիճարկել, որ ԶԶ դատարանները և օրենքները չեն տրամադրում արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն, սակայն արդեն այն փաստը, որ Դիմումատուն հնարավորություն է ունեցել դիմել ներպետական դատարաններ՝ վիճարկելու իր պնդումները, ցույց է տալիս, որ դատական պաշտպանության ընթացակարգային երաշխիքներ ներպետական օրենսդրությունը տրամադրում է: Ավելին, այն փաստը, որ երկու դեպքում էլ դատարանները հայցվորի օգտին որոշումներ չեն կայացրել, ցույց չի տալիս, որ դատական պաշտպանության մեխանիզմները բացակայում են կամ էլ անարդյունավետ են: Պատասխանող մասնակից պետությունը կարող է հիմնավորել այս պնդումը, հղում կատարելով Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորությանը գործով վճռին, որտեղ Դատարանը սահմանեց, որ »Կոնվենցիայի 13 հոդվածը պահանջում է, որ յուրաքանչյուր ոք...իրավական

պաշտպանությունն ստանա ներպետական իշխանությունից, որպեսզի բավարարի իր պահանջը...այս դրույթը, այդուհանդերձ, չի պահանջում, որ արդյունքը լինի ցանկալի«: Այդ կապակցությամբ Պատասխանող մասնակից պետությունը կրկին նշում է, որ սոսկ այն փաստը, որ դիմողի բոլոր պահանջները մերժվել են, ինքնին բավարար չէ որոշելու համար՝ արդյոք վարչաիրավական հարցը «արդյունավետ» էր:

Կարելի է հղում կատարել Ակդիվարի գործով վճռի նույն մեջբերումի վրա, որը կատարել էր Դիմումատուն, և պնդել, որ «պաշտպանության միջոցները» մատչելի են, ինչը ցույց են տալիս գործի փաստերը: Իսկ ինչ վերաբերվում է Դիմումատուի բազմաթիվ հղումներին միջազգային կազմակերպությունների և կառույցների զեկույցներին ներպետական դատարանների պրակտիկայի վերաբերյալ, ապա դրանք չեն կարող հիմք հանդիսանալ այս Դատարանի համար սույն գործով որոշում կայացնելու համար, քանի որ դրանք չեն վերաբերում տվյալ գործի փաստերին. ուստի՝ վերացական պնդումներ են: Իր այս պնդումները Պատասխանողը կարող է հիմնավորել հղում կատարելով, օրինակ, էյմանն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի վճռին⁸⁹: Այս գործով Դատարանը սահմանեց հետևյալը. «Դատարանը կրկնում է, որ անհատական զանգատի հիման վրա հարուցված գործերը քննելիս՝ Դատարանի խնդիրը չէ գործին առնչվող օրենսդրությունը կամ պրակտիկան վերացական կերպով քննելը. Դատարանը պետք է, հնարավորության շրջանակներում, առանց անտեսելու ընդհանուր ենթատեքստը, ուսումնասիրի քննության առարկա գործից բխող հարցերը»: Ուստի, Դատարանի պարտականության մեջ չի մտնում ներպետական օրենսդրությունը կամ պրակտիկան վերացական քննելը: Հաշվի առնելով, որ Դիմումատուի բերած փաստերը ոչ մի ուղիղ կապ չունեն վիճարկվող հարցերի հետ, Պատասխանող մասնակից պետությունը պահանջում է Դատարանից առանց քննության թողնել Դիմումատուի պնդումները 13-րդ հոդվածի վերաբերյալ և արձանագրել, որ 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

⁸⁹ Տե՛ս էյմանն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, 27798/95 (2000):